

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
Organe  
de la F. R. A. D.

# ԴՐՈՇԱԿ

№ 11  
NOVEMBRE  
1932  
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԳԱՆ

## ՍԻՒՐԻԱՆ ԵՒ ՄԵՆՔ

Թշուառականին մէկը, որ իր իսկական անունը յայտնելու քաջութիւնն իսկ չի ունեցել, մի տետրակ է հրատարակել վերջերս — «Սուրիան եւ Մենք» — որով հայ մամուլը այս օրերս շատ է գրադուում, պէտքից աւելի շատ: Ո՞վ է այդ յիմարական գործի հեղինակը, կամ ո՞ւմ կողմից է ներշնչւած նա, ի՞նչ նպատակով է հրատարակ եկած:

Առաջին իսկ պատասխանը, որ գալիս է ընթերցողի դուռիւր—Անդորան է. կամ Թիւրքի ձեռքով է գրւած, կամ Թիւրքական թերադրանքով: Այսպէս է միշտ, երբ հայ ժողովրդի դէմ նիւթուող դաւ է մէտեղ գալիս, Թիւրքի մատը մէջը պէտք է լինի: Եւ միայն անհորձ կամ միամիտ ընթերցողին կարող են խաբել տետրակի ոճն ու զրգութեան ձեւը, որի մէջ յայտնի կերպով ճիշդ է նկատուում ընթերցողի ուշադրութիւնը ուրիշ կողմ ուղղելու. տետրակում քիչ չեն հակաթիւրք արտայայտութիւններ, անվերապահ համակրանքով ջատագովուում է Փրանսայի հոգատարութիւնը Սիւրիայում եւ, առհասարակ, Փրանսական քաղաքականութեան կատարած բարերար ազդեցութիւնը իսլամ ժողովուրդների վրա:

Մեզ համար, սակայն, այս պահուս կարեւորը ոչ տետրակի աղբիւրն է, ոչ նրա հեղինակի անձը, ոչ էլ նոյն իսկ հետապնդած նպատակը: Հեղինակը կարող է լինել Անդորայի վարձկան գործակալ, կամ Փրանսական հոգատարութեան մոլեռանդ երկրպագուներից մէկը, կարող է լինել և ուրիշ մարդ—բոլոր դէպքերում էլ արդիւնքը հայ ժողովրդի համար նոյնն է՝ գրգռում սիւրիացիների մէջ ընդդէմ հայերի:

«Սուրիան եւ Մենք» տետրակի հեղինակը լրբութիւնն ունի խօսելու Հ. Յ. Դաշնակցութեան անունից, որպէս դաշնակցական եւ այն-

պիսի դադափարներ է վերագրում Դաշնակցութեան, որոնք ակնյայտնի կերպով ձգտում են հայ ժողովրդին վարկաբեկել յաչս արաբ ժողովրդի: Այդ սեւ ձեռքը գրում է, թէ հայ ազգը նպատակ է դրել արտասահմանի ցրւած հայութիւնը համախմբել Սիւրիոյ մէջ, որի վրա հայերն ունին պատմական իրաւունքներ: Այդ նպատակով «Դաշնակ կուսակցութիւնը աշխարհի ամէն կողմը նպաստի կազմակերպութիւններ ստեղծեց: Բարեգործական Միութիւնը եւ Պոլոս Նուպար փաշայի մահէն յետոյ, 1930ին անոր տեղը անցնող արդի նախագահը՝ յարգելի միլիոնատէր Գալուստ Կիւլպէնկեանն ալ մեծ ծառայութիւններ մատուցած են»: Ազգերի Դաշնակցութիւնն էլ աջակցել է: Այդ ամենը նրա համար, որ հայերը Սիւրիայում հաստատուեն «ոչ թէ հիւրի մը պէս, այլ տան տէրը սնուցանող եւ հարստացնող տարրի մը պէս»: «Լիբանանի մէջ մարոնիներուն եւ օրթոտոքս յոյներուն հետ մեր կազմելիք խմբակը կարեւոր մտահոգութիւն մը կրնայ ըլլալ իսլամ արարներուն համար»:

Տեղաւորելով Սիւրիայում, «ամենէն աւելի հաւաքելով Սիւրիոյ հիւսիսակողմը և հին հայ կայսրներու տիրապետած շրջաններուն մէջ», ապաւինելով «մեր մեծ պաշտպան Փրանսային», ըստ էութեան, հայերը չեն ուզում զոհանալ միայն քնակութեան, սիւրիական քաղաքացու իրաւունքով, այլեւ ձգտում են դառնալ ինքնուրոյն քաղաքական գործօն Սիւրիայում: «Այո՛, յարգելի սուրիացի հայրենակիցներ, եզրակացնում է տետրակը, Փրանսացիները ձեր դիլսուն վերեւ եւ հայերը ձեր թեւը մտնելով՝ ձեզ բարձրացնող երկու ուժերը եղած են... Եթէ կայ միակ ուժ մը, որ Սուրիոյ մէջ պիտի կարենայ դիւրաւ քաղաքակրթել իսլամ արարները, ատիկա հայը կրնայ ըլլալ»:

Կարիք կա՞յ սանու, թէ այս մտքերը որքան անհամապատասխան են իրականութեան: Պէտք կա՞յ դուշակելու, թէ ազգայնական մոլեռանդութեամբ բորբոքած միջավայրում ի՞նչ գրգռում կարող են առաջ բերել հրճուկ պրովոկատորի ճարպիկ ձեռքով նետած այս սաղարանքները:

Բնականաբար, ոչ թէ տետրակի հեղինակի հետ բանավիճելու, այլ իրերի ճշմարիտ կացութիւնը պարզած լինելու համար մենք օգտուում ենք առիթից՝ արտայայտելու համար մեր տեսակէտը խնդրոյ առարկայի հարցի մասին: Եւ շատ կը փափաքէինք, որ մեր այս խօսքը, որ խօսքն է հայ ժողովրդի մեծամասնութեան կամքի թարգման հանդիսացող կուսակցութեան, հասնէր նաեւ արաբ ժողովրդի ներկայացուցիչներին եւ յստիկալէս սիրիական հայրենասէրների սկանչին, որովհետեւ միայն կացութեան յստակ ըմբռնումով ու փոխադարձ հասկացողութեամբ կարելի է փարատել շատ սխալներ եւ առաջն առնել շատ շարիքներ:

Իրօք հայ ժողովուրդը առանձնապատուկ քաղաքական նպատակներ է հետապնդում Սիրիայում: Իսկապէ՞ս, հայերը Սիրիոյ հոգատարութեան ջատագույններ են հակառակ սիրիական ժողովրդի կամքի: Ճի՞շտ է, որ իսլամ արաբ տարրը քաղաքակրթելու շահերու թիւններ են տածում Սիրիայում հիւրընկալութիւն դրած հայ տարադիր զանգաձնները:

Այս հարցերի պատասխանը պարզ է եւ անվիճելի ամէն հայի համար, ինչ քաղաքական դաւանանքի էլ պատկանելոյ լինի: Մեր կեանքին ծանօթ ամէն մէկ անհատին յայտնի է, որ հայ ժողովուրդը ազգովին միայն մէկ հատիկ քաղաքական իրէլա ունի այսօր եւ այդ՝ Հայաստանի ազատութիւնն է քէմալական ու բոլշևիկ լծից եւ Անկախ ու Միացեալ Հայաստանի ստեղծումը — Անկախ եւ Միացեալ Հայաստան նախկին Ռուսահայաստանի եւ նախկին Թիւրքահայաստանի (Արեւելեան վերլայէթների) սահմաններում: Քաղաքական այս իրէլայը հիմնադրուած է ոչ միայն պատմական կամ ազգասիրական նկատումներով, այլ նախ եւ առաջ եւ ամենից անելի միջավայրի առարկայական թելադրանքով եւ մեր ազգի ենթակայական գիտակցութեամբ: Հայ ժողովրդի Ֆիզիքական ուժերը հազիւ բաւական են ունի իսկ Հայաստանի պետական կեանքի ամբապնդման համար: Այդ փաստը հաստատուած է կեանքի փորձով եւ նւիրագործուած միջազգային ակտներով: Սերի դաշնագիրը, ինչպէս եւ նախապէս Ուիլսոնի իրաւարարութիւնը Հայաստանի սահմանադրման խնդրում այդ են հաստատուած: Եւ անցեալի դէպքերն ու դառն հիասթափութիւնները միանգամայն բաւական են, որպէսզի հայ ժողովուրդի մէջ այսօր չգտնուի եւ ոչ մէկ մարդ, որ հաւատայ ծովից ծով Հայաստանի հնարաւորութեան եւ արդարացնէ

նման ծրագրեր: Այս ազգային իրէլայից դուրս հայ ժողովուրդը քաղաքական նպատակներ չունի եւ, հետեւաբար, աչք չունի եւ Սիրիոյ որեւէ մասի մէկ թիզ հողի վրա իսկ: Հակառակը պնդել նշանակում է խեղաթիւրել իրականութիւնը, կամ հետապնդել հակահայ չար մտքեր:

Իսկ ի՞նչ ձգտումներ ունի հապա հայ ժողովուրդը Սիրիայում, ինչո՞ւ է տեղաւորւած այնտեղ:

Նախ՝ պէտք է հերքել այն սուտ լուրը, թէ կայ ինչ որ աշխատանք արտասահմանի հայութիւնը հաւաքելու Սիրիայում: Այդպիսի աշխատանք կամ ծրագրի գոյութիւն ունի միայն հայ ժողովրդի թշնամիների երեւակայութեան մէջ: Եղածը այն է, որ հակաառողջապահական տաղաւարներում խոնամ գաղթականութիւնը տեղաւորւած է գիւղերի եւ թաղերի մէջ: Ուրիշ ոչի՛նչ:

Եւ տեղաւորելով գիւղերում ու քաղաքներում, Սիրիայում էլ, ինչպէս եւ Իրաքում, Պարսկաստանում, Եդիպոստում, Բալիանեան երկրներում կամ այլուր հայ ժողովուրդը ուրոյն քաղաքական նպատակներ չունի եւ, որպէս քաղաքացի, ծառայում է իր բնական երկրի ընդհանուր շահերին: Ինչպէս Սիրիայում, այնպէս եւ տարագրութեան ուրիշ վայրերում, հայ ժողովուրդը մտնւմ է ոչ իր կամքով, այլ հարկադրաբար, որովհետեւ Հայաստանի դռները փակւած են իր առջեւ: Եւ քաղաքական փոթորիկները ուժով Սիրիա բերւած հայութիւնը երախտագիտութիւնից դատ ուրիշ զգացմունք չունի դէպի հիւրընկալ արաբ ժողովուրդը, որ մարդկային ազնուութիւնը, քաղաքական լայնատեսութիւնն ու հեռատեսութիւնը ունեցաւ տեղ տալու իր ծոցում դեռ երէկ իրեն բախտակից, կեանքի աղէտաւոր փոթորիկներից հարածուած, մեծ պետութիւնների ընդաքաղցուցեան եւ եսասիրութեան զոհ դարձած հայկական բեկորներին: Փոխարէնը հայ ժողովուրդը միայն մէկ հաստուցում ունի — անվերապահ, անկեղծութեամբ ու եռանդով նւիրել շինարար աշխատանքի:

Այս փաստով իսկ հերքուած է եւ այն չար վերադրումը, որպէս թէ հայ ժողովուրդը յատուկ վերաբերում ունի դէպի հողատար ուժերը եւ ձգտում է դեր կատարել երկրի բնիկ ժողովուրդների եւ հոգատար պետութեան միջև՝ բռնելով վերջինիս կողմը հակառակ բնիկ ժողովրդի: Ասում ենք՝ չար, որովհետեւ հայ ժողովուրդը զանգաձորէն չունի եւ չի կարող սնուցանել այդ կարգի նպատակներ: Իրսի եւ ներսի ուժերի փոխյարաբերութեան, ինչպէս եւ ներսի բախումների մէջ, հայ ժողովուրդը կողմ չէ, երկրի ընդհանուր շահերից տարբեր շահեր չունի ու չի կարող ունենալ: Բայց եթէ այնուամենայնիւ պատահում են հայեր, որ

ծառայում են հոգատար պետութեան մօտ, չէ՞ որ նման տարրեր աւելի մեծ տողութիւնով կան եւ երկրի բնիկները մէջ. մի՞թէ կարելի է նրանց ընթացքով բացատրել ամբողջ ժողովրդի դիրքը: Կամ, եթէ հայերի մէջ գտնուում են վարձկան կամ գաղափարական մոլեռանդութիւնից արեցած անհատներ, որոնք շահագործուում են համայնափար քարոզչութեան համար, աւելի խոշոր համեմատութեամբ նման անհատներ կան բնիկ ժողովուրդներին մօտ. մի՞թէ արդարութիւն է այդ շնչին թիւ եւ արհամարհելի ոյժ կազմող անհատներով բնորոշել ամբողջ ժողովուրդը: Դարերի պատմութիւնը Պարսկաստանում, Եգիպտոսում, Բալիանեան երկրներում անհերքելի փաստերով ապացուցել է, որ հայ զանգուածները ուր եւ բնակւած լինին, հաւատարմօրէն աշխատել են այդ երկրներին բարեկեցութեան ու յառաջդիմութեան եւ քաղաքական ու տնտեսական բարգաւաճմանի նպաստ: Նոյնն է եւ այսօրայ այդ նոր տարաբնուութեան պարագին Սիւրբայում, Իրաքում և այլուր:

Անհեթեթութիւն է նմանապէս հայերին վերագրել ինչ որ բացառիկ առաքելական դեր Սիւրբայում: Հայ ժողովրդի ուժերն ու կարելիութիւնը շատ են համեստ եւ հազիւ բաւական սեփական կարիքները գոհացնելու: Առնւազն ծիծաղելի է «խլամ արարները քաղաքակրթելու» եւ նման երեւակայական յաւակնութիւններին խօսքը: Մնաց որ արաբ ժողովուրդը պէտք էլ չունի արտաքին քաղաքակրթիչներին: Այսօր կոյրերին անգամ տեսնելի է ազգային-քաղաքական վերածնութեան այն բուռն թափը, որով բռնած են արաբ ժողովրդի բոլոր հատուածները, ա՛յն գերմարդկային հզօր ճիգը, որով արաբ ժողովուրդները ամբապնդում են

իրենց պետական եւ քաղաքակրթական գոյութեան հիմքերը: Եթէ քաղաքակրթել, դասեր առնել պէտք է՝ հայերս պէտք է առնենք արաբ ժողովրդից: Արաբական ժողովուրդների ազդեցին գործօնքը, յամառ եւ յարատեւ պայքարը թիւրք բուսպետութեան դէմ եւ պատմութիւնը թիւրքական լծից, արաբ ցեղերի եւ տարրեր երկինքների տակ ապրող հատուածների միութեան համար թափած ջանքերը եւ այսօրայ պայքարը կատարեալ անկախութեան համար, այնպէ՛ս հարուստ են յուզումնալից դրուագներով, այնքան խրատական են, որ մենք պէ՛տք է օրինակ առնենք նրանցից, ներշնչւենք ու մեր նոր սերունդները ոգևորենք այդ օրինակներով:

Մի կողմ թողած ամէն նկատում՝ Հէնց միայն այսօրայ իրականութիւնը, բաւական է համոզելու համար ամենքին, որ հայ ժողովուրդը ո՛չ միայն թշնամի չէ Սիւրբայ արաբ ժողովրդին, այլ եւ հազար ու մէկ կենդանի շահերով հետաքրքրւած է, որ այդ ժողովուրդը լինի ազատ եւ զօրաւոր: Սիւրբայ, Իրաքի, Պարսկաստանի անկախութեան եւ հզօրութեան մէջ ե՛ւ այսօր, ե՛ւ վաղը միայն օգուտ . կայ հային ու Հայաստանին: Եւ այդ է այնպէ՛ս վախ ու սարսափ պատճառում ազատութեան ձգտող ժողովուրդների պատմական գերեզմանափոր թիւրքեային: Այդ է որ ստիպում է թիւրքերին ներելի եւ աննրելի բոլոր միջոցներով վարկաբեկել «հայ ժողովուրդը յաշտ արաբական աշխարհի»: Մենք ուզում ենք հաւատալ, սակայն, որ արաբ ժողովուրդը եւ, մասնաւանդ, նրա յուսամիտ եւ անշահախնդիր դեկավարները հեշտութեամբ կը հասկանան նիւթուղ դաւերի թաքուն իմաստը եւ զո՛հ չեն գնայ Անգորայից բխող հրէշաւոր դաւերին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

I

### ՉԵՉԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

«Իրօշակ» ընթերցողներն արդէն տեսան մեր նախորդ յօդուածից<sup>\*)</sup>, թէ տնտեսական խնդիրներում ինչ կարգի հաւասարութիւն է տիրում Անգրիովկասում, բոլշեիկների իշխանութեան տակ եւ թէ ինչպիսի մեկուսացման ու գրկանքի է ենթարկւում Հայաստանը, մանաւանդ, վրացի կոմունիստներին հետապնդած նեղ-ազգայնական քաղաքականութեան շնորհիւ: Եարուանկենք մեր պրպատմները և տնտեսական ուրիշ բնագաւառներում: Այս տեսակէտից առանձնապէս խրատական է չեչաքարի (պէճագ) գործարարնի պատմութիւնը:

Չեչաքարի տեքիկ-արդիւնաբերական բարձր յատկութիւնները ծանօթ են ընթերցողներին — ընտիր տեսակի ապակեղէն, ելեկտրական արդիւնաբերութեան մասեր, գեղագործական ամաններ, մետաղաշակման անհրաժեշտ նիւթ եւ այլն: Բայց այդքանով չէ սահմանափակում նրա տնտեսական արժէքը. չեչաքարը նաեւ հիանալի շինանիւթ է: Եւ որպէս այդպիսին, նա ներկայացնում է մի շարք անվիճելի, գիտական ու գործնական տեսանկրով հաստատուած արժանիքներ: Չեչաքարը 4-5 անգամ աւելի թեթեւ է տաղից, թափանցիկ չէ ջերմութեան և յոյսի համար եւ առնւազն երկու անգամ արագացնում է շինարարութիւնը: Պորճրային Միութիւնը այս տարի 2 միլիոն խորանարդ մետրի պահանջ ունի, իսկ Հայաստանում յայտնագործած չեչաքարը հաւոււմ է 300 միլիոն խորանարդ մետր:

Անդրկովկասեան Շինարարական Գիտական Ինստի-

\*) «Իրօշակ», 1932թ. օգոստոս:

տուտի ղեկավար պրոֆ. Կ. Չաբեանի ուսումնասիրության այնատեսներին շնորհիւ այժմ արդէն յայտնի է, որ չեչաքարի փոշին, եթէ 20-25%ով խառնելի ցեմենտի հետ, լիովին փոխարինում է զուտ ցեմենտը, առանց մաքայի իսկ թուլացնելու վերջինիս դիմացկունութիւնը և զգալի չափով կրճատելով նրա դրամական արժէքը: Այս պատճառով միութենական Ժողովուրդը յարուսէ հրամանագրով պարտաւորեցրել է Սորհրդային Միութեան ցեմենտի բոլոր գործարաններին՝ չեչաքարի 25% փոշի աւելացնել արտադրած ցեմենտի վրա: Որով, Հայաստանի չեչաքարը ստանձն է համամիութենական նշանակութիւն, իրրև խորհրդային շինարարութեան կարևորագոյն գործոններից մէկը: Եթէ չ նկատի առնենք ողջ Միութեան սահմաններում արտադրող ցեմենտի հոկայ քանակը, պարզ կը լինի թէ ի՞նչ պատկանելի զուգար կը կապմէ 25%ը, որ պիտի փոխարինել չեչաքարի փոշիով: Հասկանալի կը լինի և մեր երկրի օգուտը, եթէ չ նկատի ունենանք, որ Սորհրդ. Միութեան սահմաններում չեչաքարի եթէ ոչ միակ, գլխաւոր կենտրոնը Հայաստանն է:

Հայաստանի չեչաքարը զրաւել է ամերիկացիներին և գերմանացիներին ուշադրութիւնը:

Վերջին տարիներս Գերմանիայում լայն տարածում է ստացել չեչքերի կառուցումը, այսպէս կոչւած, «Չերմարեռոնից», որի հիմնական բաղադրիչ մասը չեչաքարն է: Յայտնի է, որ չեչաքարի մէջ կան օդային զնդիկներ, որի հետևանքով բետոնից շինած պատերը շատ եթթել են և միաժամանակ թոյլ չեն տալիս, որ արտաքին մթնոլորտը թափանցի չեչքից ներս: Որով, բետոնից կառուցած բնակարանները լինում են դիմացկուն և տաք: Գերմանական մի ընկերութիւն, որ Գերմանիայում առել է չեչաքարի բետոնի մենշտրը և ջերմաբետոն սնունն է տւել այդ ներթիւն, իմանալով, որ Հայաստանում չեչաքարի անապառ պաշար կայ, խորհրդային մարմինների հետ միասին կազմակերպել է բաժնետիրական խառն մի ընկերութիւն և այժմ Սորհրդային Միութեան սահմաններում չեչքեր է շինում չեչաքարի բետոնից: Սորհրդային Միութեան ամենագիմացկուն և աժան չեչքերը այդ ներթից են շինում, ինչպէս, օրինակ, Ինսպրուարիցի հիմնական կառուցումները:

Այս է պատճառը, որ չեչաքարի պահանջը աւելի է աւելի աճում է Սորհրդ. Միութեան բոլոր կողմերում: Ամէն օր դէպի հրախ են արժեքում չեչաքարի կտորներով բեռնաւորած դնացներ, որոնք Հայաստանի քար փոխադրում են ցեմենտի գործարաններ՝ փոխացնելու և ցեմենտի հետ խառնելու համար: Անհայել գրում է վատնում այդ փոխադրութիւնների վրա, մինչդեռ եթէ քարը մշակելը հանքավայրում կամ մօտիկ տեղում, ահազին խնայողութիւն կը ստացւէ:

Հասկանալի է, որ այս փաստը չէր կարող վերպել Հայաստանի անտեսական մարմինների ուշադրութիւնից: Արողջ Սորհրդ. Միութեան սահմանում դեռ գոյութիւն չունի քառուկ գործարան չեչաքարի փոշի և չեչաքարի ցեմենտ պատրաստելու համար: Չեչաքարի գործարանը տնտեսական անհրաժեշտութիւն է, և քնական է, որ Հայաստանի անտեսավարները հարց յարուցանեն, որպէսզի այդ գործարանը հիմնել չեչաքարի արդիւրի կողքին՝ Հայաստանում: Հետևանքը՝ Հետեւանքը աւելի լաւ չեղաւ, քան չեչաքարի գործարանի հարցում: Ես յի ուժերը բախցնել իրար, և այս անգամ, միևնոյն ձևերով և ուժգնութեամբ և բոլորովին նման արդիւնքով:

Յեմենտի գործարանի խնդիրը Անդրկովկասեան Շինկոմի առաջարկութեամբ քննելու համապատասխան մարմինների կողմից: Հայաստանի ներկայացուցիչները պահանջ դրին, որ գործարանը շինել չեչաքարի գլխաւոր վայրերից մէկում և կամ Լեռնակիւտում, որ գտնւում է մինչև այժմ յայտնագործւած չեչաքարի արդիւրների կենտրոնում: Սակայն, այս միանգամայն

տրամաբանական և տնտեսական տեսակէտից անդիմելի առաւելութիւններ ներկայացնող առաջարկը հանդիպեց վրացի կոմունիստների բուռն դիմադրութեան: Շինկոմի անդրկովկասեան խորհրդակցութեան մէջ վրացիները պահանջեցին, որ չեչաքարի գործարանը շինել թիֆլիսում: Ի՞նչ որ գործարանը չինող պէտք է լինի Անդրկովկասեան և ոչ Հայաստանի կառավարութիւնը: Ի՞նչ որ Անդրկովկասի նկատմամբ թիֆլիսն է, իսկ Լեռնակիւտը տեղական կենսակութիւն ունի: Անդրկովկասի գործարանը պէտք է շինել Անդրկովկասի կենտրոնում: Եւ Հայաստանի կոմունիստները այս խնդրում էլ պարտեցին: Հայ և վրացի ինժեներների կատաղի պայքարից յետոյ, որոշեց՝ գլխաւոր գործարանը հիմնել թիֆլիսում միութենական չափանիշով, իսկ Երևանում շինել մի փոքր գործարան՝ տեղական կարիքներ համար: Թիֆլիսի գործարանը արդէն շինւում է, գերմանական զաղթիւստի դատ, երկաթուղու գծի կողքին, իսկ Երևանին... Հերթի է դրւած:

Ուրեմն, Հայաստանի չեչաքարն էլ Հայաստանից պէտք է փոխադրել թիֆլիս, որպէսզի այնտեղ վերամշակել, ինչպէս այժմ հինգերկը տարւում է Գորի: Անգամ Վրաստանի վերաբերմամբ Հայաստանը զաղութի է վերածւել, հայ բուլշեփիների տիրապետութեան տակ:

Աւելորդ չի լինի, թերևս, երկու խօսք էլ մտնել չեչաքարի արտադրութեան այժմայ վիճակի մասին: Հայպեմգան, որ Անիի չեչաքարի գլխաւոր կենտրոնն է, գտնւում է Անի կայաքարին 6-7 կիլոմետր հեռու: Հանքերում աշխատում է մի քանի հարեր բանու: Այխատանքը կատարում է բաժնի և քրուեղով. ո՛չ մի տեխնիկական կառարելագործում: Արտադրած չեչաքարը լցնում են տուրքների մէջ և ձեռքով բեռնում վազոններ: Այսպէս կոչւած «մեխանիկացիան» դեռ ապագայի խնդիր է: Հայպեմգանի մասին շատ են խօսում ու գրում, բայց լուրջ կերպով նրանով զբաղուղ չկայ: Անշուշտ, վերաբերումը հիմնովին կը փոխել երբ գործարանը թիֆլիսում շինւած պատրաս կը լինի\*):

II

ԳՈՒՆԱԻՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Բայց ամենէն աղաղակողը գունաւոր մետաղների պարզան է:

Ուրալից յետոյ, Սորհրդ. Միութեան սահմաններում, Հայաստանի և գունաւոր մետաղների ամենահարուստ երկիրը: Հայաստանի պղինձը կարևոր տեղ է գրաւում խորհրդային տնտեսութեան մէջ և հէնց պլանի հարցում ամենացարտուն կերպով երևան է պալիս Հայաստանի «զաղութային» վիճակը: Մինչև այժմ Չաղիեղուրի և Ալլանկերդի ամբողջ պղինձը արտահանւում է Խուսաստան, Խուսաստանում մշակում, և առաւելագույն Խուսաստանի կարիքներին է ձառայում: Հայաստանի տնտեսական ղեկավարների թափած բոլոր ջանքերը Հայաստանում գտնէ մէկ հատիկ պղինձ մշակող, հում պղինձից շինարարական ներք պատրաստող գործարան հիմնելու՝ է դերև են անցել: Մոսկուան թոյլ չի տալիս:

«Ջարեան Վաստողայ»-ի էջերում անցնալ տարի լոյս

\*) Մեր աշխատակցի գրածը հաստատւում է և թիֆլիսի «Ջարեան Վաստողայ» պաշտօնաթերթի հազարում տեղեկութիւնները: «Այս տարի, ասում է թերթը, Անդրկովկասի երկաթուղին չեչաքարի փոխադրութեան համար տրամադրել է երկու անգամ աւելի քիչ վագոն, քան անցնալ տարի: Միայն առաջին, երկարը և մասամբ երրորդ երաստակի ընթացում Անի պակաս տրւած է 4,796 վագոն: (9 սեպտ):» ՍԽԲ.

տեսաւ մի յօղւած, որով անջարկում էր գունաւոր մետաղների մշակութեան համար գործարան հիմնել Ղարաքիլիսայում, իբրև ամենայնպէս վայրում՝ թէ նախանթի, թէ շարժիչ ուժի ու վառելիքի և թէ հաղորդակութեան միջոցների տեսակէտից: Նոր ծրարով ամբողջ Անդրկովկասի պղնձահանքի գտումը կենտրոնացած է Ալլազիւթըրիում: Չանպէտուրի պղնձաքարն էլ պէտք է փոխադրել Ալլազիւթըրի և այնտեղ գուռի: Նմանապէս և միւս վայրերի հանքաքարը: Որով, Կարաքիլիսայի շրջանը, որ հարուստ է երկտրական ածան ուժով և հեռու է Ալլազիւթըրից, հրաշալի կլիմա ունի և ընկած է երկաթուղու վրա, խիստ յարմար վայր է գործարանի համար: Բայց նման մի առաջարկութիւն չէր կարող հաշտ աչքով հիտուել Թիֆլիսում: Վրացի կոմունիստները չէին կարող թոյլ տայ, որ միութենական նշանակութիւն ունեցող մի գործ կենտրոնացել Հայաստանում: Եւ ահա նոյն «Մարեա Կաստիլայում» լոյս տեսաւ մի ուրիշ յօղւած, որ պահանջում էր գունաւոր մետաղների գործարանը հիմնել Թիֆլիսում, իբրև Անդրկովկասի կենտրոնում:

Եթէ ճնշելու լինենք այս առաջարկութեան ներքին իմաստը, պարզ կը լինի, որ վրացի շովինիստների տեսակէտով, առհասարակ, Թիֆլիսից դուրս, Անդրկովկասում, ո՛չ էլ խոշոր, ընդհանուր բնոյթ կրող շինարարութիւն չպէտք է լինի: Այդ տրամաբանութեամբ Բազումի նաւթի մշակութիւնն էլ պէտք է կենտրոնացնել Թիֆլիսում: Ազրբէյջանի ու Հայաստանի բարակին էլ պէտք է հաւասարել Թիֆլիս: չէ՞ որ Թիֆլիսը Անդրկովկասի կենտրոնն է: Բայց արի տես, որ վրացի կոմունիստները բոլորովին մտռունդում են; որ Թիֆլիսը Անդրկովկասի կենտրոնն է, երբ հարց է դրոււմ գործարան կամ ստեռնական ուրիշ որեւէ ձեռնարկութիւն հաստատումը, օրինակի համար, Գուրխիսում, Գուրխում, կամ Վրաստանի մի այլ վայրում: Թիֆլիսի Անդրկովկասի կենտրոն լինելը մտաբերուում է միայն այն ժամանակ, երբ հարցը վերաբերում է Վրաստանից դուրս ուրիշ մի երկրի, բայց, մանաւանդ, Հայաստանի գործերին: Գանի խոշոր ձեռնարկութիւններ վրացի կոմունիստները կենտրոնացրել են Վրաստանում միայն չահագործելով Թիֆլիսի Անդրկովկասի մայրաքաղաք լինելու դիտար, և հայ կոմունիստները չեն համարձակւել ձայն ու քայտուռ հանել՝ վախենալով ընկնել «ազգային թեթումի» կասկածի տակ...

Գունաւոր մետաղների գործարանի վայրի խնդիրը վերնականապէս վճռւած չէ: Տեսնենք՝ Երևանի կոմունիստները կը կարողանան անցկացնել իրենց մարքսիստական տեսակէտը, թէ՛ այս անգամ էլ ցոյց կը տան, թէ ճշմ եւ միայն Հայաստանում և մարքսիստական գաղափարութիւն ընդունակ են անել միայն հայ իրաւագործի և անպաշտպան դիւղացիութեան գլխին:

Գունաւոր մետաղների գործարանը հիմնել Թիֆլիսում՝ նշանակում է Հայաստանի պղնձն էլ ենթարկել կրկնակի «գաղութային» միճակի, ինչպէս արդէն ենթարկւած են չեչաքարը, շաքարը ևն\*): Բաւական չէ՞ Ռուսաստանը, հարկաւոր է որ վրացիներն է՛լ շահագործեն Հայաստանը: Մի՞թէ այս են պարտադրոււմ Լենինի աւանդները...

III

ՄԱՀՈՒԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Մահուդի արկղաբերութեան հիմքը կազմում է բուրգը: Անդրկովկասում ոչխարաբուծութիւնը զարգացած է դիսաւորապէս հարաւում և հիւսիս-արեւելքում: Արևմտեան Անդրկովկասը, Սուրամից սկսած մինչև Սե ծով, այսինքն՝ Վրաստանի մեծ մասը, ինչպէս նաև Կասպից ծովեզրերի Լենքորանի շրջանը ոչխարաբուծութիւն չունին: Որով, ուրեմն, ոչխարաբուծութեան զլխաւոր վայրերն են ամբողջ Հայաստանը, արևելեան Վրաստանը և Ազրբէյջանը, առանց հարաւային մասի: Եթէ Անդրկովկասի քարտէսի վրա նայելու լինենք, կը տեսնենք, որ ոչխարաբուծութեան կենտրոնն է Հայաստանը յարակից շրջաններով: Անդրկովկասի ոչխարաբուծութեան հիմքն են Հայաստանի արտադրարները: Ոչխարներն Անդրկովկասում տարեկան երկու անգամ են խուզում, մէկ անգամ տանը, միւս անգամ՝ արտադրարներում: Այդ պատճառով բրդի մեծ մասը ստացւում է Հայաստանում: Այսուհետեւ, թոււմ է թէ շատ պարզ է, որ մահուդի գործարանն էլ պէտք է չինէր Հայաստանում: Բայց մինչև այժմ բոլշևիկներն Անդրկովկասում մահուդի երեք գործարան են շինել և ոչ մէկը Հայաստանում:

Այդ երեք գործարանների պատմութիւնը վերին աստիճանի խրատական է: Մահուդի առաջին գործարանը շինւեց ոչ թէ ոչխարաբուծութեան, այլ արևմտեան Վրաստանի կենտրոնում՝ Գուրխիսում, ոչխարաբուծական բոլոր վայրերից հեռու: Ամբողջ Արևմտեան Վրաստանը, Գուրխիսում հանդերձ, իբրև խոնար կլիմայ ունեցող երկիր, խոզարուծական շրջան է և ոչխար չունի և չի կարող ունենալ: Բայց և այնպէս մահուդի առաջին գործարանը շինւեց այնտեղ:

Երկրորդ և անէլի մեծ գործարանը, 10 միլիոն բուրի բաժողութեամբ, շինւեց Թիֆլիսում: Վրացի կոմունիստներն այս գործարանը ստալ ճաշեցին այն հաշուով, որ Անդրկովկասի ամբողջ բուրգն այստեղ բերել մշակելու: Այս գործարանի շինելուց յետոյ, երբ Բազումի կոմունիստ թուրքերը չէին ընկան, որ Ազրբէյջանի բուրգն էլ պէտք է ստրել Վրաստան, ամենքը մէկ մարդու պէս մերժեցին ենթարկւել այդ պահանջին և դիմեցին Մոսկուա՝ պնդելով, որ Ազրբէյջանում էլ հիմախ մահուդի գործարան: Պահանջն այնքան վճռական էր, որ Մոսկուան ստիպւած եղաւ տեղի տալ, և ահա հարաւային կարգով մի գործարան էլ շինւեց Գանձակում, որ մահուդեղէնի է վերածոււմ Ազրբէյջանի բուրգը: Թիֆլիսի գործարանին մնաց Հայաստանի բուրգը: Հայ կոմունիստները ձայն-ձայտուն չհանեցին: Ի՞նչ կայ որ թո՛ղ շլիկ երևանում, թո՛ղ լինի Թիֆլիսում, միևնոյնը չէ՞:

Ակամայ հարց է ստալ գալիս. ո՞ւր մնաց հայա լենինիզմի հիմնական սկզբունքը՝ գործարանները հիմնել հում նիւթի կենտրոններում: Լենինի ո՞ր գրքում է ստաժ, որ Հայաստանի բամբակն ու պղինձը պէտք է տարւի Ռուսաստանի գործարանները, իսկ ճակողն ու չեչաքարը՝ Վրաստան...

IV

ԳՆԱԿԵՍԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Դաշեքանը անունն է Գանձակի շրջանի լեռների, որոնց մէջ կայ երկաթահանք: Այդ հանքի գոյութիւնը յայտնի էր դեռ ցարական օրերին: Խորհրդային շրջանում կառարարած հետազոտութիւնները ցոյց տարին, որ երկաթահանքի ջանալը խիստ մեծ է: Տեղի ունեցած մի շարք տեխնիկական-տնտեսական խորհրդակցութիւնները հրապարակելու էրին Անդրկովկասում մետաղա-

\*) Անդրոյն է, որ Հայաստանի կոմունիստները վերջերս մեծ ճիգով հազիւ կարողացան Մոսկուայից յրւ:առճ ստանալ, որ Հայաստանի պղնձից 60 տոննա յատկացի ցեմենտի գործարանի կարիքներին, պայմանով սակայն, որ այդ պղնձը բնդահանք «այլանի» մէջ չլուծի և արտադրւի Հայաստանի բամբակների բացարձակ աշխատանքով: Պէտք է կարդալ «Խորհրդային Հայաստան»ի էջերում, թէ հայ կոմունիստները ի՞նչ ցեմենտեան մէջ են այդ «այլանի» առքիւ: ԽՄԲ.

գործական կոմբինատ չինելու ծրագիրը՝ հիմք ունենալով Դաշքեսանի հանքերը: Կոմբինատի գործարանները պէտք է արտադրեն երկաթ, խողովակներ, գնահատան երկաթեղէն, երկաթուղու գծեր, թուջ ու թուջեղէն, թնդանօթներ, հրետանու սազմամթերք, երկաթուղու մագոններ, մի խօսքով, այն ամենը որ կարելի է պատրաստել երկաթից: Դաշքեսանի ողջ շինարարութիւնը — գործարաններ, բնակարաններ, քաղաքային ու մշակութային հիմնարկութիւններ և այլն — նստելու է 300 միլիոն ոսկի բուրձի կամ 150 միլիոն դոլար: Կոմբինատի շուրջ կազմակերու է 3-400 հազար բնակչութիւն ունեցող մի քաղաք:

Պէտք էր տեսնել վրացի կոմունիստներին իրարանցումը, երբ այս հսկայ հետնկարները յայտնի դարձան: Նրանք չէին կարող հասնուել այն մտքի հետ, որ նման մի հաստատութիւն պէտք է կենտրոնանայ Ազրբեջանում և ոչ Վրաստանում: Վարպետրի յետևը խաղաղամաճ մի շարք դաշակողական խողիւրից յետոյ, Վրաստանի Ժողովուրդի նախագահ էրիվանայ մի մեծ, կէս էջոց յօլանովով «Ջարես Վաստով» թերթում պահանջ դրեց, որ մետաղագործական կոմբինատի վայրը բնորի Արեւմտեան Վրաստանում...

Երբեք և ոչ մի տեղ լաւած բան չէ, որ երկաթի հանքը 400 կիլոմետր հեռաւորութիւնից փոխադրեն ձուլելու համար: Ոչ մի անտեսութիւն, լինի բուրձուական թէ կոմունիստական, չի կարող դիմանալ այդքան վերագրի ծախսի: Նոյն թերթի էջերում մասնագէտ ինժեներները, փաստորով ու թւերով ցոյց տւին էլիավայի ծրագրի անհեթեթութիւնը և կոմբինատը Դաշքեսանում հիմնելու անհրաժեշտութիւնը: Բայց էլիավայան տեղի չուեց: Ինչո՞ւ Հայաստանի պղինձն ու չեչաքարը կարելի է հարիւրաւոր ու հազարաւոր կիրմետրներով տեղափոխել ձուլելու համար, իսկ Դաշքեսանի երկաթահանքը չի կարելի: Բայց Վրաստանի Ժողովուրդի նախագահը մոռացաւ, որ իր գործը այս անգամ Հայաստանի կոմունիստներին հետ չէր: Թուրք կոմունիստները կատարած նրա վրան բաց կողմնակարծութիւնից՝ բոլոր կերպով չափառակեցին կոմբինատը Վրաստանում չինելու քաղաքական: Ազրբեջանի կենտրոն գործկոմի քարտուղար Համիդ Սուլթանովը նոյն «Ջարես Վաստով»-ում նոյնքան մեծ յօլանովով ջարդ ու փշուր արաւ էլիավայի սոփեստութիւնները: Բայց իր հերթին, ինքն էլ ստալինոբոց մի ուրիշ անհեթեթութիւն: փոխտակ պաշտպանելու, որ մետաղագործարանը չինի Դաշքեսանի հանքավայրում, ինչպէս թելադրում էին ոչ միայն մասնագէտները, այլ և մեթի անտեսական հաշիւը, ստալինոբոց կոմբինատի վայրը բնորի Գանձակ քաղաքը և հանքը 40 կիլոմետր հեռաւորութիւնից բերել Գանձակ:

Սուլթանովի կողմը բոլորովին չփոթութեան մասնեց ռուս ինժեներներին: էլիավայի միտքը հասկանալի էր. մարդ անպատճառ ուզում էր, որ այդպիսի բարձր արժէք ներկայացնող մի գործարան հիմնուէր Վրաստանում, բայց Սուլթանովը ինչու առաջ էր քշում Գանձակը, չէ՞ որ Գանձակն էլ Ազրբեջանումն է: Էլ ի՞նչ կարիք կար ամէն տեսակէտից նպատաւոր վայր հանդիսացող Դաշքեսանը թողնել և Գանձակ դալ:

Մակայն, չիք ինչ դադարի որ ոչ յայտ լիցի: Թէև ուշ, Սուլթանովի միտքն էլ յայտնի դարձաւ: Ապա մի նայեցէ՛ք քարտէսին, գտէ՛ք Գանձակը և լաւ դիտեցէ՛ք նրա հարաւակողմը: Ձեզ պարզ կը լինի, որ ամբողջ այդ տարածութիւնը, մինչև Հայաստանի սահմանը, դրաւած է Հայաստակ գիւղերով: Այդ Անդրկովկասի այն մասն է, որ համաձայն մարքեան ու լենինեան ազգային քաղաքականութեան, պէտք է պատկանի Հայաստանին: Հայաստանի անմիջական շարունակութիւնն է՝ միևնույն աշխարհագրական կազմով և միևնույն ազգային ու տնտեսական կառուցածքով: Ահա ճիշտ այդ տեղում է գտնուում և Դաշքեսանը:

Սուլթանովի մտահոգութիւնը հասկանալի է. և ի՞նչ գործարաններ չինեն Դաշքեսանում, նրանցից նայս և առաջ ի՞նչու է հայ գիւղացիութիւնը: Տնտեսական այդ հսկայ ձեռնարկը կը կենտրոնացուի հայկական շրջանում: Ազգային կարող է այդ շրջանը Հայաստանին միացնելու հարց առաջ դալ: Եւ այսպիսի «մարքսիստական» նկատումներով Սուլթանովը պահանջում է մետաղագործական կոմբինատը հիմնել Գանձակ քաղաքում:

Այսքանը գեո բուական չէ. Սեւանի օգտագործման ծրագիրն էլ կապում է Դաշքեսանի խնդրի հետ: Ազրբեջանը այս կողմերում ջրա-էլեկտրական ոյժ չունի. Դաշքեսանի գործարանները պէտք է բանեն Սեւանի արտադրիչ էլեկտրակայանութեամբ: Սեւանի ծրագրի լիակատար իրագործումը կապւած է Դաշքեսանի կոմբինատի քաղաքական հետ: Այսպիսով՝ Հայաստանի էլեկտրական ոյժի մի խոշոր մասն էլ հանում է երկրից դուրս, այս անգամ Ազրբեջանի կարիքներին ծառայելու համար:

Երևի նման գուտ լենինեան մտայնութեան համար էր, որ էլիավայան նշանակեց Անդրկովկասի Ժողովուրդի նախագահ, իսկ Համիդ Սուլթանովը՝ Անդրկենտրոնկոմի քարտուղար:

Հապա հայ կոմունիստները, կը հարցնէ, երևի, ընթերցողը: Հայ կոմունիստներն էլ գրադւած են ստոցիալիզմի կառուցումով...»

ՋԱՆԿԻ

# ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ

( ՏԱՄԱՍԵՅԱԿ ԱՌԹԻՒ )

Անկախած է, որ խորհրդային իշխանութիւնը մեծ զարկ տւեց արևելեան, բայց, մանաւանդ, թուրք Ժողովուրդները սազային վերածնութեան գործին: Բողջեկիները ոչ միայն կործանումից փրկեցին թիւրքերին և սպահնակեցին քեմալապետութեան գոյութիւնը, այլ և սազային կայմակերպութեան ու քաղաքաման մղեցին Ռուսաստանում սարդո շուրջ 30 միլիոն թուրք ցեղերը: Այս տեսակէտից խոշոր դեր կատարեց արաբական այլուրեքի փոխարինումը լատինականով, որի ստանամականը լրացաւ վերջերս: Իրաւամբ այդ գործը բողջեկիները կոչում են «մշակութային յեղափոխութեան»

մեծ գործ»: Բայց միայն մշակութիւնով չի սահմանափակուում լատին այլուրեքի ներածումը թուրք Ժողովուրդներին մէջ. նա միաժամանակ և քաղաքական կարեւոր երևույթ է՝ արժանի մեր քառուկ ուշադրութեան: Պէտք է ասել, որ լատին այլուրեքի քաղաքական էլ, ինչպէս ուրիշ շատ քաղաքականներ, թուրքերի մէջ ստալին մտցողը բողջեկիները չէղան. նա արծարծում էր և բողջեկիներին առաջ: Խորհրդային իշխանութիւնը միայն հասկացաւ նրա «յեղափոխական» դերը և օգտագործեց իր նպատակները համար: Լատին այլուրեքի հարցը Ազրբեջանում յուզեց

դեռ անցեալ դարի կէսերին: Յիշենք, թէկուզ, ազըրբէշանցի Քուրբ յայտնի Հասարակական գործիչ և զբաղէր Միրզա Ծաթալի Ախունզադին, որ վաթսուհակն թալանարարի Հրապարակ գրեց նախ արաբական այրուքները բարեփոխելու, այս՝ լատինականով փոխարինելու առաջարկը: Նրա այս մտքը Հանդիպեց կըրթական-պահպանողական շրջանների բուռն դիմադրութեան: Յուսահատուած էր Հայրենակիցներից՝ Ախունզադը դիմեց Պոլիս ու Թեհրան, բայց այնտեղ էլ նրա միջոցով Համազանց չզտաւ: Ախունզադը յայտարարեց իւրամտութեան թշնամի և որպէս այդպիսին էլ մեռաւ: Մահից յետոյ, երբ նրա դազադը անց էին կացնում Թիֆլիսի մէջընտով, մոլեռանդ ամբողջ յարձակեց նրա վրա անէծքով ու քարերով և թոյլ չուեց, որ թողնէ Շիա զերեզմաններստը: Իսկ

Ախունզադի գաղափարը, սակայն, էր Հեղինակի հետ դերեցման չըլաւ: Այնուհետև էլ, միթք ընդ մերթք, արծարծեց արաբական այրուքները բարեփոխելու խնդիրը՝ մէջընդ մեջ գրեց Արքրէշանի անկախութեան օրով, բայց տիրող Մուսաաթական կուսակցութիւնը վճռականութիւն ցոյց չուեց: Նա վարանում էր. տարած Համաժողովը կարող էր, որչ լավուց և Համալսմական երազներով՝ նա վախենում էր, թէ արաբական այրուքների փոխարինումը լատինականով Արքրէշանի վարկը զք ձգի յայն իսպառ չախարհի: Արաբական այրուքները նրա ձեռքին զօրաւոր քաղաքական գէնք էր, որպէս և Արքունի Համադի և իթթիխաականների ձեռքին: Հարցը սահմանափակեց միայն «խորհրդարանական յանձնախումբի» ստեղծումով և փաստօրէն թաղեց:

Միևնոյն Հայրենակով առաջնորդուած էին և ըստ շնիկների: Նրանք էլ դիտարկում էին արաբական այրուքների ոյժը իսպառ ժողովուրդների և Համալսմական ուժերի աջակց, բայց Հէնց այլ ուժերի ազդեցութիւնը կոտորելու և իսպառ ժողովուրդների իրենց ենթարկելու նպատակով ձեռք առին լատին այրուքները: Այս վերջինը ոչ միայն դիւրեւորանելի էր, ժողովրդական լայն դանդաղանքների աւելի մատչելի, այլ և հակադրուած էր Հին, Ղուրանին և իսլամութեան աւանդապատուութեան: Իսլամական Հին Հասակազուրկութիւնների և ամանթութիւնների հետ կապը խզելու լուսադոյն միջոցը՝ լատին այրուքների որդեգրումն էր:

Եւ Արքրէշանի խորհրդայնացումից յետոյ, ձեռք այրուքների Հարցը դարձաւ օրակայ քաղաքական Հարց, որի շուրջ ծառայեց այսպէսը մի կողմից Հակախորափոխական կղերական ու ռոգործուած-ազգայական տարրերի և միև կողմից՝ բանուորական յեղափոխական ուժերի (միջև\*)): 1921թ. Բազուրի թուրքերէն «կոմունիստ» թերթում առաջին անգամ զրեւց արաբական այրուքները լատինականով փոխարինելու առաջարկը, որ սաք արձագանգ չտուաւ, մանաւանդ, բանուորական շրջաններում: Հարցը դարձաւ Հրապարակային քննութեան առարկայ: Հակառակութիւնը, ինչպէս և պէտք էր սպասել, եկաւ Համալսմական և Համաթրքական խաւերի կողմից՝ իթթիխաականների, մուսաաթականների, Հոգևորականութեան: Պայքարը Բազուրի անցաւ և զուարճները, սեղաբիտեց և Ռուսաստանի միև թրքաբնակ վայրերը: Մասնաւորապէս բուռն դիմադրութիւն ցոյց արեց Թաթարաստանում, ուր ոչ միայն ազգայնականները, այլ և պատասխանատու կոմունիստները պահանջում էին բաւականաչափ միայն բարեփոխում արաբական այրուքներով:

Լատին այրուքների կողմակիցները, սակայն, աւելի ուժեղ էին. նրանց էլ նպատակ էր կոմունիստական Հանրային կարծիքը և, որ գիտաւորն էլ, Մուսկան: 1922թ. րային 11ին, Կոմունիստ Կուսակցութեան և Մուսկայի կուսովարութեան բարբառոյն մարտիների արտօնուկատալարութեան բարբառոյն մարտիների արտօնուկութեամբ, Բազուրում կազմեց ձեռք թուրք այրուքների Արքրէշանի կոմիտէն, որ իր ձեռքն առաւ լատին տա-

րերի կեանքի մէջ մտցնելու գործը: Կոմիտէի նախագահ Աղամալի Օղլիի գեկուցման վրա Լենինը ջախջախեց ձեռնարկը՝ յայտարարելով, որ արաբական այրուքների փոխարինումը լատինականով Հուսաստան է չեղարկուելու թեան Արևելքում»:

Ինական է, որ նման պայմաններում գործն այլ ևս չէր կարող դանադել: 1922թ. սեպտ. 21ից Բազուրում սկսեց լոյս տեսնել «Ննի Եոյ» լատինաստու թերթը, որ դարձաւ նոր այրուքների շատագուց ու քարոզիչը: Արքրէշանի ամենայնայնի կոմունիստ գեկափարները Աղամալի-Օղլի, Մուսաբէզով, Էֆենդիև, Շահաբով և ուրիշներ կանխեցին շարժման զլուրուց և Կոմիտէի Արքրէշանի ու Բազուրի կոմիտէիները անմիջական գեկափարութեան տակ առաջ տարին պայքարը յանուն նոր այրուքների:

1923թ. արդէն լատին այրուքները Արքրէշանում յայտարարեց պետական այրուքներ: Մի տարի յետոյ, 1925ին, Խորհուրդների Համալսմանը որոշեց գործազրուութեան դնել առաջին աստիճանի զարդոցներում, իսկ յունւար մէկկըց սկսած Արքրէշանի պետական, կուսակցական ու Հասարակական բոլոր Հիմնարկութիւնների գործալարութիւնը կատարել լատին տառերով: Կուսակցութեան և կուսովարութեան կամքի առաջ Հակառակորդները թէև լուեցին, բայց նոր դրութեան հետ վերջնականապէս չհայտնեցին: Հողորդութիւնը նոր այրուքներին ազգայնական ու կղերական շրջանների մէջ կենդանի է և այսօր: Արքրէշանեան թուրք տարագրութիւնը դեռ շարունակում է օգտուել արաբական այրուքներից: Մուսաաթի պարագլուխ Ռասուլ Չաղէն միայն վերջերս սկսեց դորձանել նոր այրուքները Բերկում Հրատարակած էր թերթի մէջ:

Արքրէշանում, սակայն, նոր այրուքների խնդիրը պէտք է Համարել փակում: Կեանքի փորձը Հաստատեց, որ նա կենդանի պահում էր: Մի փոքրիկ Համաճառութիւն բաւական է ցոյց տալու Համար, թէ որքան մեծ է նրա դերը թրքութեան ազգային-մշակութային արթնանման ու յառաջադիմութեան գործում: 1919 թ.ին, անկախութեան շրջանում, Արքրէշանի ունէր 613 տարրական զարկը 48,000 աշակերտներով: 1930ին, Արքրէշանի զարդոցների թիւն արդէն 1,480 էր: որոնց մէջ սովորում էին 189,000 Երկեստ աշակերտներ: Այս վերջը բացատրուած է, նախ և առաջ, նոր այրուքների կատարած նւաստումներով:

Նոյն բարերար ազդեցութիւնը տեսնում ենք ևս կեանքի ուրիշ ապարկներում: Մասումը՝ առաջին Հերթին, բարձրագոյն ու միջնակարգ վարժարաններ, Հրատարակութիւններ, ժողովրդի զարգացման ընդհանուր աստիճան — շնորհիւ նոր այրուքների արագ կերպով առջ գնացին: Եւ, ի հարկէ, դրանից մեծապէս օգուեց թուրք մշակութիւնն ու ազգային գիտակցութիւնը: Որքան և ուժեղ լինի առական ազդեցութիւնը Բազուրում, ազգային գիտակցութեան տեսակետով, Արքրէշանի թրքութիւնն այսօր անհամեմատ աւելի ուժեղ է, քան Երբեքից:

Սակայն, լատին այրուքները միայն Արքրէշանով չսահմանափակեց: Նա զրաւեց նաև ուրիշ թուրք ժողովուրդների ու շարկութիւնը և դարձաւ Համախորհրդային երևոյթ: 1926թ. փետր. 26ին, Արքրէշանի Ռուսումնասիրական Ընկերութեան նախաձեռնութեամբ Բազուրում դուստրակեց Համալիւմնական թրքագիտական Համալսմար, որ աճողին դեր կատարեց լատին այրուքների տարածման տեսակետից: Համալսումարին մասնակցում էին Խորհրդ.Միութեան թրքական ծագում ունեցող բոլոր ժողովուրդների պատգամաւորութիւնները՝ Որիքի թաթարները սկսած մինչև հետադարձ Միբրիի եակուտները: Մասնակցում էին նոյնպէս Դաստարանի ու Հիւսիսային Կովկասի ոչ-թուրք յունականները, Թիւրքիայի ներկայացուցիչները, ինչպէս նաև Պետրոգրադայից ու արտասահմանից արևելալէզու գիտնականները: Համալսումարի օրակարգի ամենահար-

\*) «Հարձա վաստիկա», 16 հոկտ. 1932թ.

տապ կէտը այրուրենի ինդիւրն էր, որին, յանձնախումբային նախատանքներեց զատ, ներկեցին Հինգ ընդհանուր ժողովներ: Այդպէս էր, որ նոր այրուրենի հակառակորդները տւին վերջնական ճակատամարտ. կատարի ընդդիմութիւն ցոյց տւին ժամանաւորապէս նորին ու Կողանի թաթար պատաճաւորները, բայց, ի վերջոյ, Համալուծմարը 101 քէտով ընդդէմ 7ի, Յի ձեռնպահութեամբ, արտայայտեց յօգուտ նոր այրուրենի: Համալուծմարի այդ, կարելի է ասել, պատմական որոշումը վճռական նշանակութիւն ունեցաւ լրատին տասերի յաղթանակի ապահովութեան Համար Պորհրդ: Միութեան սահմաններում:

Այժմ արդէն, Պորհրդային Միութեան մէջ այրող 70 զանազան ժողովուրդներ գործ են անում լրատին այրուրենը: Ազգրէլան, Ռիմ, Թաթարստան, Կազակստան, Ուզբեկստան, մինչև Հետևուր Կամչատկան, արարական տաների տղ բռնել են լրատին տասերը: Կողմատու նոր այրուրենը ընդունեալ է ոչ միայն թուրքերի, այլ և ջիւրբերի, թախլաների, թաթերի, կարադիլիների, աղիվայիների և ուրիշների կողմից: Լատինատա թաթերի թերթ է լոյս տեսնում Լուրայում, թախլաների թերթը՝ Լենքորանում և Աստուրայում, թաթարերէն-ուզբեկերէն թերթ՝ Բազում, քրդերէն թերթ՝ Երևանում:

Անշուշտ, լրատին այրուրենի կիրառումը Պորհրդ-

Միութեան թուրք ժողովուրդների կողմից վճռական դեր կատարեց նաև Թիւրքիայի այրուրենի բարբիտոսան գործում: Այսօր Պարսիկաստանում էլ նոյն իմաստով շարժում է նկատուում: Յայտնի է, որ Չինաստանում ու Ճապոնիայում էլ նման արժանազութիւններ կան: Չինաստանի մի մասում, որ գտնուում է բուլղարիների ազգեցութեան տակ, նոյն իսկ արդէն ընդունեալ են լրատին տասերը:

Իրաւունք ունին պարծենալու բուլղարիները, այրուրենի բարբիտոսութիւնը արևելեան ժողովուրդների մէջ իսկապէս ընթանում է յեղափոխական անհարթութեց ճանապարհով: Եթէ անտեսական շինարարութեան և ընկերային յիղարքման ստղարկումը բուլղարիների գերմիջև է այժմ եղել է բացասական և նպաստել է յետադիմական զարգացումների ուժեղացման, թուրք ցեղերի ազգային արթնացման, Հետևաբար, և ջաղաքական գործունէութեան տեսակէտից խորտուրդների կատարած նաճումներն անուրանալի են: Եթէ բուլղարիք Հայ ժողովրդին բերեց ջաղաքական յոյսերի խորտակում, անտեսական քայլայում, ազգային զանգաւածների ցրում և այլատերում, մշակոյթի անկում, թուրք ժողովուրդների Համար եղաւ ազգային վերածնութեան և ջաղաքական ուժերի արթնացման, Համախմբման ու կազմակերպութեան հզօր աղակ:

Ս. Վ.Ր.

## ՍԻՐԻՈՅ ՀՈԳՍԱՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ 1932. ԹԻԻ 'ՆԱԽԱՀԱՇԻԻԼ

Միւրիան՝ վարչականօրէն բաժնեւծ է չորս պետութիւններու, որոնք կը կառավարին ներքին ինքնավարութեամբ. այսպէս՝ Լիբանանի Հանրապետութիւն, Միւրիական Հանրապետութիւն, Ալուրիթներու պետութիւն և ձէպէլ-Տրիպլ պետութիւն:

Չորս պետութիւններն ալ՝ կազմեալ զինազարգրէն անմիջապէս յետոյ, ունին իրենց առանձին պիւտճէները՝ Հաստարակնում տեղական Հասոյթներով և տուրքերով: Իւրաքանչիւր կառավարութիւն կը պատրաստէ իր տարեկան նախագիշխը, կենթարկէ դաշն Երեսփոխանական ժողովի կամ ներկայացուցչական ժողովի Հաստութեանը և ապա կը դրկէ Բարձր Գոմիսերութեան կըմտական բաժնին՝ ի ջննութիւն և ի վաւերացում:

Բարձր Գոմիսերութեան իրաւասութեան ներքև կիլնայ մանրամասն Հետևելու այն բոլոր գումարներուն որոնք կը ծախսուին Միւրիոյ Հոյատարութեան սահմաններու մէջ: Տեղական պիւտճէները վաւերացեղէ յետոյ կը վերադարձին կառավարութիւններուն՝ ի գործադրութիւն:

Ուրիշ անգամայ մը թողնելով Միւրիոյ ներքին տեղական Երկտայցոյթի ջննութիւնը՝ այսօր ծանօթանեալք Միւրիոյ երկրորդ պիւտճէին, որ կը պատրաստուի Բարձր Գոմիսերութեան կողմէ և որու ամբողջ մասակարարութիւնն ալ կը կատարուի Ֆրանսական իշխանութեան միջոցաւ: Այս վարչական կազմակերպութեան մտանք ծածկող չեղող անհասնելի այնպէս կը կարծեն որ Միւրիոյ մէջ ծախսեալ բոլոր գումարներն ալ կը վճարուին Ֆրանսական պետութեան գանձէն: Կամ Հակառակը՝ Միւրիոյ մէջ գտնուող Փրանսացի բոլոր զինուորները և պաշտօնաններու ծախքերը կը վճարուին Միւրիոյ պետութեանց պիւտճէնէ: Եւ երկուքի տարբերութիւնը ցէլերուն ծանօթ է:

Միւրիոյ Հոգատարութիւնը երեք տեսակ պիւտճէ ունի.

- Ա. — Միւրիոյ տեղական կառավարութիւններու:
- Բ. — Հասարակ շահերու:
- Գ. — Ֆրանսական վարկ:

Առաջին պիւտճէի մասին այդչէն քիչ վերը ըստ տեղական ընդթ ունի և այսօրայ մեր նիւթին մէջ չի մտնել: Երկրորդ և երրորդ պիւտճէներու մասակարարութիւնը Ֆրանսական իշխանութեան ձեռքն է:

Միւրիոյ չորս պետութիւններն ալ թէև անշատ երկիրներ են, բայց ունին ընդհանուր Հասոյթներ, Գրքաւարարպէս մաքսատուններու Հասոյթներու վրա, որ միլիոնաւոր ոսկիներու կը Հասնին, չորս պետութիւններն ալ Համեմատական չափով իրաւունքներ ունին: Այս իրաւունքներու դիմաց պարտականութիւններն ալ կան, որոնք զարմեալ ընդհանուրի շահերը կը շօշափեն: Այսպէս՝ երկրի ներքին ապահովութիւնը, սահմաններու պաշտպանութիւնը, օսմանեան Հանրային պարտքերու սիրեական բաժնի վճարումները սերտօրէն կապեալ են Միւրիոյ Հասարական շահերուն:

Այս երկրորդ պիւտճէն Հոս Գանչուած է Հասարակաց Շահերու (Intérêts Communs) անունով՝ Բարձր Գոմիսերութեան հակակշիռ տակ:

Ամէն տարի, Միւրիոյ մէջ մի քանի անգամ կը գումարին տնտեսական ժողովներ Բարձր Գոմիսերութեան մէջ: Այս տարի ալ, մայիսի վերջերի, տեղի ունեցաւ սոյն ժողովը որու կը մասնակցէին Լիբանանի, Միւրիոյ, Ալուրիթներու և ձէպէլ-Տրիպլի կառավարութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաև սոյն կառավարութեանց մօտ նշանակեալ Բարձր Գոմիսերութեան պատուիրակները:

Տնտեսական ժողովի օրակարգն էր Միւրիոյ տնտեսական ներկայ կացութեան ջննութիւնը, Հասարակաց Շահերու եկամտաներու ճշտումը և ծախքերու բաշխումը:



Ամբողջ աշխարհին համար նորութիւն մը չէ տընտեսական տարազանի ազդեցութիւնը և ծանր հետեանքները, որմէ կը տատայի յատկապէս գործաւոր դասակարգը: Շատ բնական է որ Միւրիան ալ անմասն չէր կարող մնալ այս վարակիչ հիւանդութենէն որու աւերները կը հասնին իւրաքանչիւր անհատին:

Աւանք մտնելու Միւրիոյ տնտեսական և առևտրական կեանքի մանրամասնութեանց մէջ՝ առաջ բերենք այն գումարները, որոնք մտաւորապէս ճշտած են ինքնին Գոմիսիոնի մասին տնտեսական ժողովի կողմէ և արդիւնքը՝ յայտնած տեղական թերթերուն, յունիս 1ին՝ Մամուլի Տեսչութեան միջոցաւ: Թերթերը գոհունակութեամբ արձանագրեցին բարձ գոմիսերի առած քաջը:

Անշուշտ, Բարձր Գոմիսիոնի կողմէ իր պաշտօնական հարցազարգացման շէր կրնար պիտանել տեղի մանրամասն ներկայացնել. այսուհանդերձ հնարաւոր է մտաւոր ազդեցիկ մը կարգիլ Միւրիոյ Հասարակաց Շահերու Գործիքները որոշողութիւններուն մասին:

Ինչպէս ըսինք, սիրիական կարևոր նախահանգրտներու՝ Պլյուրթի, Թրիփոլիի, Ալեքսանդրիի և Լաթակիի, ինչպէս նաև քաճաքային մաքսատուներու՝ Իրաքի, Պարսիստիի և Թիւրքիոյ սահմաններու վրա՝ հասոյթները գրեթէ ամբողջութեամբ Հասարակաց Շահերու մուտքը կը կազմեն:

Այս տարւոյ մաքսային հասոյթները բաւական իշած գծ, այն պարզ պատճառաւ որ մաքսային տուրքերը կը գանձուին արտաքին ներկայ արժէքի վրա, որով քննութեան անկումը անմիջապէս ազգած է նաև մաքսային եկամուտներուն վրա: Տնտեսական ժողովը 1932 տարեկանին համար 30 միլիոն Փրանքի նազ հասոյթ նախատեսած է և ըստ այնմ ալ պատրաստած նախահանգրտ, միջոցով, նախորդ տարիները, Հասարակաց Շահերու հասոյթները նախատեսածէն աւելի կը դաշտնային և ամէն տարեկան, յաւելեալ գումարները կը բաժնէին պետութիւններուն: Պէտք է ըսել, որ սոյն յաւելեալ հասոյթները մեծապէս օժանդակութեան կը հասնին տեղական կառավարութիւններու պիտանելու բացերը գտցելու: Ուրեմն, այս տարի, փաստօրէն կառավարութիւնները պիտի զրկին այդ շուսփելի օժանդակութենէն:

Բարձր Գոմիսիոնի և Հասարակաց Շահերու պիտանելու հաւասարակշռած է մաքսային տուրքերու բարձրացումով և մաս մըն ալ ծախքերու կրճատումով: Նախահանգրտ մուտքի գումարը արձանագրած է 158-119-800 Փրանք բաժնւած հետեւեալ կերպով.

Մուտքի հասոյթներ	Փրանք
1. Մաքսատուներ	154-879-640
2. Հասարակաց շահերու սպասարկութիւններ	1-123-000
3. Ընդհանուր պահուստներ	540-000
4. Մեծաշնորհ ռեկոնստրուկցիոններ	572-160
5. Փարսուներ	500-000
6. Փարիզի սիւրիական ներկայացուցչական պաշտօնատուն	5-000
7. Դրամատուները աւանդ օգուած գումարներու տակսներ	500-000
<b>Գումար՝</b>	<b>158-119-800</b>

Սոյն գումարը բաղադրուով 1931ի փոխական եկամուտի հետ, 13-780-700 Փրանք պակաս եղած է: Հասարակաց Շահերու ելքի կողմերը կը կազմեն հետեւեալ ծախքերը.

Ելքի ծախքերը	Փրանք
1. Արևելի յատուկ գործառնելու յաւակացած միանգագ գումարը	95-000-000

2. Հանրային պարտք	27-300-000
3. Մաքսային վարչութիւն	14-839-860
4. Ելեմտական սպասարկութիւն	3-434-220
Լոգապահական և կալուածական	649-000
Տնտեսական սպասարկութիւն և Հասարակաց շահերու պաշտօնատուն	2-243-360
Մեծաշնորհ ռեկոնստրուկցիոններու համարուած	1-373-280
Փաստ և հեռագրական վարչութիւն	1-302-520
Կրթական և հեղափոխական ընդհանուրներ	499-600
Ընդհանուր Ապահովութիւն	2-837-180
Հասարակաց շահի պատկանող այլ սպասարկութիւններ, վարչական, օրէնսդրական, տեղական կառավարութեանց Ֆրանսա գտնուող պաշտօնատուներ	1-502-780
5. Միւրիոյ պետութիւններու մօտ պատկանութեանց և պաշտօնատուներու	6-138-000
6. Արտակարգ ծախքեր	1-000-000
<b>Գումար՝</b>	<b>158-119-800</b>

Ծախքերու բաժնին մէջ աչքի զարնողը զինուորական սպասարկութեան գումարն է: Տեղական յատուկ գործառնելու պատրաստուած համար նախատեսուած է 4.750.000 Փրանք: Այս գործառնելու մասնաւորապէս կը պատրաստուին վճարովի, տեղային կամաւորները, որոնք կը շարունակեն Միւրիոյ սպառնող ազգային բանակը կազմելու: Ըստ թերթերու կարծիքին սոյն գործառնելու ծախքերը աւելի շատ են, քան ներկայացուած է նախահանգրտի մէջ: Յատուկ Զօրանաբու կազմութիւնը նախատեսուած է Ազգերու Դաշնակցութեան հոգատարութեան յատուկ յօդանուններով: Արդէն Դամասկոսի մէջ քանի մը տարիներէ ի վեր քայլած է զինուորական վարժարան մը, ուր կը պատրաստուին տեղացի սպաներ Փրանսական զինուորական դաստիարակութեամբ: Սոյն վարժարանի շրջանը լրացնող սիրիականները, իր տեղակալ սպայ կը մտնեն Յատուկ Զօրամասերու դեղերու մէջ և հեղափոխուած ձեռք կը ձգեն աստիճան և պաշտօնի բարձրացում:

Երկրորդ կարևոր գումարը ծախքերու մէջ հանրային պարտքերն են, որոնք փոխանցած են օտմաննահանրային պարտքերէն: Ենթադրուած Բարձր Գոմիսիոնի մասին ելեմտական հակակոչին, պարտքերու վերջնական բաշխումին ստիպել, կանոնաւորապէս կը վճարեն հանրային պարտքերը և, ինչպէս տեսանք նախահանգրտի մէջ, տարեկան գումարը 1-365-000 սիրիական ոսկիի կը հասնին: Մինչդեռ շատ մը պետութիւններ զլիսառութեամբ ելեմտապէս անակցացած թիւրքիոյ, դարձեցուցած են իրենց վճարումները: Այս առթիւ բարձր Գոմիսիոնը դիմում կատարած է Հանրային Պարտքերու Փարիզի կեդրոնին՝ պահանջելով դրամական այն բոլոր անուսելութիւնները որ պիտի տուին միւս անանկ պետութիւններուն:

Զինուորական ծախքերը և հանրային պարտքերը միասին 77% կը կազմեն Հասարակաց շահերու ծախքերուն:

Ելքի բաժնի մնացած ծախքերը՝ մաքսատան պաշտօնէութեան, Հասարակաց շահերու, ելեմտական պաշտօնատան, առողջապահական, կրթական և Բարձր Գոմիսիոնի մասին պատկանող տնտեսական ծախքերն են: Այս բոլոր պաշտօնատուներու տնտեսական կարևոր պաշտօնատարները և քննիչները Փրանսացիներ են: Իսկ այն Փրանսացիները որոնք զուտ պիտանագրական նկատումներով տեղաւորուած են գանազան վարչութիւններու մէջ, կը վճարեն Փրանսական պիտանելուն:

Երրորդ պիտանելու Փրանսական կառավարութեան Միւրիոյ համար քեզարկած վարկն է: Սոյն գումարը

ամէն տարի Ֆրանսայի ընդհանուր պիւտճէի հետ միասին կը քէտարիւի և մէկ մասը կը յատկացուի պատերազմական նախարարութեան, իսկ միւս մասն ալ՝ արտաքին գործերու: Ֆրանսական պիւտճէի գումարները չեն ենթարկուի սիրիական հակակշիռի: Անոնք ուղղակի Սիրիա կը զրկուին և կը ծախսուին Սիրիոյ մէջ դանուղ ֆրանսական բանակի պէտքերուն համար:

Զինուորական ծախքերէն դատ կայ Փարիզի արտաքին գործերու նախարարութեան պիւտճէն՝ Սիրիոյ համար: Բարձր Գոմիսիոնութեան, շրջանադիտական պաշտօնատուններու ծախքերը և նոյնպէս, դպրոցներու յատկացած տարեկան միանակց նէքերը կը վճարուին Ֆրանսայի ընդհանուր պիւտճէի հաշւէն:

Ընդհանուր պատերազմէն անմիջապէս յետոյ, երբ ֆրանսական բանակը կը դբաւէր Սիրիան՝ հսկայ գումարներ քէտարկած են ֆրանսական խորհրդարանի կողմէ: Հետագային, Սիրիոյ քաղաքական կացութիւնը հետզհետէ պարզելով և ծախքերն ալ բնականաբար նւազելով՝ 1932 տարւոյ համար Ֆրանսայի Երեսփոխորդը քէտարկեց 325-830-176 ֆրանքի վարկ մը՝ բաժանած հետեւեալ ձևով.

Ֆրանսական կառավարութեան վարկը	ֆրանք
1. Սիրիոյ ապահովութեան համար պահած ֆրանսական զինուորական աւժերու ծախս	305-133-460
2. Ֆրանսայի արտաքին գործերու նախարարութեան կողմէ Սիրիոյ Բարձր Գոմիսիոնութեան յատկացած վարկ	10-666-666
3. Ֆրանսայի արտ. գործ. նախար. կողմէ Սիրիոյ կրթութ. հաստատութ. իրք մէջ յատկացած վարկ	10-030-050
Գումար՝	325-830-176

Վերոյիշեալ գումարը, որ հաւատար է մօտ 16 միլիոն սիրիական սակիի, ամբողջութեամբ կը զրկուի Փարիզի կառավարութեան կողմէ և, բնականաբար, մեծ մասով կը ծախսուի Սիրիոյ մէջ:

Անցած 11 տարիներու ընթացքին ֆրանսական զինուորական և քաղաքական պաշտօնէութեան համար Սիրիոյ մէջ ծախսած է 4 միլիառ ֆրանք որ հաւատար է 160 միլիոն տուրքի: Գ. ՍԱԶՁԱՆՆ

# Ի Ի Գ Ո Ս Լ Ա Ի Ի Ա Յ Ո Ւ Մ

Իւզոսլաւիայի մասին դրուի հասարակութեան մէջ չափազանցած կարծիքներ են տարածուած: Այնպէս է ներկայացուած այս երկրի վիճակը, որ կարծես թէ յուսահատական օրեր է ապրում: Իբրև թէ Իւզոսլաւիայում տիրում է ստուեսական անօրինակ տագնապ, միեւնոյնի դնէրը աւանդուիտէն աճել են և մտայնի չեն ազգաբնակչութեան ջբատը խաւերին, որոնք դատապարտած են սոսիալիզմին: Ներքին խռովութիւններն անպակաս են: Յերափոխութիւնը երկաթէ զաւազանով ծեծում է երկրի դռները:

Նման պատկերացումը բոլորովին անհամապատասխան է իրականութեան: Ճիշտ է, ստուեսական տագնապ կայ, բայց բնառ ոչ աւելի քան ուրիշ երկրներում, իսկ պարտաւոր նոյն իսկ անհամեմատ աւելի փածան քան ուրիշ որեւէ տեղ: Ճիշտ է, ներքին դժգոհութիւններ կան, բայց յեղափոխութեան վտանգ չի սպառնում: Իւզոսլաւիայում դոյուլթիւն ունեցող հիմնական դժգոհութիւնները կապ չունին ստուեսական տագնապի կամ, առհասարակ, օրւայ խնդիրների հետ: Դժգոհութիւնների պատմութիւնը աւելի է խնէ և, արժանաներ աւելի խոր:

Իւզոսլաւիայի ներքին վիճակին մօտից ծանօթանալը օգտակար է Պրոչաձի ընթերցողների համար, որովհետև այս երկիրն այսօր ամենատուեղ գործուն է Բալկաններում, իսկ Բալկանեան կիւիւրը բնական թեւելքով կապւած է Մերձարտը Արեւելքի քաղաքական ճակատաբերին:

Պէտք է յիշել, որ համաշխարհային պատերազմից անոց Իւզոսլաւիան գոյութիւն չունէր. կար Սերբիան, որ մի փոքրիկ պետութիւն էր հազիւ 40-45,000 քառ. կիլոմետր տարածութեամբ և շուրջ երկու ու կէս միլիոն բնակիչներով: Պատերազմի ընթացքում Սերբիան ունեցաւ ահաւոր կորուստներ. ամբողջապէս քար ու քանդ եղաւ թշնամու ռազմերի տակ և բնակչութեան մէկ երրորդ մասը կորցրեց: Բայց վարձարարութիւնն էլ եղաւ աւելի քան կատարեալ. ո՛չ մի սերբ էր կարող երազել անգամ այն, ինչ որ Սերբիայի համար սերբի պատերազմը: Այսօր Իւզոսլաւիան ունի մօտ 250,000 քառ. կիլոմետր տարածութիւն և 13-14 միլիոն ազգա-

բնակութիւն: Իրականացել է երկար ժամանակի ընթացքում փոյխիստած գաղափարը — մի պետութեան սահմաններում միացած են սլաւոն ծագում ունեցող հարաւային ժողովուրդները՝ խորատները, սլովեներն ու սերբերը:

Բայց յետպատերազմեան տարիները եկան նաև ցոյց տալու, որ այդ ցեղակից ու արեւնակից ժողովուրդները մի պետական յարկի տակ ապրելու համար պահանջւած բոլոր տեսանքերից դուրի են: Մագուռը, արեան ձախը, բնադրական ձգտումները շատ բան են, բայց, ըստ երևոյթի, գեղ բաւական չեն մի պետութիւն կազմելու և նրա սահմաններում համերաշխօրէն ապրելու համար: Մի յարկի տակ ապրելու համար աւելի կարևոր են ռոգրեական ազգակները: Սլովոն, խրաթն ու սերբը իրենց հոգեկան կառուցւածքով տարբեր մակարդակների վրա են կանգնած: Ճարքեր է եղած նրանց անցեալը, տարբեր է մշակոյթը, տարբեր կրօնն ու այլուրեքը: Այդ տարբերութիւնները ծնունդ են տալիս տարբեր աշխարհայեացիքների, մտածողութեան եղանակների և քաղաքական տարբեր ձգտումների: Այդ փաստը առանձնապէս ցայտուն կերպով հրապարակ երաւ, երբ պատմութիւնը նրանց լծեց մի պետական սայլի, և նրանք չկարողացան ապրել բանիւլ՝ իրեն կցելու միւսները. փոքրիկ Սերբիան էր, որին միացեցին Սրաթիան ու Սլովենիան: Միացած երկրների իշխանութեան զեկը դրաւնցին սերբերը, որոնք մշակոյթով անհամեմատ աւելի յետ են միւսներից, և այդ իսկ պատճառով անկարող եղան զոհացում տալ սլովեններին ու խրաթններին:

1921 թիւն, սահմանադրութիւնը մշակելիս, սերբ քաղաքական գործիչները հաստատութիւն ու հետաձուսութիւն չունեցան և չբռնեցին, որ միացեղ ժողովուրդները իրենց քաղաքական, ընկերային, մշակոյթի և կրօնական ըմբռումներով սերբերից շատ են տարբերուում և նրանց քաղաքականապէս մի յայտարարութիւնը անհնարին բան է: Այդ սահմանադրութիւնը

կազմեց խիտ կենտրոնացման-միապետական ոգով, որ համապատասխանում էր հին սերբերի պետական-քաղաքական հասկացողութիւններին, բայց բնու երբեք միաների:

Այնուհետև, անցնելով իշխանութեան կազմակերպութեան, սերբեր իշխանութեան մէջ հասարակ տեղ տուին հատուածներին: Աւելին՝ պահելով իշխանութիւնը իրենց ձեռքին, անպէս չկամեցան անաչառ լինել ու միասնակ վերաբերմունք ցոյց տալ դէպի բոլոր հատուածները: Հին սերբերի համար ստեղծեցին արտօնեալ վիճակ, մանաւանդ, հարկերի ու տուրքերի բաշխման խնդրում: Այդ երևոյթը պատճառաբանում էր նրանով, որ հին Սերբիան ուղքած է, այլ և պատերազմից շատ է տուժել: Հարկերի ու տուրքերի դրուժեամբ, որինքն, հարուստ ու բարեկեցիկ վիճակ ունեցող նոր երկիրները պիտի դաշին օգնութեան արգաստ ու համեմատաբար խղճուկ կհանգ ունեցող Սերբիային: Եւ, իրօք, վերջին տարիների ընթացքում հսկայական գումարներ են ծախսուել հին Սերբիայի շինարարական, արողջապահական, կրթական ու հաղորդակցական կարիքների վրա: Առենց միայն մէկ օրինակ՝ Չագրերն ու Բելլարդերը: 10-12 տարի առաջ Սերբիայի մայրաքաղաք Չագրերն ամէն բանով բարձր էր Բելլարդից, որը մի սովորական ասիական կեդրոտ քաղաք էր: Վերջին տասներեզու տարւայ ընթացքում միլիարդներ են ծախսուել Բելլարդի վրա, որ հիմնովին կերպարանափոխուել է և արտաբնով դարձել եւրոպական քաղաք: 1919-1932թթ. Բելլարդում կառուցւած է 4.668 շէնք՝ 15,053 բնակարաններով: Երևարարական այդ գործում իշխանութիւնը ամենաշատն նրխական արկղցութիւն է ցոյց տալիս աղպարակներով: Նախկին ծուռ ու աղտոտ փողոցների տեղ այժմ բունել են մաքուր, լայն ու խնամքով յատակած փողոցներ: Կառավարական շէնքերը մի մի ճարտարապետական կոթողներ են: Կառուցւած է համայնարանի նոր շէնք, բազմաթիւ հիւանդանոցներ, կրթական-հասարակական այլաբան հաստատութիւններ: Ընպարկանները վեր են ածւած սիրուն ծաղկանոց-գրտավայրերի:

Բելլարդի օրինակը բնորոշում է կառավարութեան վերաբերմունքը ընդհանրապէս դէպի հին Սերբիան: Մասնուող միջոցները գալիս են, գլխաւորապէս, նոր միացւած երկրներից: Բնական է, որ վերջիններիս ժողովուրդները գտգտեն: Դժգոհութիւնն առանձնապէս շեշտւած արտաբիայում է Խրաւարիայում, ուր ժողովրդին վարում էր տաղանդաւոր կազմակերպիչ, խրաւթ զինուորական կուսակցութեան նշանաւոր պարալուտի Ստեփան Ռադիչը, մի բացառիկ ընդունակութիւններով տէր, մեծ ամբողջութիւն, որի ազդեցութիւնը Խրաւարիայում տիրական էր: Սակայն, բնաւորութեամբ նա անկայուն էր, անհասարակ շիտ, որի հետևանքով տուժում էր գործը: Սկզբները նա պայքարին տեց նախաձեռն, և նա ապրում էր փրկատակահան: Որեւէ միջոցի առջև Ռադիչը կանգ բեր չէր աւնում: Նա այնի զնց մինչև իսկ Մոսկւա, յոյս ունենալով օգնութիւն ստանալ արմենիցից, բայց վերադարձաւ ձեռնուռնայն ու յուսախաբ:

Ապրելով փախտական՝ Ռադիչը մերթ ընդ մերթ գաղտնագողի գալիս էր Չագրեր Թէ՛ հասարակական-քաղաքական, և Թէ՛ անձնական գործերով: Մի այդպիսի այցելութեան ժամանակ նա ընկա ոստիկանութեան թակարդը, բանտարկեց և դատի արեց: Նրա դատավարութիւնը ահագին ալմուկ ու յուզում առաջ բերեց ողջ Խրաւարիայում: Ոստի կայն գրեթէ բոլոր խրաւթ հասարակական դէմքերը: Դժգոհութեան փութորիկը Չագրերից անցաւ դաւառները և արեկոծեց ամբողջ երկիրը:

Շարժումը սպանական էր ու վտանգաւոր: Կառավարութիւնը սթափուեց: Խորամանկ Պաշիչի թելադրութեամբ իշխանութիւնը փոխեց իր վերաբերմունքը:

Ռադիչին Թէ՛ և դատեցին, բայց անպարտ արձակեցին: Նոր Պաշիչի ներշնչումով կառավարութիւնը հաշտաբար դերք բռնեց դէպի Ռրաւիան: Ռադիչը եկաւ Բելլարդը իբր Սկոպլիչինայի (խորհրդարան) անդամ: Բայց դրանով էլ արարեցութիւնները չլաւացան: Ռադիչը պայքարը սեղափոխեց խորհրդարան: Եւ որովհետև խորհրդարանում ընդգրկուող տարրը ուժեղ էր, կառավարութիւնը անկարող էր արհամարհել և հաշիչ չտանել նրա առաջարկներն ու պահանջները: Պաշիչը մեղմացնելու և աշխատանքների համար խաղաղ մթնոլորտ ստեղծելու նպատակով Ռադիչին առաջարկեց հանրային կրթութեան նախարարի պաշտօն: Ռադիչն ընդունեց առանց վարաման և պարճենկոտ կեցածքով: Սակայն, կարճ ժամանակից յետոյ նա թողեց նախարարական աթոռը՝ առանց կարողանալու որեւէ դրկան գործ կատարել: Եւ այդ բնական էր. կառավարութեան մէջ մտնելով՝ Ռադիչը չէր կարող փոխել ընդհանուր դրութիւնը: Դատնայով խորհրդարան՝ նա վերականգ պայքար, այս անգամ աւելի կրքոտ, յաճախ այլանդակ ձեւերով:

Կացութիւնն աւելի ևս պարզ ըմբռնելու համար անհրաժեշտ է վերլուել Իւգոսլաւիայի այս ժամանակւայ ներքին քաղաքական պատկերը և կուսակցութիւնների փոխյարաբերութիւնները: Դեր կատարողները երեք խտրը կուսակցութիւններ էին — ռադիկալ, դեմոկրատ (սերբ) և զինուորական (խրաւթ): Առաջինի ղեկավարն էր հանգուցեակ Նիկոլայ Պաշիչը, որ վերջին տասնամեակներում համաբոււ էր Սերբիայի մեծագոյն քաղաքական դէմքը: Երկրի իշխանութեան ղեկը գրեթէ շարունակ նրա ձեռքն էր ոչ Թէ՛ միայն այն ժամանակ, երբ իբր վարչապետ իշխանութիւնը փաստօրէն իրեն էր ենթակայ, այլ և յաճախ պաշտօնական զիրք յուճեմած ժամանակ... Դեմոկրատների ղեկավարն էր Դուկոուիլիչը — ուսուցչապետ ու յայտնի մտաւորական: Թէ՛ խորհրդարանում և Թէ՛ դուրսը այդ երկու կուսակցութիւնները, ընդհանրապէս, մշտական պայքարի մէջ էին, բայց համբարչա էին երկիրը կառավարելու ձեւի մէջ — երկուսն էլ կողմնակից էին կենտրոնացման, որով և տարբերում էին խրաւթ զինուորական մեծ կուսակցութիւնից, որ Խրաւթիայի համար պահանջում էր լայն ինքնավարութիւն:

Խորհրդարանում այդ կուսակցութիւններից և ոչ մէկը բացարձակ մեծամասնութիւն չունէր. Թեով ևս մեծամտաբար ուժեղ էին ռադիկալները, որոնց ձեռքին էր գրեթէ միտ իշխանութիւնը: Այդ կուսակցութեան բազմաթիւ փորձերը ձեռք բերել խորհրդարանում բացարձակ մեծամասնութիւն և ունենալ կայուն ու զիչ Թէ՛ շատ յարտակ կառավարութիւն՝ անցան ապարդիւն: Տարիներ շարունակ — մինչև 1928 Թիի յեղաշրջումը — երկիրն ապրում էր կառավարական մշտայոց տաղանակներ: Խորհրդարանը դարձած էր անկերը ու անմիտ վէճերով և շափաքանց իտուր պատկեր էր ներկայացնում: Պատգամաւորները չունէին յարգանք այդ բարձր հիմնարկութեան վերաբերմամբ, իսկ միմիանց հանդէպ յաճախ սանձաբձակ էին անպատկառութեան աստիճան: Խորհրդարանի ամբիոնից անվարպահժօրէն մրտուած էին նախարարներին ամենակեղտոտ սպիարկներով: Այն ստատութիւնն էր ստացւում, որ երկրում շիտակ հասարակական գործիչ չկայ — ամենեւէ էլ գողեր, կաշառակերներ, հարտուահարիչներ, հասարակական ցեղեր էին ներկայացնում: Իշխանութիւնը անօր էր սանձահարել անպատկառութիւնը և բնականաբար, կորցնում էր իր հեղինակութիւնը ժողովրդի աչքին:

Այնքանոր թաղաւորը, նախքան յեղաշրջում կատարելը, մէկէից աւելի անգամից խորհրդարանի միջոցով փորձեր արաւ ելք գտնելու համար ստեղծւած ծանր կացութիւնից: Շարունակ խորհրդակցցում էր կուսակցութիւնների ղեկավարների հետ, համոզում նրանց համաձայնութեան եզր գտնել, կայուն կառու-

վարութիւն ստեղծել և թոյլ չտալ, որ երկիրը մնայ յարատև անդամայրոյծ վիճակում: Եւ նոյն իսկ կառավարութիւն կարգելու մանզաւտ տեց Ռադիչին, որն ամենից շատ էր արժուէի հանում խորհրդարանում: Բայց նա էլ անկարող եղաւ կառավարութիւն կարգել: Թափաճ ընդեր կորան ապարդիւն: Կառավարութիւնը միշտ տապալուելու վտանգի տակ էր և չէր կարողանում չինարար աշխատանքով զբաղել: Պետական կենտրոն գրեթէ կանգ էր առել:

Անտանէի վիճակը է՛լ աւելի ծանրացաւ 1928թ. յունիս 20ի խորհրդարանի դէպքով, որին զո՛ւ զնացին երեք պատգամաւորներ: Տաքացած մթնոլորտում, երբ շատերի շնորք ծայր աստիճան լարած էին, ամբիոն է բարձրանում սեւարեցի մի ուղեկալ պատգամաւոր և սկսում է խօսել: Ընդդիմադիրները շարքերից սկսում են տեղալ վիրաւորական բացառանշութիւներ: Տաք պոլուս սեւարեցին ամբիոնից պահանջում է որ՝ կամ յետ վերջնէն վիրաւորանքները կամ ապացուցանեն իր յանցանքները, սպտանայով հակառակ պարագայում իր ձեռքով տեսնել դատաստանը: Պատասխանը լինում է նոր վիրաւորանքներ: Անկարող այլ ևս ինչդիւրը զըսպելու՝ սեւարեցին հանում է ատրճանակը, ուղղում ընդդիմադիրներին կողմը և պարզում մի քանի անգամ: Այդ խելագար վարմունքին զո՛ւ են գնում երեք յայտնի դէպքեր, երեքն էլ խրաւթ, որոնցից Ռադիչը ստանում է մահացու վէրքեր:

Այս զարհուրելի դէպքից յետոյ երկրի գրութիւնը աւելի ևս ծանրացաւ: Ռադիչը իր գաղափարակիցներով քաշուցին Չարբեր և մանաղից յայտարարեցին թէ՛ այլ ևս անհնար է գործակից սերբերի հետ, թէ՛ ստեղծած կազմութիւնից կայ միայն մի ելք — բաժանում: Խըրաթիան պէտք է ունենայ լայն ինքնավարութիւն, ըստ անհնային անկախ. սերբերը հետ միացնող միակ կապը՝ պէտք է լինի թաղաւորը: Ռադիչի մահը աւելի ևս խորացրեց երկու ժողովուրդների միջև բացած վիճը: Գիւղայրական կուսակցութեան նոր դեկլարացի՝ Մաչէկ, անվերապատօրէն ընդգրկեց Ռադիչի քաղաքականութիւնը: Թէ՛ իր հրատարակային զեկուցումների ամենամակ և թէ՛ թնրթեթի միջոցով նա բայմաթիւ անգամներ արտայայտեց այն իմաստով, որ խրաւթներն ու սերբերը միասին ապրել չեն կարող, որովհետեւ տրամազօրէն տարբեր ձգտումներ ունեն և Խրաւթիան անհրաժեշտաբար պէտք է բաժանուի Սերբիայից: Մաչէկը և խրաւթների միւս պարագլուխները անդադար չըջում էին երկրում և զբոլոսմ ժողովուրդը Բելգրադի գէմ: Սպանախիլքը գնալով աճում էր. տրամադրութիւնները լարուում, մարդիկ ջղախնամու ու յարմուում: Մի պահ երկրի բաժանումն ու քաղաքացիական պատերազմը թւում էր անխուսափելի: Երկիրն սպրում էր մղձաւանջի օրեր:

Այսպիսի պայմաններում ահա տեղի ունեցաւ Ալեքսանդր Թաղաւորի սարքած կենտական յեղաշրջումը: Գրչի մի հարւածով նա վերացրեց խորհրդարանական կազմերը և տեղը զրեց միապետական իշխանութիւն: Վերացան ըսրը աշատութիւնները, արդեւեցին քաղաքական կուսակցութիւնները, մամուլն անւեց խիստ սակոյրութեան տակ, նախարարները պատասխանատու յաշտարուցեցին միայն Թաղաւորի ստալը: Մի խօսքով, հաստատուեց անձնական դիկտատորութիւն:

Արտասահմանի ձախողոյթեան մամուլը անվերապատօրէն դատապարտեց Ալեքսանդր Թաղաւորի վարմունքը: Ոմանք յայտարարեցին նրան հիւանդ և տեղի ունեցած փոփոխութիւնը վերադրեցին գլխուրական ընթաց շրջանների քահանայերին: Գչերը, որոնց թւում և Կերենսկին, Իւզոսյաւիտում կատարած յեղաշրջումը համարեցին անխուսափելի՝ երկրի ամբողջութիւնը փրկելու տեսակէտից:

1929 թւի յունիս 1ին Ալեքսանդր Թաղաւորի ստորագրած հրովարտակը, որով փոխուում էր կառավարական ձևը, ժողովրդի և հասարակական լայն խաւերի

համար բոլորովին անակնկալ էր: Բայց հետագայ դէպքերը եկան վկայելու, որ յեղաշրջումը միայն Թաղաւորի անձնական գործը չէր: Չնայած որ նոր կազմերով, ըսրը քաղաքական կուսակցութիւնները լուծւած էին համարւում, ուղղիկներին և դեմոկրատներին պարագլուխներէջ շատերը մտան Թաղաւորի կամքով կազմած կառավարութեան մէջ: Նշանակում է, որ Թաղաւորը յեղաշրջումը յրացել էր նրանց հետ համախորհուրդ: Ժողովրդական լայն զանգուաններն էլ նոր կարգերի հաստատունն ընդհանրապէս ընդունեցին զո՛ւ անակութեամբ: Եղաշրջում կատարողները քա՛ծանօթ էին ժողովրդի արմատութեան ու մտան իրենց արածի յաղոցութեան: Կատարած յեղաշրջման դէմ էին միայն փոքրթիւ մտաւորականներ, և, ի հարկէ, Ռադիչի քաղափարակիցները: Սակայն, նրանց զժգո՛ւնութիւններն էլ կենտրում շարտայայտեցին:

Գիկտատորական կարգերը Իւզոսյաւիտում աւելի քան երկու տարալ կենսք ունեցան: Հասա՞ն իրենց նպատակին այդ կարգերի հեղինակները, այսինքն՝ երկրի ամբողջութեանը այլ ևս մտանգ չի՞ պատանել, վերացւած են զժգո՛ւնութեան պատանակը:

Գիկտատորութեան շրջանում պետական մեքենան լարւած աշխատում էր՝ շանայով ժողովրդի մէջ գարթեցնելու ազգային ոգի և համակի նրան երկրի ամբողջութեան գաղափարով: Այդ նպատակով տեղի ունեցան վարչական մեծ փոփոխութիւններ, վերացաւ պետութեան նախկին տնօրէ՛ Սերբ, Խրաւթ, Սլովակներ և տեղը ունեց նորը՝ Իւզոսյաւիտ: Բայց ոչինչ արեց այն ուղղութեամբ, որ ջիշ շատ բաւարարութիւն տրէ՛ր իւրաթ ժողովրդի քաղաքական ձգտումներին: Խստութեամբ ժամանակի բարձ տարածութեան վրա հնարաւոր եղաւ զսպած պահել այդ ժողովրդին. բայց շատ կասկածելի է այն լուծիւնը, որին դատապարտում է իւրաթ ժողովուրդը: Այն ժամանակ, երբ նա արատ էր իր մտքերն ու ձգտումները հրատարակով արտայայտելու, շատ յստակ կերպով մեակելուց իր ձգտումները: Այժմ նրան զրկեցին արատ արտայայտելու իրատունքից՝ խոտանալով փոխարէնը ստեղծել երկրի համար զժգո՛ւնութիւնները վերացնող կարգեր: Ալեքսանդր Թաղաւորը իր հրովարտակը խոտանում էր վերադառնալ խորհրդարանական կարգերին, հէնց որ պայմանները թոյլ տան, այսինքն՝ էրը յաջողի գլխատանելի ու կալուն կարգեր հաստատել: Եւ ահա ամիսներ արած նա փորձ արաւ վերականգնելու խորհրդարանական կարգերը: Երբեք կենսքը կուչեց Սկուպչիւնան, թէ՛ ևս անձնական իրատունքներով: Միապետի այս վարմունքը հասկանալի էր: Առաջին քայլն էր դէպի իր իրատունքների կրճատումը: Կասկած չկայ, որ այդ առաջին քայլին հետեւելու է երկրորդը և երկրորդը կառավարելու է սահմանադրութեան հիման վրա: Բնօրո՛ւ է, որ իշխանութիւնը կատարում է հրովարտակի խոտանում. առկ է թէ՛ նրա կարծիքով այժմ երկրի ամբողջութեան ներքին վտանգ չի պատանել: Մտապալ տարիները ցոյց իր տան, թէ՛ որքան իրաւունք է նրա այդ լուսատեսութիւնը: Արդէն իսկ շուրջներ կան, որ իշխանութեան դարձը դէպի խորհրդարանական կարգերը Թաղաւոր է դրախ: Իւզոսյաւիտան, ինչպէս և ըսրը փոքր է աղքատ պետութիւնները, կախում ունի մեծ պետութիւններից: Այս վերջինների ազդեցութեան են վերաբարւում և Ալեքսանդր Թաղաւորի դարձը դէպի սահմանադրութիւն ևս Սկուպչիւնան:

Այսպէս է ներքին վիճակը Իւզոսյաւիտի, որ Բալկանների ու նաև Եւրոպայի հասարակաւորութիւնը պայմանաւորող կարևոր գործօններից մէկն է: Մենք զեւ չենք իտոսած նրա միջազգային դերի, հարեանները չեն ունեցած յարաբերութիւնների ու մասնաւորապէս սերբ-իտալական և սերբ-բուլղարական վէճերի կամ մակեդոնական խնդրի մասին, որոնք նոյնպէս շատ հետու են զոհացուցիչ լինելուց:

Ա. ԱՍՏ.

# Թ ՈՒՐ Ք Ի Ո Յ Շ ՈՒՐ Ջ

«1922 օգոստ. 31ը թուրքերի»՝ արտադրութեան օրն էր. 1932 սեպտ. 26ը թուրքերէնի արտադրութեան օրը պիտի ըլլայ»:

Այսպէս կարտայայտէր թուրք հրապարակազիր-գրադէտ մը, Յայրէ Րըֆօր, ողունձելով Տօլմա Պաղչէի պալատին լեղական համադրումը, որ քացեցատ Անպտ. 26ին:

Արգարե, անօրինակ ցոյցեր կտարուեցան այդ համադրումարին առթիւ, որ Մ. Բէմալի նորադոյն գիւտն էր, թուրքին աղային գիտակցութիւնն ու եսասիրութիւնը հրահրլու համար, թօթափելով ամէն օտար աղկեղութիւն:

Ամէն ինչ թուրքին համար, ամէն ինչ թուրքերէն, — ահա օրան աղանշանը: Եւ հարկ եղաւ իրար խառնել խեղճապակութիւնն ու լուրջ գիտութիւնը, սուտն ու իրաւը, գիտականն ու տգիտականը, ապացուցանելու համար թէ... թուրքն է բոլոր քաղաքակրթութեանց հիմնադիրը, իսկ թուրքերէնը՝ առաջին լեզուն քաղաքակրթութեան:

Այս նակարին վրա եւս փայլեցան հինգ—վեց հասիւր, քայք մասնաւորապէս երեք հարստիք շողորթներ, թուրքին երաղէն շանցած փառքեր վերագրելու համար անոր: Մէկը Բուպրթ քոլճէն փտարած փախուղ մը, միւս երկուքը՝ տարիքէն թէ միջավայրէն թեթեցած հայրտներ, որոնք ծաղրանքի արժանացան բուն իսկ թուրքերն կողմէ, ժողովին մէջ և ժողովէն դուրս:

Երեքն ալ, տարբեր մեկնակէտներէ ճամբայ ելած, ուղեցին ապացուցանել թէ թուրքն ու թուրքերէնը յառաջապահն եղած են մարդկին քաղաքակրթութեան, տակաւին չորս—հինգ հազար տարի առաջ: Մէկը առջ ու ձեռք շարժելով, մինչև Արիաստան սյանայով, նմանաձայն տառեր իրարու հետ քաղդատելով, այնքան յառաջ գնաց որ, առաջարկեց հնդեհրոպական լեզուները քաջարութիւնը փոխել «թուրք-եւրոպական»-ի, իսկ Միջերկրականը կոչել «թուրք Տէնդի» (Քրքական ծով): Ուրիշ մը, թուրքերէնի վարժապետ մը, որ կրցած է յարմարել թրքական բոլոր ոգժիմներուն, փտարանական տողեր ձօնելով Համիտի ինչպէս Մ. Բէմալի, պատմեց թէ ծեծ կերած է ո՛ր և է օտար լեզու սորվելու համար, քայք թուրքերէնէ, «որ աշխարհի ամենէն դուրին և ամենէն հարուստ լեզուն է»: Եւ ինչպիսիքն էր, «չարտասուս փղձկելով», ուղեց համբուրել Մ. Բէմալի ձեռքերը: Որովհետեւ, այդպէս կը թելադրէր ներքին ձայն մը... ոտանաւոր: Իսկ բուն «մասնագէտը» — Բուպրթ Բոլճէն փախուղը կամ փախտականը — իր կարգացած կամ լրացած նախնական դիտելիքներն իրարու պոչիկ աղկելով, «հաստատեց» թէ թուրքերէնը հնդեհրոպական ծագում ունի, և աւելի հին է քան ծանօթ լեզուները:

Թողիք այն է որ, թուրքերուն մէջ ալ չեն պակասեր դիտանականներ կամ լուրջ մարդիկ: Անոնք, որքան ալ քնադարար հանձնք գրային իրրև թուրք, չէին կրնար ծածկել թէ՛ կը դանւելն երկակնեցող դերասաններու առջև: «Ճիւղհուրիթ» նոյն իսկ երգիծանք մը հրատարակեց, մէկուս ճառը նմանցնելով Օսմ. Սահմանադրութեան չրջանի արտասանած փտարանութեանց: «Կարծեցինք թէ վերաբարձեր են Սահմանադրութեան օրերը...»:

Թեկատակութեան ուրիշ տեսարաններ ալ պակաս չեղան համադրումարին մէջ, որ կը կուչէր «թուրքու-

թայ», նախապատմական թուրքերէնով: Երկու հազար հոգի ներկայ էին առաջին ժողովին, Մ. Բէմալէն, իր պաշտօնատարներէն, մասնագէտներէ, գրադէտներէ, հրապարակագիրներէ մինչև յատկապէս բերած գիւղացիներ և «պահճիներ»:

Համադրումարին կազմակերպիչները ամէն միջոց խորհած էին, որպէսզի ժողովը ոչ միայն դառնայ պատկանելի և քաղմամարդ, այլ և խօսի բոլորի սրտին:

Արգարե, «Թուրքութայ»ը շատ կը նմանէր թատերական ներկայացման մը, որ տեւեց մէկ շաբաթ և ուր լրջութիւնը յաճախ դիտելու կը նահանջէր ամբոխափարութեան առջև: Չէ՛ որ լեզուական բարեբըլում ալ յեղափոխութիւն հռչակած էր. հետևաբար անոնք որ կը վարանէին կամ կը հակահաւուէին, պիտի դառնային հակալեղափոխականս՝ նոյն իսկ առաջարկներ եղան դատի յանձնելու ընդդիմագիրները: Ճիշտ այնպէս ինչպէս Փէս գնողները կամ արարատառ թուրքերէն գրողները:

Անկախաբար՝ իր գաւեռտական և սարքովի դրուագներէն, թուրք լեզուական համադրումարը ունի մեծ նշանակութիւն՝ քանի մը տեսակէտներով:

Չեռնարկ մըն է ան՝ պոտու, պայծառացնելու, ճոխացնելու թուրքերէնը: Չայն վերածելու ինքնօրէն և ինքնաբաւ լեզուի մը, ապտաղելով ոչ միայն արաբերէնի և պարսկերէնի լուծէն, այլ և արբունի—պայտական սեթեթէն և «օսմաներէն»ի խառնեղանակէն:

Արգարե, այս առթիւ շեշտեցաւ նոր նշանախօսք մը — Մենք օսմանցիները չենք, այլ թուրքեր: Մեր լեզուն օսմաներէն չէ, այլ թուրքերէն: Մեր պատմութիւնը Կազի Օսմանէն շնկալի, այլ անկէ հազարաւոր տարիներ առաջ: Կազի Օսմանը փակադիծ մըն էր, և Մ. Բէմալը եկաւ փակեց այդ միջանկնայ չրջանը:

— «Մենք քմայականներն ո՛րեք անչուրթիւն չուրինք Օսմանցիներուն հետ որոնց պատմութեան վերջին էջը կը փակի հաս»: (Ճիւղհուրիթ):

Ուրեմն, թէ լեզուական և թէ ցեղային գտում: Արդէն, լեզուական համադրումարէն շատ առաջ, Մ. Բէմալ «արբարդեց» տաւ թուրքերի պատմութիւնը, ձգտելով ապացուցանել թէ թուրքերը մոնղոլիան ծագում չունին այլ արիական: Բուպրթ Բոլճէն արձակած «փորձեցէնոր» ալ վարձու փտարաններ անդիսացաւ այս տեսակէտին:

Բոլորը ինչ որ կը կատարէ 1922էն, և մասնաւոր 1928էն ի վեր (տառերու փոփոխութիւն), մաս կը կապմէ ընդհանուր ծրարքի մը, — Գանդել բոլոր այն դիտելիքներն ու կապակցները որ երկրորդական դիմ գրաւ կը պահէին թուրքը, և յուսաւոր, փտաւոր պատւանդանի մը վրա նստեցնելով զայն, մզել դէպի նոր յաղթանակներ:

Վերջապէս ինչ որ ծրարքի էին, դործադրեցին արականեան հրահանգներով և ի հարկին կախադանով: Երկրին քաղաքական, ընկերային և տնտեսական գապանակը յանձնած է նոր միտքերու և ձեռքերու: Իշխանաստատ հսկողութիւն մը թոյլ չի տար շեղումներ կատարել: Պետական մեքենայէն մինչև մամուլն ու չպրոցը պաշտօն ունին նոր կարգ ու սարքին վարժեցնելու ամբողջ:

Յւ ահա լեզուական բարեփոխումը, իրրև լրացուցիլ: Կարելի էր ըսել իսկական յեղափոխութիւն: Որովհետեւ, չափազանց արմատական է ծրարութեան փո-

փոխութիւնը, և շրջապատուած՝ անյաղթելի դժարութիւններով:

Կարելի է մէկ հրահանգով Ֆէսը նետել կամ տաները փոխել, բայց լեզուն իր ընակած օրէնքներն ունի, որոնք չեն նպաստելի որ' և է թմայրի կամ արհեստական կարգադրութեան: Թուրքերէնը իսկապէս շատ աղքատ է թէ բառաձեւերով և թէ շարադրութեամբ: Համագումարին մէջ, գրադէմ մը զիտել կուտար թէ Լատուր 92,000 բառ ունի, իսկ թուրքերէն ամենէն հարուստ բառարանը՝ Հազի 35-40,000: «Ռուբան», 50 Հազար բառ կը պահար, որպէսզի կարենանք արտասայտելու եւրոպական լեզու մը պէտք:

Այս առթիւ ալ, գգոյշ, բայց բաւական լուրջ ընդհարում մը տեղի ունեցաւ Հինբրուն և Նորբրուն, աւելի ճիշտ՝ Հասուն միտքերու և ոստոստուն խամաճիկներու միջև:

Այսպէս, Հիւսէյին Ճահիտ պէյ, որ ամբողջ սերունդ մը ունի իր ետին, իբրև ուսուցիչ, գրագէտ և հրատարակաւոր, և որ ըստի հանգստեան կոչուած է Մ. Քէմալի հրամանով, համարժակեցաւ կարգ մը գիտադրութիւններ յայտնել, սեծ արժուէկ յարուցանելով: Իր կարծիքով, մարդկային ուժէն վեր է փոխել լեզու մը ընակած օրէնքները: Պէտք է աշխատել որ թուրքերէնը զարգանայ և կարենայ արտայայտել զազգապահութեան բոլոր սրահանջները: Պէտք է արագացնել զարգացման ընթացքը, բայց խուսափել ծայրայեղութիւններէ:

Կարժէ ամփոփել իր միտքերը, որոնք որոշ գաղափար կուտան մղած պաշարին վրա: Մանաւանդ որ, անոնք միեւնոյն ստեղծուող բոլոր մըն են զանազան ճեղքներով և ստուգարանութիւններով ապացուցուած... խեղհատակութեանց դէմ, որոնց առաջին մրցանակը շահեցան Հայ ժամանակագիրները:

Հիւսէյին Ճահիտ ըսաւ.

«Գիտական խնդիր է քննել մեր լեզուն ծագումը, անոր զանազան բարբառները և եւրոպական լեզուներու հետ ունեցած կապը: Թուրքերու մէջ երեցած կարգ մը գրութիւններէ այնչափ կը հասկնամ թէ մտական կարևորութիւն կը տրուի երևութեան նմանութիւններու: Մէկ լեզուն միտին անցած առեւ, մայրերը կը փոխուին համաձայն որոշ կանոններու: Երևութեան իրարու չնմանող բառեր կրնան ծագած ըլլալ նոյն արմատէն: Իրարու հետ կապ չունեցող բառերն ալ կրնան իրարու նմանիլ: Պէտք է գգոյշ ըլլալ խարտակի նմանութիւններու հանդէպ»:

Անցնելով ըստ հարցին, հանդուցեալ «Թանին»ի խմբագրապետ յայտարարեց.

«Թրքական արմատէն չբխող բոլոր բառերը նետուելու ծայրայեղութիւն է: Բայց, թուրք լեզուն մէջ նոր բառ մը մտնելու պէս չեղանկ կը փճանայ պողտայն ալ հակառակ կողմէն ծայրայեղութիւն մըն է: Լեզուն չի կրնար թմահանձորի ենթակրելի:

Ես թէ մը շատ կը գտնեն զանգատը որ կը բարձրանայ մեր լեզուի մէջ գտնուող օտար բառերուն դէմ: Որովհետև անոնք արևմտական իերպով չէ որ կը մտնեն, այլ ընական պահանջով մը հետեանցով: 20-25 տարի առաջ մեր գործածած արաբական և պարսկական բառերը այլ և չենք գործածեր: Այդ բառերը ո՛չ ակադեմիք մը որոշումով դարձուցան, ոչ ալ պատմական օրէնքին մէկ յուշածովը:

Այո՛ր, կարելի եղածին չափ հարգապատ թուրքերէն գրենք, բայց մեր գրութիւնները թող հոսին մեր գլըրէն, պարզութեան հոսանքը թող անգիտակից վիճակէ մը զայն, և ո՛չ թէ այն տպաւորութիւնը տրուի թէ գրածները լի վերջոյ սրբաբարձ են: Մեր լեզուի գանազան բարբառներուն համար ալ կանոնաւոր բառարան մը չինենք և չթողունք որ աւելորդ բառերը մուտք գտնեն մեր լեզուն մէջ:

Ժամանակին եթէ քայլարէի (առևտանկ) փոխարէն աչկուել բառը գործածէինք, ազէկ կըլլար: Բայց

քայլարէ բառը այսօր մինչև դիւզերը մտած է: Թայլարը արաբերէն ալ ըլլալ, քայլարէն թուրքերէն է. ունինք արաբերէն այնպիսի բառեր որք Արաբները չեն հասկնար: Այսօր թուրքին թուրքը ըսելու համար, 200 Հազար տարւան ճիւղադրութիւն չենք պահանջեր անկէ:

Կը փափաքենք նաև լեզուն հասկնալի դարձնել զանգամներու մեծամասնութեան: Բայց գրական և խօսակցութեան լեզուն այսօր շատ տարբեր չեն իրարմէ: Գրական լեզուն ամէն տեղ միշտ թիւ մը պահպանողական է, իսկ ընթացիկ լեզուն՝ թէ մը տեղափոխուի: Օրինակ, անոնք որ քախիսի անալը (ախախտանքի բաժանում) չեն հասկնար, ի՞նչ կը հասկնան անոր տեղ գործածուող իշ պէյլիսիս բացատրութեանէ: Պէտք է ժողովուրդը այն աստիճանին բերել որ հասկնայ իր կարգացածը: այլապէս բնաւ չենք կրնար հասնել մեր նպատակին:

Մեր քերականութիւնէն կը զանգատին: Այսպէս զանգատել, կը նշանակէ չհասկնալ լեզունէն էութիւնը: Ազգի մը քերականութիւնը այդ ազգին մտածումի մեկն արտադրութիւնն է: Ինչպէս որ չենք կրնար մեր գլուխը (գափա) փոխել, նոյնպէս ալ չենք կրնար մեր քերականութիւնը փոխել:

Ֆրանսերէնը, որ ամենէն ճոխ լեզուններէն մէկն է, այսօր գեղարարէնի չափ չի կրնար փոխադարձութեան և ընդհանրութեան լեզու մը ըլլալ: Մենք մեզ ընդունինք այնպէս, ինչպէս ստեղծուած ենք:

Մեր լեզուն չէ բանաւ: Բացատրութիւններու գործին լուծումը ժամանակին թողունք: Եթէ հնար է, բացատրութիւնները գտնենք, այլապէս լատինականները և ճելլէնականները ընդունինք: Ամէն գնով պէտք է դիտական սապակէզը բանալ մեր լեզուն առջև:

Ասիկէ զատ պէտք է համապատասխան բառեր գտնենք զազգապահութիւն լեզուներու բառերուն: Տակաւին թուրքերէն բառարան կուզենք, քերականութիւն կուզենք, մեր տառերուն մէջ մանր-մունր փոփոխութիւններ: կուզենք:

Թուրքերէնի ծագման մասին դիտական քննութիւններ պէտք են և այս գործին համար դիտական մարմին մը կազմելու է: Բացատրութիւններուն վերջնական հանգամանք տալու է և բառերը ամբողջացնելու է: Թուրքերէն քերականութիւնը անընդունակ չէ, բառերը թերի են: Գրական և ընթացիկ լեզուներուն մէջ տարբերութիւն չկայ: Լեզուն ինքնարբարար դէպի պարզութիւն կերթայ: Որ և է մարմին չի կրնար ստանձնել լեզուն մէջ բուն թուրքերէն բառեր գնելու գործը: Ասիկա անձնական, աւելի ճիշտը անանձնական բան մը կըլլայ»:

Ինչպէս ըսինք, ամբողջարական կիրքը չհանուածոց այս դիտողութիւններուն, և քանի չափ ժողովականներ խօսք առին, պատասխանելու համար: Բոլորին ըսածն ալ մէկ իմաստ ունի:

— Մենք որոշած ենք լեզուի մէջ ալ յեղափոխական ըլլալ, ոչ թէ բարեշրջական: Անոնք որ չեն հաւատար, թող մէկըի զախին: Այլ ևս թուրք լեզուն մէջ ալ հանապազօտութիւն հուշակամ է... Նոր տարեներու յեղաշրջումը կրնա՞ր կատարուի ընական օրէնքով: Եճօի ինդրին մէջ ի՞նչպէս կրնայինք բարեշրջուի: Անոնք թովէն ծի՞լ մը պիտի կարէինք: Հասիտուն գաղող մը կրնա՞ր ինքնաշարժով գաղողէն առաջ անցնիլ... Հանապազօտութեան շրջանին չի կրնար գոյութիւն ունենալ գրական անկախութիւն...:

Մէկ չարաթեան ճառերուն, ցոյցերուն և ժխորին արդիւնքն եղաւ կազմել թուրք լեզուի բարեփոխման ընկերակցութիւնը, որ սիտի կատարէ հետեւեալ նշխարանքները.—

- 1. Թուրք լեզուն դարձնել ազգային մշակույթը կատարելապէս արտայայտելու միջոց մը և կատարելագործել այն աստիճան որ պատշաճի արդի յեղափոխութեան պահանջներուն:
- 2. Այս նպատակով, գրաւոր լեզուն վտարի բոլոր

այն տարրերը որ օտար են թուրքերին, վերջ տալ երկուստեան: Մէկ խօսքով ստեղծել յեզու մը, որուն էակամ մասերը ըլլամ գուտ թուրքերին:

3. Գլուխ համելու համար այս գործը՝

Ա. Պատրաստել թուրքերէնի բառարան մը, բնդարձակ ծրագրով աւսումնասիրութիւններ կատարել ետքը: Ուսումնասիրել գրայագիրները և ժողովրդական բարբառը, պատրաստել նաև բառարան մը՝ որ պարունակէ այժմ խօսող գաւառապարտաներու բառերը:

Բ. Կազմել թուրքերէնի ֆերականութիւնը և շատաձայնութիւնը, մէշտեղ համելով թուրք լեզուն կերտող կանանները:

Գ. Որոշապէս հաստատել գիտական լեզուն բառացանկը, արևմտեան որ և է լեզուի հաւատարմ առտիճանով, որոշ, յստակ, վճիռ կերպով մը, այնպէս որ կարենայ բացատրել արևմտեան լեզուներով արտասայուած անձեմ գրքնի գաղափարները:

Դ. Այս աշխատութիւնները կատարել, շնորհակալ կարելի եղածին չափ թելգծել և ներդաշնակ լեզու մը յառաջ բերելու սկզբունքը:

Այս բոլորը գլուխ հանելու համար, եղած-չեղած ուժերը չարժման մէջ պիտի գրւին, որպէսզի բառեր և

ասացածքներ հասլեան դիւղերու և քաղաքներու մէջ:

Արդէն իսկ, շատ մը գաւառական թերթեր սկսած են իբրև թէ գուտ թուրքերէն բառեր տողովէ տողովուրդի բերնէն: Միև կողմէ, անոնք որ հակառակ են այս «յեղափոխական» ձեւնարկին, անձոնի նախադասութիւններ կը շինեն նորագիտ բառերով, և կը ծագրեն նոր լեզուն: Այն աստիճան որ, էնկիւրիի պաշտօնաթերթը կատողած՝ կը պահանջէ «գաղափարի ոստիկանութիւն մը» հաստատել: Այսպէս, «բարեկէ» քառնի տեղ սկսեր են դործածել՝ «գաղափարաբան» (ցիցը անցնել): «Տնօրէն» տեղ՝ «էջ պէճէրէն»: Ուրեմն, էթէ ուզես ըսել, — «Միտուր պէջ, նոր սղայարբան» (Տնօրէն պէջ, կը բարեկեմ ձեզ), սիթ թուրքերէնով պիտի ըսէ —

— Ի՞նչ պէճերն պէջ, սիթ գաղափարը . . .

Եւ զեռ ի՞նչ թրքավարի գիտեր, որոնց հեղինակներուն զէմ դատ կը պահանջէ թէժախակն մատուլը: Իսկպէս կարժէ անկախութեան դատարան մըն ալ այս առթիւ հաստատել: Մանաւանդ որ, լայն ասպարէզ պիտի բացի լրտեսներու համար, ոչ-թուրքերու զէմ, որոնց մասին անկարկներ չեն պակսեր նոյն իսկ այս խեղդատակութեան առթիւ . . .

## Կ Ա Ր Մ Ի Բ Գ Ծ Ի Յ Ն Ե Ր Ա

Սեպտ. 28 — Հոկտ. 2ին Մոսկուայում գումարեց շամ. Կոմ. Կուսակցութեան պիճնումը՝ ընդհանուր ժողովը, որ շինց խորհրդային առևտրի, լայն սպառման յասկացում ապրանքների արտադրութեան և սև մետաղադործութեան զարգացման հարցերը: Եւ բանաձեւերով մանրամասնօրէն զօցց այն ուղիները, որոնցով ընթանալու են արդիւնարբութեան այդ ճիւղերը:

Սեպտեմբերեան պիճնումի դերը, սակայն, անտեսականից աւելի կուսակցական խնդիրների և առաջին հերթին, Ստալինի միահնձանութեան զէմ կազմած դաւադրութեան մերկացման մէջ էր: Վերստուգել Յանձնատնօրդի Հոկտ. 9ի որոշումից իմացուած է, որ Ռորհրդային Միութեան մի շարք վարչերում, Կոմկուսի ծոցում, գոյութիւն է ունեցել գաղտնի մի խմբաւորում, որը ճայլատարած և կոմունիստական ու խորհրդային իշխանութեան թշնամի դարձած, դաւաճանելով կուսակցութեան ու բանուր դատակարգին», «սիրտնէ է ստեղծել թուրքուսկան-կուրախային զայտնի մի կազմակարգութեան «մարտ-լինիներ» կեղծ դրօշի տակ, Ռորհրդ. Միութեան սահմաններում գրամատիրութիւնը և, ի մասնաւորի, կուրախութիւնը վերականգնելու նպատակով: Այդ խմբաւորում հիմնադրող ու ղեկավար են եղել վերջերս Կոմկուսից հեռացած Ռիւտիլը, կոմունիստներ Գալկինը, Իլյանովը և ուրիշներ: Ռոմբաւորման գոյութեան մասին տեղեակ են եղել նաև Զինովիեն և Կամենեւը, բայց իմաց չեն աւել իշխանութեան:

Ըստ երևոյթի, այս խմբաւորումը տարածւած է եղել երկրի գանազան կողմերում և համակրանք վայելել գիւղացիութեան ու բանուրութեան մէջ: Ստալինն իր կուսակիցներով յայտնաբարձրով նրա գոյութիւնը վճռական միջոցներ ձեռք առին և Կոմկուսի ծոցից արտաքսեցին բոլոր կասկածելիներին, ի թիւս որոնց և Լենինի գործակից, խորհրդային իշխանութեան հիմնադրող ակաւաւոր կոմունիստ պարագլուխներ Զինովիեն և Կամենեւն:

Պատահաճ որ այնքան ծանրակշիւ էր, որ, ինչպէս ասացինք, պիճնումի միև բոլոր խնդիրներն անցան երկրորդական դի վրա: Սեպտեմբերեան պիճնումն

այսուհետև յայտնի է լինելու «Ռիւտիլի խմբակ»ի վտարումով և մի աւելորդ անդամ ցուցադրում է Կոմկուսի ներքին փոստակութիւնը:

Անցեալ տասնչլանում Ռորհրդ. Միութեան սահմաններում կատարած նշանաւոր զէպերից պէտք է արձանագրել և Մալխով Գորկու գրական գործունէութեան Կոմսայ յոբելանը, որ կատարեց աննախընթաց շնորհութեան: Երբեք, ո՛չ մի գրող չէր արթնացել այնպիսի պատրիսներ, որպիսին ջոյց տարեց Ստալինի և Զեկայի ջատագով պարագլուխ:

Աչքառու երևոյթ է և Գնեպրոգուի մեծ էյեկտրականի բացումը, որ նոյնպէս տունեցա մեծազմուկ հանդիսաւորութեամբ: Իննպրոգէսը ներկայացում է որպէս խորհրդանշան բոլշևիկեան շինարարութեան յաղթանակ:

Իսկ միև կողմից, անտեսական քայքայումը, հաղորդակցութեան միջոցների խանգարումը, դրամի արժէքի անկումը, սովը, ժողովրդական դժգոհութիւնները որ օրի վրա սաստկանում են: Իր գոյութեան 15ամեակի նախօրեակին խորհրդային իշխանութիւնը կանգնած է անտեսական բացառիկ տազնապի առաջ:

Անցնելով Անդրկովկաս՝ ստանլին հերթին պէտք է կանգ առնել Կամկոմկուսի պիճնումի արձանագրերի և տեղական Կոմկուսների ընդհանուր ժողովների վրա:

Հոկտ. 16ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ Անդրկովկասի երկրային Կոմիտէի ճորք ընճ. ժողովը, որ որոշեց պաշտօնից արձակել Անդր. երկր. Կոմիտէի քարտուղար Մամիա Օրախելաշվիլուն, Անդր. երկր. Կոմիտէի Բիւրօ անդամութիւնից՝ Նոյն Օրախելաշվիլուն, Բունիա-Ջապէնը և Կուրախովին, և քարտուղար նշանակեց Բերխային, որ միաժամանակ պիտի մնայ և Վրաստանի Կոմկուսի քարտուղար: Անդր. երկր. Կոմիտէի անդամ նշանակեց Վլանիճէնը, Բիւրօի կազմի մէջ մտցրեց Անդրաշվիլուն ու Բաղիրովին և Բիւրօի անդամութեան թիկնածու՝ Վլանիճէնը: Այլ և Անդր. երկր. Կոմիտէի երկրորդ քարտուղարութեան պաշտօնում հաստատեց Մէլէրգոնին՝ նախօրք մտցնելով Անդր. երկր. Կոմիտէի կազմի մէջ:

Երեք օր յետոյ, Հոկտ. 19-20ին զումարեց Վրաստանի Կովկասի Կենտր. Կոմիտէի ընդհ. ժողովը, որ « խաղաղամտութեամբ » ողորմելով Համկովկասի Կենտրոնի պինձումէր որոշումները՝ պաշտօնից հեռացրեց Վրաստանի Կովկասի երկրորդ քարտուղար Մելամէիսն և տեղը նշանակեց ԱղիսիաՎիլուն:

Հոկտ. 20ին տեղի ունեցաւ Ագրքէշանի Կովկասի Կենտր. Կոմիտէի ընդհանուր ժողովը, որ նոյնպէս « խաղաղամտութեամբ » յսեց Համկովկասի Կ. Կ.-ի պինձումի որոշումները և Ագրքէշանի Կովկասի Ռեբրիկաճից հեռացնելով Բուժնիսթ-Չաղէիսն՝ տեղը պաշտօնի կոչեց Բաղրիովիսն՝ նշանակելով նրան և Կենտր. Կոմիտէի անդամ: Բուժնիսթ-Չաղէի հեռացեց և Ագրքէշանի ժողովմտորհի նախագահի պաշտօնից և տեղը զրեց Բաղրիովիսն:

Հայկովկասի Կենտր. Կոմիտէի ընդհանուր ժողովի մասին կը խօսենք քիչ վարը:

Այս բոլոր հեռացումներն ու նշանակումները կատարուեցին Մոսկուայից տրամ Հրամանով, աւանց նոյն իսկ օրինական արտաքին ձևը պահելու, վարչական կարգով: Ինչ պատճառով ՕրախնայՎիլիի ու Բուժնիսթ-Չաղէի պէս հին ու փորձած, սկսեալուր բոլոր լեկիներ զուեցին պաշտօնից և տեղը նշանակեցին Բերիայի կամ Մէլէրդնիի պէս աննշան մարդիկ, խորհրդային մամուլը զեռ. չի բացատրում, բայց, անշուշտ, բացատրելու էլ կարիք չկայ: Մտայինն և հակառակորդն պայքարը կենտրոնում, Ռիւսիին զգաւր, Կամեռնի ու Չինովիսնի վտարումը, հնգամակի փլուզումը — ահա այն պատճառները, որոնց իրեն հետեանք դերերի նոր բաշխում է կատարուել և Անդրկովկասի բուժնիսթն Աղիսիայում:

Այն երևոյթները, որ տիրող են կենտրոնում, գրադեցում են և Անդրկովկասի վարիչներին և, ի հարկէ, ընդհանուր մտահոգութիւնները խարխուր են կարգում հնգամակի տապալան հետ կապած ինդիքներն ու տնտեսական անյարձակարիչի դժարութիւնները: Եւ ամալին հերթին՝ «Ճարտ. քարտիւնը»: Եւ ամալին խորհրդային տնտեսութեան կեանքի պարբերն է, այլև՝ քաղաքական աղակի Մոսկուայի ձեռքին: Եւ ինչ ուղի է ստացում: Եւ ինչ պայքարի պէնք է գիշատիչ գրաստիտութեան դէմ: Եւ ահա Բագուի նաւթի արտադրութիւնը սկսել է ընկնել: Այս տարւոյ ամալին 7 ամսայ ընթացքում մէկ և կէս միլիոն տոն պակաս նաւթ է ստացել անցեալ տարւոյ համեմատութեամբ: Պատճառը: Պատճառները շատ են. բացի խորհրդային տնտեսութեան համար ընդհանուր բացասական երևոյթները, Բագուում կան և յատուկ տեղական գործօններ: Այսպէս, մինչև այժմ ևլ էլ խորունկ չոր փորելու արհեստը իւրացած չէ Ազնիֆուրի այխատարներու կողմից, որով շատ նաւթաբեր Հողեր թողնուել են անգործածելի: Հարիւրաւոր նաւթային Հողեր չեն չափազորում խորքայինի պակասութեան պատճառով: Ամենաքիչը 50,000 տոն խորովակ է հարկաւոր, որպէսզի նաւթի որոշած տարեկան ծրարելը իրականացի, ինչ որ խորհրդային գործարանների ուժեղ վեր է: Եւ նաւթի ինքնարժէքը փոխանակ 5%ով իջնելու, վերջերս բարձրացել է: Համ. Աշխատանքի և Պատրաստութեան Խորհուրդը սեպտեմբերի սկզբին հասցնեց միլիոններ է ձեռք առել կրնիսելու համար նաւթարտադրութեան ծրարքի փուլումը (Ձ. Վ. Աստ., 14 սեպտ.): Երեք չաքաթ յետոյ, սակայն, սեպտ. 30ին արտադրած նաւթի պակասը մէկ ու կէս միլիոնից արդէն բարձրացաւ 2,230,000 տոն: «Չարեա Վաստակաւն» (30 սեպտ.) աշխարհք է հնչեցնում. «Վրխարդայէս Անիկորդի արդիւնաբերութեան գործարանները, տասնեակ հազարաւոր շոգեկաթ մեքենաներ ու տրակտորներ, որոնք ապուում են կալիտղակաւ Հողը, Բագուի նաւթագործների յանցանքով աշխատում են մեծ ընդհատումներով վառելիք չլինելու պատճառով»:

Սեպտեմբերին դուրսիւնը աւելի խայտառակ է.

ծրարելը իրականացած է 65,7%ով, նախորդ ամուայ 71,6%ի դիմաց. մինչ օգոստոսին հանւած էր 1010,615 տոն նաւթ, սեպտեմբերին հանւել է 923,826 տոն, այսինքն՝ 86,780ով պակաս: Եւսովի արտադրութեան անկումը շարունակեց և հետագային: Խորհրդային իշխանութիւնը չափազանց անհանգստացած է այս երևոյթով:

Աւելի տխուր է դրութիւնը քամրակի ճակատում. բերքը վատ է. հաւաքման գործը դանդաղում է. աշխատուոր ձեռքեր պակասում են: Վրաստանի և Հայաստանի քամրակացան շրջանները պէտք է անմիջապէս վերջ տան բարձրակի հաւաքման և դրան խայտառակ յետանցութեանը, գրում է «Չարեա Վաստակաւն», հոկտ. 12ին: Նոյնն է պատկերը և քամրակի կենտրոնում՝ Ագրքէշանում: Մոսկուայից ստացած արտակարգ և խիտ շրահանգներն էլ չօրոնցին, թէև այդ հրահանգներով իսկական ճորտային դրութիւն հաստատուց քամրակացան շրջաններում: (Ձ. Վ. Պ., 26 սեպտ.):

Ընդհանուր « խայտառակութիւններ » չարքին առանձնապէս անմիթթար է արդիւնաբերութեան վիճակը. Անդրկովկասի ծանր արդիւնաբերութեան ծրարքը անտեսական տարւոյ երրորդ եւամսակին իրագործւած է միայն 57,1%ով, իսկ Ագրքէշանում՝ 57,1 տոկոս, Հայաստանում՝ 53,2%, Վրաստանում՝ 63,3 տոկոս: Անցեալ տարւոյ նոյն եւամսակի համեմատութեամբ Անդրկովկասի ծանր արդիւնաբերութիւնը ոչ միայն չի բարձրացել, այլ և ընկել է 2,6%ով: Մանաւանդ շատ է ընկել շինարարութեան հում նիւթերի արտադրութիւնը — 38,6%, աղիւսի՝ 27,8%, մետաղի՝ 36,1%: Մետաղագործութիւնը իրականացած է 65,3 տոկոսով, քիմիական արդիւնաբերութիւնը՝ 75,8%ով, վառելիքը՝ 72,5%ով և այլն: «Համարեա բոլոր ճիւղերում երրորդ եւամսակի ընթացքին նկատում է աշխատանքի թափի անկում», հարգրում է Անդր. Հեռագրական Գործակալութիւնը:

Թեթեւ արդիւնաբերութիւնը երրորդ եւամսակի ծրարելը կատարել է 73,2%ով: Վրաստանում կատարւած է 76,6%ով, Հայաստանում՝ 72,6%ով, Ագրքէշանում՝ 69,4%ով:

Մանաւանդապէս արդիւնաբերութեան և երկտրաշինարարութեան խորը ձեռնարկներում, ինչպէս վկայում է Անդրի. ժողովմտորհի կից կատարման յանձնաժողովը, «Համարեա բոլոր շինարարական ձեռնարկների գործարարութեան և օգտագործման որոշած ժամանակը անցել է շիւրջգործած»: Պատճառը նախ մեքենաների և սարքաւորման չուրադիւնել կենտրոնից, բանուական քաղաքականութեան սխալները, շինանիւթի անխիտ գործարարութիւնը, յատուկապէս կազմութեան ուշացումը, սնունդի և մշակութային-կենցաղական կարիքների զոհացման վատ վիճակը: (Ձ. Վ. Պ., 22 հոկտ.):

Պատկերը աւելի լաւ չէ և գիւղատնտեսութեան մէջ, մանաւանդ, որակի տեսանկից: Թէև ցանւած Հողեր ընդհանուր գումարը նախապատրաստական վիճակի համեմատութեամբ համարւում է աճած, բայց բերքատուութեան չափը պակասել է. «Ֆերթատութեան բարձրացման խնդրում, գրում է «Չարեա Վաստակաւն» (9 հոկտ.) վերջին տարիների ընթացքում մենք չենք ստացել, իսկ առանձին ըջակութիւնի մէջ նոյն իսկ յետ էլ ենք գնացել: Համ. Կովկասի 1929թ. յուլիսի որոշումով բամբակի բերքատուութիւնը հնգամակի վերջում վիտի աւելանք 70%ով, բայց «մենք ոչ միայն չբարձրացրինք բերքատուութիւնը, այլ և չկարողացանք պահել միևնոյն աստիճանի վրա և շատ շրջաններում թույլ աւելք որ իջի»: Նոյնն է դրութիւնը և ծխախոտագործութեան մէջը: Եւ «Անդրկովկասի հիմնական մշակութիւնների մեծ մասի մէջ»:

Բերքատուութեան անկման երևոյթը ընդհանուր է ամբողջ Միութեան համար և այնքան սպաւնական է դարձել, որ Մոսկուայում որոշեց այս տարի այլ ևս ցանքի տարածութիւնը չաւելացնել և ամբողջ ուշա-



դրութիւնը կենտրոնացնել բերքի քանակն աւելացնելու վրայ:

Հայաստանում էլ, ի հարկէ, նոյն խնդիրներն են զբարկցնում ինչ որ և այլուր: Մոսկուայի պլենումից յետոյ, Հոկտ. 19ին Սրբանան էլ գումարեց կոմկուսի Հայաստանի կենտկոմին և Երևանի կոմիտէին միացեալ ընդհանուր ժողովը, որ ամբողջութեամբ և առանց վերապահութեան հաստատեց ՍանՎանի զեկուցումը սեպտեմբերի պիւնումի որդումներին մասին՝ խոստանալով զբոլշեակորէն պայքարել կուսակցութեան ընդհանուր դժի համար՝ Լենինի հաստատրագոյն աշակերտ ընդ. Ստալինի ղեկավարութեան տակ: Պլենումը հաւանութիւն տեց Բերիայի Անդր. Երկր. կոմիտէի քարտուղար Նշանակելու մասին՝ համոզւած, որ Անդրերկրում ընդ. Բերիայի ղեկավարութեան տակ առաջ կը տանէ բոլշեակական պայքարը Անդրկովկասեան Իսլանդութեան ամբողջման, լենինեան աղաչային քաղաքականութեան, Անդրկովկասի ճարտարաւեստացման, որը գերդաստնութիւնը սոցիալիստական Հիմունքներով վերակազմելու, դամատրիական տարրերի և զսաների վերջնական հաշտարարի համար Անդրկովկասում: Ինչ խօսք, որ Վերիայի խմբակն էլ դատապարտութեան արժանացած: Հայաստանում, սակայն, դեռ Ռիտիները չեն յայտնադրուած և վարչի կազմում փոփոխութիւններ չեն կատարուած:

Վիսարյանցիականութեան այս խնդրից զտ, Հայաստանի կենտրոն վերջին երկու ամսուայ ընթացքում դարձաւ մեծ մասամբ տնտեսական տագնապի և ճեղքում քննիչ լուրջ: Սորհրդային Թեթիքերը դատելով՝ քայքայում բոլոր ճակատներում անըմտնելի համեմատութիւններ է հասել: Առանց ամբողջ նիւթը սպառել փորձելու՝ առաջ բերեց միայն մի քանի օրինակներ՝ քաղած ՎՊՈՐՀՐԱՅԻՆ Հայաստանից և Վարեա Վաստակայից:

Սկսեց, թէկուզ, Զորագետով, որի շինարարութիւնն այլ ևս առակի կարգ է անցել: Մեքենայի փշացած մասերը, որ ուղարկել էին Թիֆլիս վերանորոգելու, դեռ չեն վերադարձած, և երկարախայսը, որի քացուր վերջին անգամ նշանակած էր մայիս 1ին, հեկտեմբերին էլ դորձի չի անցել: ՎՊՈՐՀՐ. Հայաստանը (8 հոկտ.) դառնորեն քանցաւում է, որ Զորագետը պատճառ է դարձել, որ Այլաշրջողում մի շարք ձեռնարկներ մեան առանց երեկոթական ուժի և իրենց վրա դրած պարտականութիւնը չկատարեն:

ՎՊՈՐՀՐԱՅԻՆ զորութեան մէջ է և Բանախոզուրը, որի շինարարութիւնը, ըստ Ջ.Վաստակայի (3 հոկտ.) զչափապանց սուր տագնապ է ապրում ցեմենտի և ուրիշ շինանիւթի քացարձակ քանակալութեան և աշխատուող ձեռքերի պակասի հետևանքով: Բանախոզուրը ըստ ծրագրի խոշոր ձեռնարկ է և Սևան-Չանգի կայանների շարքում դրանելու է երկրորդ տեղը և արտադրելու է 112 Հազար կիրտուա երկաթակա նոժ: Եննութեան համար կազմած է 32 միլիոն ռուբլու նախահաշիւ, որից մինչև այս տարւոյ հոկտ. 1 միսիւսած է արդէն 4,760,000 ռուբլի: Ինչպէ՞ս են գնում գործերը այս հսկայ ձեռնարկի մէջ, լսենք ՎՊՈՐՀՐ. Հայաստանին (10 հոկտ.):

Բանախոզուրի շինարարութեանը որդւած է օրական յատկացնել 1400-1500 քանուր: Քայց յուրիս ամսին աշխատել է 538 քանուր, օգոստոսին՝ 343, սեպտեմբերին՝ 268: Երեք ամսում ընդունել է 139 նոր քանուր, իսկ հետացել է՝ 192: Փորոզ և այլ մեքենաները կամ երեւի վրա են ձգւած կամ բանուծ են թերի կերպով: Այս տարւակ երկրորդ եռամսեակում՝ Բանախոզուրը Այս տարւակ 15 Հազար տոն ցեմենտ, ստացել է միայն 100 տոն, 3000 խ. մետր փայտանիւթից ստացել է 200 խ. մետր, 415 տոն երկաթեղէնից ոչինչ չի ստացել: Մինչև վերջերս աւագ էր բերում Վաղարշապատից մէկ խոր. մետրը 40 ռուբլով, այժմ դորձ է անուած տեղա-

կան աւագ՝ 6ր. խոր. մետրը: Դեռ մօտ մէկ միլիոն ռուբլու սարքաւորում պատրուած չէ: Ցեմենտի մեծ կարիք կայ, քայց 60 սուրբայ ցեմենտի մեծ մասը անմարի տակ թողնելով փչացել է: Ամէն կողմ Թափթիւմ-Ծուրիւն, անտնտեսութիւն, միայն շարժանակի կերպով օգտագործում է ռադիօհաճոցը», կայ և շարժանակի պտիթ թերթը:

Ցեմէնտի վիճակն էլ նոյնն է. «յուրիս ամսուայ կառուցման պլանը կատարել է 35%ով, օգոստոսինը՝ 30%ով»: ՎՊՈՐՀՐԱՅԻՆ շինարարական մասերում (առաջին կիսամեակում) պլանով պէտք է աշխատէր 450 քանուր, փաստօրէն աշխատել է 180 քանուր. յուրիս ամսին նախատեսւած 500 Հազու փոխարէն աշխատել է 140 Հազի, օգոստոսին՝ 500ի փոխարէն դարձեալ 140 Հազի: Մտադրի համաձայն Բիւշուկ Վետին դործարանն պիտի տար 300 քանուր — ոչինչ չի տեւ: Ռեհանուր գիւրը նախատեսւած 218 քանուրի դիմաց ոչինչ չի տեւ: Վետու շրջանի 10 գիւղերից մինչև սեպտ. 1 պէտք է հաւաքուր 4122 քանուր — ոչ մի մարդ էլ հաւաքւած: ՎՊՈՐՀՐԱՅԻՆ Հայանարկօսուր պարտաւոր էր մինչև այժմ տալ 50,000 Հատ տուֆ քար և 500 մետր բուտ քար — տեւել է միայն 8000 Հատ քար և 100 մետր բուտ քար: Մինչև այժմ պէտք է ստացւած լինէր 100 վազոն աւագ — ստացւել է միայն 7-10 վազոն: ՎՊՈՐՀՐԱՅԻՆ դործարանին ջուր բերող ստուէի կառուցման համար անհրաժեշտ է 120 տոն թուղ և դանապան խողովակներ, սակայն, դրանցից ոչ մէկը չկայ: ՎՊՈՐՀՐԱՅԻՆ թէլ գործերից և երբ պէտք է ստացնէ՞ 70-80 տոն թերթաւոր երկաթը: ՎՊՈՐՀՐԱՅԻՆ նախարարիւրը դեռ տարւակ սկզբին յայտնել է, որ մարտ ամսին կուղարկէ 75 տոն երկաթեղէն, այսօր թէլ և իջեալ ժամկէտից անցել է 6 ամիս, քայց ոչ մի տոն երկաթ չի ստացւած, իսկ առանց այդ բոլորի Հնարաւոր չէ դործարանը դործարկել: ՎՊՈՐՀՐԱՅԻՆ դործարանի կառուցման համար նախատեսուած է ծախսել 8,150,000 ռուբլի, որից մինչև սեպտ. մէկը ծախսուած է 5,000,000 ռուբլի: Մնացած 3,150,000 ռուբլով Հնարաւոր չէ աւարտել դործարանի երկարաարքաւորման և մեքենաների մոնտաժի աշխատանքները: (Ձ. Հ., 16 սեպտ.):

Սեկտորիներին կարիք կայ: Հապա զավաշինարարութիւնը. «Լենինականի շրջանում անմիջապէս դործութեան մէջ է: Այս տարի 20 կոլտնտեսութիւն են սկսել պէտք է կառուցելին: Պէտք է կառուցւեր 6 գում 100ական կովի համար, 3 գում նոյնպէս 100ական հորթի համար և մի գում 1000 ոչխարի համար: Հիւանդ կովերի մեկուսիչ 8 Հատ, թռչանոցներ՝ 17, որոնցից իւրաքանչիւրը 500 թռչունի համար — այդ բոլորը դիմաց Վրոյտնտեսութիւնները միայն 6 գումի քարային աշխատանքներն են կատարել: Իսկ մի շարք կոլտնտեսութիւններ, որոնք պետութիւնից այդ նպատակի համար փարկ են ստացել, դեռ ևս ոչինչ չեն արել»: (Ձ. Հ., 9 հոկտ.):

Ապարանում պիտի կառուցւեր 3 գում 250 խոշոր անասունի համար — մինչև սեպտեմբեր աշխատանքի հազիւ 30% է կատարւած: Այդպայում 550 խոշոր անասունի համար պիտի կառուցւեր 6 գում — աշխատանքը կատարւած է 31%ով: Դիլիլանում պէտք է կառուցւեր 7 գում 700 անասունի համար կառուցւած է միայն 2ը՝ աշխատանքի 40%ը: Բասար Գեշարում խոշոր անասունների համար պիտի շինւեր 3 գում, սկսւած է միայն երկուր, այն էլ կատարւած է աշխատանքի 64%ը: Սև Գարի 250 տնոց կոլտնտեսութիւնը դեռ անցելու տարի սկսել է սարուած լինել 500 խոշոր անասունի համար մի գում, սակայն, անցեալ տարւանից մինչև այժմ կառուցւած է գումի միայն 70 տոկոսը, որի վրա միսուած է մօտ 80,000 ռուբլի և... սղոց չլինելու պատճառով գումի կառուցւած դաշարքեւած է: գումը դատապարտւած է փշանալու անձրի տակ: Դրութիւնը նոյնն է և՛ Սիսիանի, և՛ Դափանի և

ուրիշ շրջաններում: Արձանադրելով այս փաստերը՝ «Ռորհրդ. Հայաստան»ը (17 սեպտ.) ահապահեց է հրեւեցեցեալ: «1932թ. առաջին կեսի շինարարութեան պլանները, յայտնում է Հայկոմկուսի պաշտօնաթերթը, կատարուել են ընդամենը 2% ում»: «Անճարակ, անշնորհք է օպորտունիստական զեկալարութեան հետեւաննն այս է, որ առ 1 սեպտ. Գիւղտնտչինի շինարարութեան (որից գլխավորը գումարնութեան է) պլանները անարարար են կատարում — միայն 43% ում, այն ժամանակ, երբ շինարարութեան պլանները կրճատելով 8 և կէս միլիոնից հասցրել են մինչև 4, 3 միլիոնի»: Թէ անտեսադարձութիւնը ինչ աստիճաններ է հասնում, «երեսում է թէկուզ Արարքիլիսայի խոցարուական խորհմտեսութեան օրակալից, ուր նախատեսւած 17 շէնքի փորարքն, որ պէտք է կառուցւածաւարուած լինէր 200,000 բուրլով, կառուցել են միայն 3 շէնք մօտ 190 հաարը բերլու գումարով»: «Գոմաշինութեան բնագիտական գրութիւնն այնքան անխիթարական է, որ վերահաս ամէնը կարող է սովորականի ստեղծել մի մասի համար ցրտահարութեան լուրջ վտանգ ստեղծել»: Ինչպէս պատահեց անցեալ տարի, ասելաշննեք մենք:

Այսպիսի պայմաններում, ի հարկէ, անասունները կը փչանան: «Ռորհրդ. Հայաստան»ը (29 սեպտ.) խոստովանում է, որ «անցեալ ձմեռային մենք ծանր դրութեան ապրեցինք մեր սոցիալիստական անանանարուծութեան պետական հաստածում. խորհմտեսութիւններում ունեցեց անասունների բաւական զգալի կորուստ ինչպէս կերի պակասի, նոյնպէս և վտա ինամքի հետուանեցով»: «Ռորհմտեսութիւններում այս տարի էլ կերի պարաստութիւնը շատ թոյլ է գուրզակի յանցադոր վերաբերմունքը» հետևեցողով, «խորհմտեսական գումարի ու փարախների խոշոր մասը դեռ այս կամ այն չափով կհասարտ է»: «անասունների ինամքի տեսակետից դրութիւնն անհարգութիւն վատ է»:

Կարծում էք խորհրդային իշխանութեան տակ միայն անասուններն են վատ վիճակում, հպապ նայեցէք, թէ բուլլեիներն ի՞նչ են բերել Աւսանի իշխանի դիւին: Ըստ «Ջարիս Վաստակ»ի (15 սեպտ.), այս տարի ձկնորսութիւնը է, մանաւանդ, ձուկ փոխադրելը զկատարել է անթոյլատրելի, ուղղակի յանցադոր պայմաններում»: մեծ զանախութեամբ ընտիր իշխան ձուկ փչացել է փորադրութեան ժամանակ: Այսպէս, յունիս 28ին ստացատուն է բերել 4,036 կիօ իշխան և 1,890 կիօ կողակ բորոյրին փչացած վիճակում, պատուաւած գործերով: Յունիս 26ին բերել է 6,505 կէօ կողակ նոյնպէս փչացած: «Յունիս և յուլիս ամիսներին այսպիսի 26 բն. փչացած ձուկ է բերել»:

Չկարողանալով կազմակերպել նաւային փոխադրութիւնը, Հայկոմկուսի վարչութիւնը սխել է փոխադրել էշերով և սայլերով, բայց էշերն էլ չեն օգնել. «Ջանախ ծովի սպին տասնեակ փութ ձկնորսով արկղեր մնում էին ընկած ամբողջ օրերով՝ սպասելով էշի կամ ձիու գալուսն. ճանները ամպերով սաստում էին ձրկաների վրա, որոջից շատ անցած այնպիսի հոտ էր բուրում, որ մարդ առանց ջրիք փակելու չէր կարող անցնել մօտից»: Ձկնորս անխնայ կերպով զոգացում են. «զոգանում են անհատարար, ամբողջ խմբերով»:

Օրտակուլեցեք վերջերս ամբողջ մի ուռկան՝ 28 փութ ձուկ զոգացան»: Այս բուրբի մէջ, միակ միւթարութիւնը այն է, որ զոգացողները զիւրացիններն են, որոնք ուրիշ կերպով իշխանի երես չեն տեսնի. չէ՞ որ Աւսանի ձուկն էլ արտածման նիւթ է:

Նոյն դժբախտ վիճակի մէջ է և Հայաստանի խաղաղագործութիւնը: Լսենք «Ռորհրդ. Հայաստան»ին (21 սեպտ.). «Այս կուրուրան անթոյլատրելի կերպով թերագնահատում է սոցիական կազմակերպութիւնների կողմից», որի հետևեցողով «վերջին տարիների ընթաց

քում զգալի չափով նազել է բերքատուութիւնը», իսկ շատ տեղեր նոյն իսկ բորոյրին կորուել է: Այսպէս, «Անասունած կոլտիւնը», զանրերի է դարձել 135 հեկտար այրի, Գէորգիալում՝ մօտ 100 հեկտար, նոյնքան Փարաքարում և մնացած այգեդրոծական այգիներում: 1931 թ.ի այնանը համարեն տասնց թաղուել է մնացել այգիների զգալի մասը, զարնանը չի փորուել այգիների 30ից 58% ում. շուրս էլ պակաս է տրուել Այս տարի «այգիների բերքատուութիւնը զգալիորէն ընկել է»:

Վերջապէս, փակեցք վանդալական այս աւերի դարհուրիլ շարքը բամբակով և ցանքով:

Բամբակի հաւաքման և մթերման ընթացքը խիստ թոյլ է: Չնայած որ հոկտեմբեր ամիսի դաշտերից հաւաքւած և կտալարութեան յանձնւած պիտի լինէր Հայաստանի բամբակի առնւապն 76% ու, առ 21 հոկտ. յանձնւած է միայն 29,2% ու: Հայկոմկուսի կենտրոնի հանած մի շարք արտագաղթ որոշումներն ու հարկազրական միջոցները ոչ մի արդիւնք չեն տալիս. Ժողովուրդը չի ուզում զբաղւել բամբակի դործով: Այս երևոյթը հակամարի կը լինի, եթէ ի նկատի առնէք, թէ կառավարութիւնը ինչ գներով է առնում բամբակը: Բամբակի գնման սակը նշանակաւ է Հայաստանի Ժողովուրդին 1932թ. սեպտ. 19 որոշման 7րդ կէտում, ուր ասւած է.

«Կրկին հաստատել բամբակի 1932 թ.ի բերքի այն գներն ըստ տեսակների, որոնք սահմանել է աշխատանքի ու պաշտպանութեան խորհուրդում մթերման կոմիտէի Անդրկովկասի լիազորելի զեկալարութիւն տեղերի. այն է՝ 1 ընտիր՝ 33 կոպէկ, 1 նորայ՝ 324, մինուս՝ 304, մեծհումով՝ 254, 2րդ տեսակ՝ 254, 3րդ տեսակ՝ 23,54, և կուսակ՝ 23,34. յանձնուած իւրաքանչիւր կիօզրամ բամբակի համար»: («Ռ. Հ.» 30 սեպտ.): Այս գներով, հակակնայի է, որ հայ դիւրագիտութիւնը բացասական վերաբերում պիտի ցոյց տայ դէպի բամբակի մշակութիւնը: Ռորհրդային դրամի գնողական սյժը 15-20 անգամ ընկած է. 26 կոպէկով մէկ տուրի լուչիլի իսկ կարելի չէ առնել շուկայում...

Ինչ վերաբերում է ցամբերին, չափազանց հետաքրքրական տեղեկութիւն ենք գտնում Գ. Եսայանի կարգացած մէկ զեկուցման մէջ Հողօտողութեան մի խորհրդակցութեան ընթացքին: Ըստ Եսայանի առաջ բերած տեսանքի Հայաստանի շքուոր և միջակ արնստութիւնների աւելի քան 36% կոլտիւնացած է (ասել է՝ կոլտիւնները պակասել են), գոյութիւն ունի 67 խորհրդային տեսութիւն: Հայաստանում գործում է մօտ 300 տրակտոր: Մինչև 1913թ. Հայաստանում ցանւած է եղել 343,000 հեկտար, 1932թ. ցանքը հասել է 430,000 հեկտարի: Սակայն, բերքատուութիւնը ոչ միայն ցանքի ամճան գուղընթաց չի բարձրացել, այլ և վերջին տարիները զգալի չափով ընկել է: Ապացոյց հետուեալ թւերը.

Հացահատիկներ

1913թ. բերքատուութիւնը 1 հեկտարից 8, 3 ցնմունք էր			
1926	»,	»,	9,60
1930	»,	»,	8,30
1932	»,	»,	5,00

Գետնախմբոք

1913 թ.	մէկ հեկտարից	97	ցնմունք.
1927	»,	99,9	»,
1931	»,	66,0	»,
1932	»,	74,0	»,

Բամբակ

1913թ.	մէկ հեկտարից	9,0	ցնմունք.
--------	--------------	-----	----------

1927	»,	»,	11,6	»,
1931	»,	»,	4,5	»,
1932	»,	»,	6,0	»,
Խաղող				
1913թ.	մէկ հեկտարից	»,	75, 0	ցեմտ.
1925	»,	»,	89, 0	»,
1930	»,	»,	84, 0	»,
1931	»,	»,	53,10	»,
1932	»,	»,	41, 0	»,

Այս թւերը այնքան պերճաբար են, այնքան «աճօթալի», ըստ Նալբանի, որ ամէն իսուջ աւելորդ է. հնդամեակի վերջին երկու տարւայ ընթացքին Հարաստանի դիւղանտեսութիւնը անխնայ փչացւում է: Միթէ խայտառակութիւն է՞, խտտովանում է նալբանը, որ բերքատուութեան բարձրացման ուղղութեամբ մեր կատարած բացարձիկ վատ աշխատանքի հետևանքով անցնել տարւայ մեր այնան ցանձերից 14,000 հեկտար չժնց: (ՎՊ. Հ.», 15 հոկտ.):

Այո՞, խայտառակութիւն է, ամօթ ու խայտառակութիւն:

## «ԹԷ ԻՆՉՊԷՍ ԱՂՐՐԷՉԱՆԸ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ»

Աղբրէջանցի Բասուլ Չառէի խմբագրութեամբ՝ նախ Պոլիս, ապա այնտեղէն արտաբերւով՝ Բեքլի հրատարակող Վոթիքըլը՝ անուն թերթի սեպտ-1 թիւ 15ին մէջ խիստ ուշաբար յօդած մը գիտեղած է, որ զաղափար մը կուտայ մուսուլմանական թաթարներու Քալաքական մասնաբաժանի և, ըստ իրենց, մեծամասնականներու ներքին քաղաքականութեան մասին: Յօդուածը ստորագրած է Վերդա Պալաթի կողմէ և Վր կրէ վերի վերնագիրը:

Յօդուածագիրը քաղածքներ կրնէ «Պաքիստիկ Բալոչի»-ի յունիս 10 համարէն. թերթը կը շորհարարէ Աղբրէջանի Լէննոբան նահանգի մէկ մասը կազմող, Թալիշ երկրամասին մէջ, Թալիշեան լեզուով հրատարակող «Միա Թալիշ» 100րդ համարը՝ ըսելով թէ Թալիշի ազգաբնակչութիւնը երջանիկ է, որ լեւինեան ուժեղութիւն մէջ, իր առանձին լեզուով թերթ ունի, մինչդեռ հին ատեն անոնք կորսնցուցած իրենց ազգային գիմաղիճը՝ Աղբրէջանի լեզուն կը դործածէին:

Մերոց Պալան աւա այս առթիւ է, որ իր վրդովումը կը յայտնէ: Բուն թուրք ազգաբնակչութեամբ և Աղբրէջանի մարմնէն փրցւած այդ երկրամասը միտումնաւոր և արհեստական կերպով զանկալ է հռչակւած, կը գրէ Մերոց Պալան, զսովետական վիճակագրութեան համաձայն չուն 75,000 ազգաբնակչութիւն կայ. Լէննոբանի դաւառներէն մէկն է, ծովափնեայ և շատ բեղմնաւոր երկիր: Դեռ 1925 թւին Բազուլ հրատարակող խորհրդային-աղբրէջանեան թերթերը և հետազային Աղբրէջանի ուս-խորհրդային կրթական կոմիտէի գուրիքը, Թալիշի ազգաբնակչութեան իր լեզուով կրթութիւն տալու որոշումը կը յայտարարէ:

«Աղբրէջանը բզկատելու և անոր միասնականութիւնը, անտեսական և ընկերային միութիւնը տասնհինգ կուորի բաժնեկու որոշումով Մուսուլման տաճար և արգէն իրազորման ձեռնարկած է հայ կոմունիստներու աջակցութեամբ հիմ բռնելով Լենինի որոշումը՝ Աղբրէջան անուսով երկրամասը մէջտեղէն փրցնելու մասին, որ տաճար էր Ժամանակին: Աւա այս որոշման և այս քաղաքականութեան ետանդագին իրազորման է ներկայիս: Դեռ եօթ տարի առաջ «Ժողովրդական պահանջներ» ընդառաջելու անկախ, Աղբրէջանէն պուկեցին արեւմտեան և հարաւ-արեւմտեան երկրամասերը, ինչպէս Ղարաբաղը և «ազգային կառավարութիւններ» հաստատեցին: «Բաժանան զի տիրեցին» — այս քաղաքականութեան է, որ «ազգային կառավարութիւններ» անունն են տաճար: Այս քաղաքականութեան հետևանքով կարմիր զահիճներու ձեռք ինկած 96,160 քառ. քիլոմետր Աղբրէջանի տարածութիւնը 84,679 ք. քիլոմետր, որով 11,481 ք. քիլոմետրուց: Կորուած այս կիւռ, որով 11,481 ք. քիլոմետրուց: Կորուած այս տարածութիւնէն հարաւ արեւմտեան երկրամասը Հայաստանին կցեցին, մինչդեռ մեր հողամասը իր ամբողջ

շուրթեան մէջ կողկանեան աղբրէջանցիներուն անբաւարար էր դեռ և մերայինները մեծ թւով Հայաստանի և Վրաստանի մէջ կարդէին: Կողկանեան Հանրապետութեան անկախութեան ատեն, սահմանները դեռ վերջնապէս բաժանուած չէին և նախկին դրութիւնը կը պահէր: Բոլշեակներու նաճումէն վերջ, մեր հաշիւն Հայաստանին անցաւ 11,481 ք. քիլոմ., սակայն, Աղբրէջանի կառավարումը և Հայաստանի անոր հաշուին դիւրացումը բաւական չէին. Աղբրէջանի ճիշտ կրճէին հասցրու համար «Լեննային Ղարաբաղի Հանրապետութիւն» ստեղծեցին: Ձևակերպութեան Աղբրէջանին ենթակայ այս «հայ Հանրապետութիւն» 4161 ք. քիլոմ. տարածութեամբ և 1926թ. վիճակագրութեան համաձայն 125,000 ազգաբնակչութիւն ունի: Ինչպէս կը գրէր 1931թ. «Ձարեա Վաստակ» (№ 140), ինքնավար Լեննային Ղարաբաղի վարչութեան գլուխը կանգնած Արմենակ Ղարաբէգեանի և Թէլոորոս Մերզաբէգեանի մէջ անհամաձայնութիւն ծագած էր անոր շուրջ: Առաջինը ինքնավար վարչութեան պետը, իսկ երկրորդը Աղբրէջանի Պորհրդային Հանրապետութեան Ժողովրդական կոմիտարութեան մէջնէ էին: Այս երկու խորհրդային աւազանիները Աղբրէջանի արեւմտեան երկրամասերը Հայաստանին կցել որոշած էին, սակայն, տակտիկական խնդրի մը շնորհիւ համաձայն չէն եղած: Միեւնիքեանը Ղարաբաղի հետ միաժամանակ Գանձակն ևս Հայաստանին միացնելու ծրագրէր ունէր, մինչդեռ Ղարաբէգեանին առ այժմ միայն Ղարաբաղը միացնելու կողմն է եղեր...

«Դիտողի դերի մէջ մնացող բոլշեակները կոտորակման այս ծրագրիներու և դործողութեան հետ Լեննային ինքնավար Ղարաբաղի և Հայաստանի միջև ինկած Աղբրէջանի դարձեալ կտոր մը առանձնացուցին և «Քիւրստան» անուանեցին: Իսկ Աղբրէջանի հողերէն նախկին ևս անկախելու համար պիտոճէր յատկացման մասին գրած ենք Ժամանակին» Եթէ «Քիւրստան» և Գանձակ վերայէթը չհաշիւնք Հայաստանին անցած կամ անցնելիք հողամասերը հետևանք պատկերը կը ներկայանան —

1. Աղբրէջանի Հայաստանին տրւած 11,481 ք. քիլոմ.
2. Ինքնավար Ղարաբաղը 4,161 ,,
3. Նախկին Այրախէրը 5,335 ,,

Ընդամենը՝ 20,997 ք. քիլոմ.

Ըստ 1926թ. վիճակագրութեան նախկին ազգաբնակչութիւնը 105,000 է: Հայաստանին կցւած մասերը 600,000 անձ կը պարունակեն: Հայերուն տրւած Լեննային Ղարաբաղի 125,000 ազգաբնակչութեան հետ, դեռ 1926 վիճակագր. համաձայն, Աղբրէջանը մօտ մէկ միլիոն Ժողովուրդ կորսնցուցած է: Եթէ Մերզաբէգ-

եանի ծրագիրը իրականանայ, մէկ ու կէս միլիոնէն պիտի անցնի, որուն 80% ր թուրք է:

«Այժմ կարգը Լեւոնորանին եկած է: Մուղանի և Միլի դաշտերէն անտառուս բարձր լեռներով անջատուած և լեռներու ու Հաշարի մէջ զանուղ տարածութիւնը խիտ հարուստ և բեղմնաւոր է, որ ունի 5000 քառ. քիլոմետր երկարամաս . այս ալ եթէ յափշտակի, 25-26 հազար քառ. քիլ. կրտսւս կունենայ Արրէջլանը»:

Հոս յօլաւածադիրը պատմական և քաղաքական պատմութիւնը կուտայ այդ երկրամասին, որուն կենտրոնական զապափարը այն է թէ նա եղած է միշտ ազդէլանեան խաներու սեփականութիւնը և իւրեւց է

ուսանբու կողմէ, ապա հարց կուտայ՝ «Այսպիսի երկիր մը մեղմէ յափշտակելով, Մոսկուս ի՞նչ նպատակ ունի և ի՞նչ կը վատակէ, և պիտի կարենայ՝ կլլել այդ համեղ պատարը:

«Արրէջլանը իրերին կլլուող պատար չէ»: Կարիք կա՞յ ասելու, որ հայ կոմունիստներին վերադարձու անաբնութիւնները միայն Միբրա Պալայի երևակայութեան մէջ գոյութիւն ունին: Պէտք կա՞յ բացատրելու, որ, իբր թէ, Հայաստանին կցած հողամասերը (Չանդեզուր և այլն) արդէն իսկ Հայաստանի մաս էին, բոլշևիկներէից առաջ, իսկ բոլշևիկները Հայաստանի Նախիջևանը կցեցին Արրէջլանին:

## Մ Ե Բ Հ Ա Ր Ե Ի Ա Ն Ն Ե Ի Ի Մ Օ Տ

ՎՐԱՅ ՄԵՆՇԵՒԻԿՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԸ

Մեր հարեանների ներքին կեանքի մասին ինչքան շատ իրազեկ լինենք, այնքան, ի հարկէ, լաւ: Այս տեսակետից օչուտակար ենք համարում ամփոփ դժերով ասած բերել Կոտէ Բազմաձէր ձկն ինչ որ կաւակցաւթեան յայտնի չէ» վրացերէն գրքոյկի բովանդակութիւնը, որ շահեկան տեղեկութիւններ է հաղորդում:

Կոտէ Բազմաձէր 1929թ. նոյեմբերին, Վրաստանից եկել է Փարիզ սոց-դեմ. կուսակցութեան արտասահմանի Բիւրօի մօտ: Փարիզ հասնելու պէս տեսնել է Բիւրօի նախագահ Ն. Ժորդանիայի հետ, բայց շուտով նրա շուրջն ստեղծուել է կասկածի մթնոլորտ, և նա չի կարողացել կատարել իր պաշտօնը: Երկու տարի Ժորդանիա-Ռամիշվիլիի ղեկավարութեան ղէմ պայքարելուց յետոյ, հրապարակ է իջել ներկուսակցական խնդիրները լայն Հասարակութեան սեփականութիւն դարձնելու համար:

Բազմաձէր գրածներից պարզուած է, որ 1921թ. օգոստոսի պատասանութիւնը, ինչպէս ամբողջ Վրաստանի կեանքի, նոյնպէս, և մասնաւոր, մենչևիկ կուսակցութեան համար չարից ակշի ծանր հետևանքներ է ունեցել: Չեկայի պրովոկացիան լայնօրէն մուտք է գործել կուսակցութեան ներքև և մեծ ակեր գործել: Մենչևիկ կուսակցութիւնը կորցրել է իր միասնականութիւնը և քանդակաժայի կազմակերպութեան ընդմէջ:

Ապստամբութիւնից յետոյ, կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն մնացել է Թիֆլիսում: Եւ միտաժամակ, արտասահմանից, Ժորդանիա - Ռամիշվիլին Վրաստան են ուղարկել մի ներկայացուցիչ, որը 1927 թ.ի ամառը խորհրդատուով է դուժարել Գուրիայում և Թիֆլիսի Կ.Կ-ից զապալի նոր Կենտ. Կոմիտէ ընտրել: Որով, Վրաստանի մենչևիկներն ունեցել են երկու Կենտր. Կոմիտէ, որոնք իրար հանդէպ բռնել են թշնամական դիրք: Երկիր Կոմիտէն 1928ին դուժարել է Յրբ խորհրդատուովը, որ կուսակցութեան համար մշակել է նոր պլանֆորմ, որ, ինչպէս ասում է Բազմաձէր, «պատասնութեան նոր էջ պիտի բանար»: Այդ պլանֆորմը յատուկ զբոսթանում ուղարկել է արտասահմանի Բիւրօին, բայց սա ոչ միայն չի գործադրել, այլ և պաշտօն է պահել: Որով, ուրեմն, հակամարտութիւնը չի անձնափախել միայն կազմակերպական խնդիրներով, այլ և ստացել է քաղաքականակերպութեան ընդմէջ: Երկիր Կենտ. Կոմիտէն, որի անդամների մի մասը աջարուած են Միբրի, դատապարտում է Ժորդանիա-Ռամիշվիլիի արկածախնդրական քաղաքական դիրք: Արտասահմանի նշանակած Կենտր. Կոմիտէն, ընդհանարար, նեցուկ է Ժորդանիայի քաղաքականութեան:

Ահա այս երկիր Կենտր. Կոմիտէի կողմից է Փարիզ

եկել Բազմաձէն, ինչպէս ինքն է ասում, «Վրաստանում արհեստականօրէն երկու մասի բաժանուած կազմակերպութիւնը մարցնելու» նպատակով: Փարիզում նա տեսել է, որ արտասահմանում էլ կուսակցութիւնը պատահուած է. մի կողմ Ժորդանիա-Ռամիշվիլիի համարտներով, միւս կողմ՝ Մերեսուի, Արսէնիձէ, Ղիփիանի և ուրիշներ, և երրորդ կողմ՝ «ճահիճը», յանձին Գեգեչկորիի, Չիենկելիի և այլոց, որոնք ստասանուած են երկու կողմերի միջև:

Ժորդանիայի կողմակիցները, յենկելով Վրաստանի իրենց նշանակած Կենտր. Կոմիտէի հրահանգի վրա, Մերեսուիին հետացրել էին Ըրնկերվարական Միջազգայնից և տեղը նշանակել Պոյի նախորդ դեսպան Գվարջալաձէին: Արտասահմանի տարադիր կազմակերպութիւնների մէջ տրուած էր խոր դժգոհութիւն:

Ժորդանիայի հետ տեսնելուց յետոյ, Բազմաձէն ուզում է գեկուցում տալ Բիւրօյում: Ժորդանիան խոստանում է, բայց անվերջ ձգձգումներով՝ հնարաւորութիւն չի տալիս: Այն ժամանակ Բազմաձէն դիմում է Մերեսուիի խմբակին և գեկուցում է կարողում նրանց կազմակերպած ժողովներում: Այս պարագան սաստիկ զայրացնում է Ժորդանիա-Ռամիշվիլիի կողմակիցներին, որոնց կողմից Բիւրօի անդամ Մէնադարաշվիլին և Փարիզի Կոմիտէի նախագահ Ուրուզաձէն մեղադրում են Բազմաձէնի դուսձանութեան մէջ և սպառնում խտրօրէն պատժել:

Բազմաձէն մանրամասն կերպով պատմում է այս դէպքերը, առաջ է բերում իր և միւսների դրած նաժանկները, Ժողովներում քեչարկուած բանաձևերը ևն: Այդ բոլորից երևում է, որ ներքին քաղաքումը վրաց տարաբոսթեան մէջ շատ ակշի խորն է, քան կարելի է ենթադրել դրսից: Ժորդանիայի նախագահութեան տակ դրոժող Բիւրօն մեղադրում է աշխկատարութեան», Երկիր Կ.Կ-ի հրահանգներին չենթարկելու, շարքերը կարծիքի և խօսքի ապաստանութիւնից զրկելու և ամէն տեսակ կամայականութեան մէջ: Սա էլ իր հերթին հակակուսակցութեան համարում է բոլշևիկականները, Չեկայի ձեռքին կոյր գործիքներ և այլն:

Բիւրօն ստիպուած է լինում Վրաստան ուղարկել իր անդամներից մէկին՝ Բերիշվիլիին, որպէսզի պարզէ այնտեղի կացութիւնը և Կենտր. Կոմիտէից հրահանգներ բերէ: Բերիշվիլիին Վրաստան մտնում է մօտ երկու ամիս, խորհրդատուով է դուժարում և վերաբարկում է Փարիզ: Բերիշվիլիի այս անաբնութեան Բազմաձէն ներքում է բաւական մեծ տեղ իր դրածուում:

Նախ՝ Բազմաձէն առաջ է բերում մի շատ կարևոր տեղեկութիւն, որ մի անգամ ևս բնորոշում է վրացի մենչևիկներին քաղաքական հակումը՝ Վրաստանի ապա-

տարական պայքարում յինև թիւրքերի վրա ընդդէմ Ռուսաստանի:

Բազմաձև զրում է. «Ակունք Բերլինի»-ի այն երկու թերթ զրուիւնից, որ, անկասկածեան տօնի առթիւ 1930թ. սեպտ. 7-ին ևս տեւել է թիւրք կառավարութեան Կարսում: Այդ զրուիւնն մէջ աւելի հետաքրքրական է այն մասը, ուր խօսուած է կողմանան ազգերի ապստամբութեան մասին: Ահա ինչ է զրումն (առւանջն յիշում): «Յարմար րոպէին կը սկսուի ըրտը յիւրեմ ազրութիւնների զործակցութիւնը տապալելու համար օտար լուծը և ազտուելու համար ռուսների տիրապետութիւնից: Մենք և մեր ըրտը ջաղաքական բարեկամները համոզուած ենք, որ այդ րոպէն կը հասնի եկող տարւոյ (1931) սկիզբը և մենք այդ գործի համար կրէքէք պատրաստ ենք թէ ջաղաքականապէս և թէ կազմակերպչին»: Ի՞նչ է այս. ո՞ր ապստամբութեան մասին է խօսըը? Այս մասին Բերլինի լինի պէտք է բարեհաճի պարզել իր պտոկանամ կազմակերպութեան առջև: Հասարակութեան համար անհասկանալի է, թէ Ի՞նչը ստիպել է Բիւրօի այս պատասխանատու անդաճի նման զրուիւն ուղղել թիւրք կառավարութեան, մասնաւոր որ, երկու ամիս Վրաստանում մտալով՝ նա զոնէ մի անգամ ներկայ չի եղել մեր կազմակերպութեան նիստին դէ՞ք տեղեկութիւններ տարու համար իր կատարած ճաշխարհներէր մասին:

Այս, Բազմաձև անցնում է Բերլինի Վրաստանից բեթած ճկունակցական զրուիւնն, որով Բերլինի լինի, ի միջև այլոց, ճանապարհորդին հարւածում է բացի Չիսնիկից, նաև ազգային-դեմոկրատներին ու, յատկապէս, Մերետիկին: Այստեղ Բազմաձև յիշում է, որ հանդուցեալ Բազմաձև իրեն զանդաւուր է, թէ՛ «Մերետիկին գործը այնպէս փաշտեց Բնտերնատիւնում, որ այլևս թուրքովի աւելորդ է իօսել Ինտերնատիւնից զգամական օգնութիւն ստանալու մասին»: Նոյն մեղադրանքը արել է և Մենադարաչիլին. «Մենք զրամական օգնութիւն խնդրեցինք Բնտերնատիւնից Մաթեոթի ֆոնդից, բայց մերօրում ստացանք, և մեզուսը Մերետիկին է: Եւ Բերլինի թերմ թղթում էլ նման ամբաստանութիւններ են եղել: Բազմաձևն վճռական կերպով թողնում է զբառ դէմ: Բազմաձևն զրում է, թէ՛ «Վրաստանում մեծագոյնի հեղինակութիւն վայելող և շատ յարգելի անձեր են համարուած Ժողովարհայի հետ նաև Չիսնիկին, Գրգեչկորին և Մերետիկին»: Չիսնիկի մասին առում է. «Ժողովարհայի կողմնակիցները ճշարտ են դրել Չիսնիկի առջև, բայց եթէ Չիսնիկին ուզենայ մի կողմ նետել այդ ջարը, նա պէտք է իմանայ, որ մենակ չի մնայ: Նրա յետը կը կանգնի այն Ժողովուրդը, որ Վրաստանում սիրով և յարգանքով է վերաբերում նրան»:

Աւելի հետաքրքրական են, սակայն, Բերլինի և Բազմաձևի, այսինքն՝ Վրաստանի մենչեկի երկու հակամարտ կենտր. Կոմիտեների ջաղաքական տարբերութիւնները: Գծաբխտարար, Բազմաձևի զբողոյում այս մասին աւելի ակնարկներ կան, թան ձևակերպուած տեսակէտներ, թէ և եղածից էլ կարելի է որոշ գաղափար կազմել:

Բերլինի թերմ զրուիւնն մէջ աւաւած է, թէ «Խորհրդածողովը հաւանութիւն է ապիս Բիւրօի երկրորդ Ինտերնատիւնում արք վերջին ժամանակները կատարած աշխատանքին՝ մեր դրեքը ամբարպետելու համար և հրահրում է Բիւրօին աւելի ետանդուն գործունէութեան»: Բազմաձևին բացատրում է, որ այս կէտը ուղղած է Մերետիկի դէմ: «Մերետիկի մեղքը նրանումն է, որ նրա Ինտերնատիւնում եղած ժամանակ, ուրիշ մանր ազգերի շարքին Վրաստանի ներկայացուցչը առաջին կարգում էր կանգնած, իսկ վերջին ժամանակները Վրաստանի անունը Ինտերնատիւնում բոլորովին չէ յիշուած»:

Բերլինի թերմ զրուիւնն մէջ պահանջ է զրում «Հաստատուել վրաց ազգային մէկ ճակատ»:

Բազմաձևն պնդում է, թէ Բիւրօն իր գործունէութեամբ արգելք է լինում ազգային մէկ ճակատի Հաստատման. «Ժողովարհայի տարբ տեղի ունեցած Բիւրօի դիւանի Ժողովում, ուր են զեկուցում տե՛ր Վրաստանի միջկուսակցական կոմիտէի մասին, Բազմաձևին բացարձակապէս հակասակ զիրք բռնեց: Նա պնդում էր, թէ նման կոմիտէի ստեղծումը Վրաստանում բուլշևիկները կը նկատեն իբրև ապստամբութեան պատասխանութեան նշան, և այդ առիթ կը դառնայ ճնշումների»: Եւ նրանից յետոյ էլ, գործը տարւել է այնպէս, որ ճաղաքային մէկ ճակատը՝ մնացել է անիրազդելի: Մինչդեռ երկրի կենտր. Կոմիտէն խիստ անհրաժեշտ է համարում ազգային-ջաղաքական ուժերի համախմբումը:

Ընդհանուր ջաղաքականութեան հարցում երկրի կենտր. Կոմիտէն յարում է Մերետիկի տեսակէտին, որ վճռականորէն դատապարտում է Ժողովարհայի Բիւրօի ուղղութիւնը:

Ի վերջոյ, ստաջ ըրենք մի ջանի բանաձևեր, որոնք բաւական յոտակ գաղափար են տալիս զրութեան մասին: Փարիզի կազմակերպութեան 1931թ. սպր. 26ի ընդհանուր Ժողովը ջննելով կուսակցութեան պտոկաւած մասերը միացնելու խնդրը ընդունել է հետեւալ բանաձևը.

«Փարիզի սոց-դեմ. կազմակերպութիւն իր ջերմ ողորմին է ուղղում Վրաստանի աշխատող ընկերներին և մեր կուսակցութեան ղեկավար մարմինի, ցանկանում է նրանց ոյժ է գործունէութեան այնպիսի սովորութիւն, որ նրանք յայտնաբերում են ընդդէմ բռնադատուղ ղեկատարութեան յանուն մեր կուսակցութեան և ի բարօրութեան մեր ազգի:

«Փարիզի կազմակերպութիւնը իր սրբազան ու բարձր պարտականութիւն է համարում իր կարողութեան սահմաններում օգնութեան հասնել թշնամու կրակի տակ աշխատող կազմակերպութիւններին:

«Փարիզի կազմակերպութիւնը ուրախութեամբ արտայայտում է իր գաղափարական համաստեղութիւն ու միութիւնը կուսակցութեան հետ՝ Հիսնիկում անհայտ պայքարի վրա ընդդէմ օտար ընտանապետութեան և ձգտելով համբաշխարար հասնելու օտար ընտանաբաւումի վերացման և Վրաստանի անկախութեան վերականգնման:

«Նրոտասահմանի աշխատանքը բարձրացնելու և ըրտը ուժերի միութեան իրականացնելու համար խորհրդածողովը անհրաժեշտ է համարում, որ

- ա) Այսուհայ Բիւրօի կազմը, սոց-դեմ. կազմակերպութեան ներկայացուցչներին հետ համախորհուրդ, շուտով հրաւրել արտասահմանեան կազմակերպութիւնների ներկայացուցչներին Ժողով՝ մշակելու համար նոր Բիւրօի անդամութեան թեկնածուների ցանկը, որպէսզի այս ցանկը ուղարկել Վրաստանի սոց-դեմ. կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէին ի վաւերացում:
- բ) Բիւրօն ընտրել դիւան:
- գ) Խորը սոց-դեմ. կուսակցութիւնների մէջ ընդունած ձևով՝ նամակներով, փոխադարձաբար մարդ ուղարկելով, մամուլով երկրի կազմակերպութիւնը տեղեակ պահել ջաղաքական տեսակէտներին:
- դ) Վերացել ընկ. Մերետիկի վերաբերմամբ վերջին խորհրդածողովի վճիռը: (այսինքն՝ Ինտերնատիւնից հեռացելով), այդ պահանջում է ոչ միայն շանն ու զնահատումը մի հեղինակաւոր ընկերով, այլ և կուսակցութեան:

Փարիզի սոց-դեմ. կազմակերպութիւնը խորին հաւատով պատրաստ է աշխատելու համախմբել կուսակցութեան զբօշը տակ արտասահմանի կազմակերպական բոլոր արտերը և օգնելու իրականացնել կուսակցութեան առաջ զրում կարևորագոյն խնդիրները: Նոյն օրը, ապրիլ 26ին, և միևնոյն հարցերի մասին բանաձև են հանում և Մերետիկի կուսակցի ընդդիմադիրները.

«Ենդդիմադիրները կարծում են, որ մեր կուսակցութեան ամբողջացման և առողջացման համար հարկաւոր է պարզ և ազդու կերպով ասել, թէ ա) Վրաստանից եկած փաստաթղթերը, ինչպէս որոշ կերպով երևում է նրանց ներքին ընդլից, արտասահմանից հասցւած միակողմանի տեղեկութիւնների արդիւնք են, թէ այդ որոշումների, համոզում ենք որ, չեն կարող հարազատ պատկերը լինել Վրաստանում գործող սոց. դեմ. կուսակցութեան կարծիքի ու տեսութիւնների: Բ) Որեւէ ուսմկամար և ընկերակարական կուսակցութեան անդամ, որտեղ և ուսմկամարական սկզբունքների չկիրաւորել, որ իշխող է մեր իրականութեան մէջ, կարող է լինել ազէտաւոր մեր կուսակցութեան ամբողջութեան տեսակէտից և մեծագոյն վնասը հասցնել Վրաստանի ազատագրութեան գործին և Վրաստանի բանուր դասակարգին: Գ) Համապատասխան յանձնաժողովի ընդունած բանաձեւը չի կարող բաւարար ևս մարտել, բայց եթէ կազմած ու կեանքի կոչւած է, կարող է դրական գործած լինել մեր կուսակցութեան ամբողջացման ճանապարհի վրա և որպէսզի կուսակցութիւնը քարզացման այս փորձնական միջոցից չզրկուի, ելնելով մեր կուսակցութեան ամբողջացման շա-

հերից՝ մենք միանում ենք այդ բանաձեւին և ամէն կողմից կը նպաստենք նրա իրականացման: Խօսքը Փարիզի կազմակերպութեան ընդունած վերին բանաձեւի մասին է:

Նոյն իմաստով բանաձեւ և հանել և սոց. դեմ. երիտասարդութեան Փարիզի կազմակերպութիւնը, որ նոյնպէս հաստատում է թեր կուսակցութեան մէջ ընդունած ուսմկամար աստիճանաթիւների հիմնական խախտումն» ու «Վրաստանում աշխատող ընկերներին անձեռն տեղեկութիւնների հասցելիք» և դատապարտելով տիրող «ոչ-ուսմկամար և ոչ-որինակ կազմերը» պահանջում է «լուծել զիկատատուրան» և կուսակցութեան մէջ վերափոխել ուսմկամար սկզբունքների տիրապետութիւնը:

Բազմաձեւ հաւատացնում է, որ այս պահանջներից ոչ մէկն էլ իրականացած չէ. Վրաստանում շարունակում է գոյութիւն ունենալ իրար հակադարձ երկու կենտրոնական կոմիտէ: արտասահմանի կազմակերպութիւնը շարունակում է մնալ պարտակուած ու ներքին պայքարի մէջ — մի կողմը Ժորժիանի զիկատատուրան, միւս կողմը՝ Մերեյի ընդդիմադիր խմբակը և մէջ տեղը տատանող ճակճը:

# ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒՄ

Թէ ինչ պայմաններ են տիրում քեմալական բռնապետութեան տակ մնացած Հայաստանում, ցոյց են տալիս Արեւելեան Նահանգներից, յատկապէս Վասպուրականի շրջանից հանող լուրերը:

Վասպուրականի Հայքառակ շրջանների գրեթէ բոլոր գիւղերը աւերակ և անբնակ դրութեան մէջ են: Ազգաբնակչութիւնը շատ նօսր է և, մանաւանդ, հարաւանի մասերում բազկացած է քրդերից: Թիւրք չկայ, չհաշւած պաշտօնեաները, նրանց ընտանիքները և ուստիական զինւորները: Միայն ներքին Հայոց-Ձորում մնացել են քիչ բանակիցներ թուրքեր, որոնք 1918-19 թթ.ականներին գաղթել են Կովկասից և ապրում են քրդերի հետ խան: Խարականց, Կղրտաչ, Անգղ և այլ գիւղերում:

Ոչ միայն բնակչութիւն ունեցող գիւղերը քիչ են, այլ և գիւղերի աննրն էլ փոքրաթիւ են: Մոյրորաքար գիւղերը բաղկացած են 1-2-3-10 տնից: 20-30 տուն ունեցող գիւղերը շատ քիչ են: Օրինակ, Շտտախ կամ Թաղ գիւղաբաղաքը, որ երբեմն ունէր 200 տուն, այժմ ունի 17 տուն քիւրդ և 3 տուն թուրք: 100ից աւելի խանութ ունեցող այդ վայրը ներկայիս ունի 3 խանութ միայն: Մոկայ քաղաքը, որ առավ բաղկացած էր չորս թաղից 110 տնով, այժմ ունի 9 տուն: Թաղերը աւերակ վիճակի մէջ են: Մոխի այս կիսաբրոնտում կայ միայն 3 խանութ, որից մէկը մասնաւոր մանրավաճառ, մէկը ճոթեղէն, մէկն էլ պետական խանութ, ուր ապրանքները միշտ խիտ տուց են և ժողովրդին անմատչելի:

Թէ որքան նօսր է բնակչութիւնը, երևում է այն փաստից, որ, օրինակ, ամբողջ Մոկայ գաւառը 2000 մարդուց պակաս բնակչութիւն ունի: Վերջին մարդահամարի ժամանակ կառավարութիւնը չափազանցւած թեւր է ցոյց տւել: Նոյն մարդահամարի ժամանակ, կառավարութիւնը քրդաբնակ բոլոր վայրերում քրդերի թիւը պակասացրել է և քրդերին թուրք է արձանագրել:

Արհեստատարներ շատ տեղեր համարեա գոյութիւն չունեն: Շտտախի յայտնի շաշն ու սարան, որ պատրաստուում էին Ձուռ աճի մազերից, անհետացած են: Այդ արհեստը շատախցի Հայերի մասնապիտուութիւնն էր. այժմ կորած պէտք է համարել:

Երկիրը ուղղակի ամայի վիճակի մէջ է: Անհաշիւ քանակութեամբ երեւցել են վայրի խոզեր, որոնց նախնիները մեծ վնասներ են հասցնում գիւղացիութեան: Գիւղացիներն ամբողջ դիչերներ անջուն հակում են իրենց արտերն ու պարտէզները, որ իտեղը չմտնան: դատարկ թիթիկներ են ծնծում և այդպիսով փախցնում խոզերին:

Առաջ խոզերը հազաւազիւս էին Վասպուրականում: Խոզերի այդքան բազմանալն էլ ցոյց է տալիս, որ երկիրը շատ է ամայացել և ազգաբնակչութիւնը շատ է պակասել:

Հայկական գիւղերն, ինչպէս ասինք, մեծ մասամբ ամայի և քանդուած վիճակի մէջ են: Վանքերն ու եկեղեցիներն էլ աւերած կամ կիսաւործան են: Այսպէս, Սպիտակ և Չարահան վանքերը, Արասոսի փէշեթին, քանդուած-աւերած են և պատերի տեղերն ու բեկորները դեռ երևում են: Խողը դարի է ցանաւ: Նարեկ մուտ է կիտաւք: Նարեկացու գերեզմանի վրայի մարմոռէ քարը հանուած և մի քերու կնոջ գերեզմանի վրա է դրւած ծովափին: Մի շարք եկեղեցիներ գործ են ածուտ ինրև պահեստ կամ գոմ անասունների համար:

Այս երևոյթը ընդհանուր է թէ Վանի լճի հարաւային և թէ հիւսիսային շրջանների համար:

Ապրուստի պայմանների մասին որոշ զարգափար են տալիս հեռեկան թեւրք. ցորենի չափը (sow 60 կիլո) 10-14 մէջիւղ է (24 մէջիւղ=1 հնչուն սովու), սիլաբոր 4-5 մէջիւղ, եղը՝ 15-20 մէջիւղ, կոլը՝ 10-15 մէջիւղ. հասարակ ճոթի արջիւղը՝ 40 դրուէ: Այդ քիչ է ճարուտ և անօրինակ թանաղ է: Մի բն. աղը Վանում արժէ 3 հնչուն սովի: Գիւլ է ճարուտ և նաւթը: մէկ փութը (16 կիլո)՝ 15 թուրք իրա (1 թուրք իրան = 2½ մէջիւղի): Ամէն տուն 10 կիլո նաւթ գործածելու իրաւունք ունի: Որ տանը որ նաւթ կամ ուրիշ արգելւած ապրանքներ գտնեն, կը գրաւեն, գնի կրկին արժէքով սուղանք կաւուն և տէրն էլ կը քանտարիւի: Շաքարն էլ դժարութեամբ է ճարուտ, արամը՝ 12 դրուէ: Մէկ ծրար ծխախոտը արժէ մէկ թուրք լիւրա. մէկ տուփ լուցկին՝ 3 դրուէ: Հասարակ ամերքան չիթը՝ արշինը

Յ մէջիդ, կամ զիչ աւելի: Ուրիշ կտորեղէն չի ճարուում:

Նոյնքան ծանր են և պետական տուրքերը: Կողի ճամբար առնուում է կէս թուղթ լիբա, եղի ճամբար՝ մէկ թուղթ լիբա: 2 ոչխար՝ մէկ թուղթ լիբա: Մարդու գլխահարկ՝ 8 թուղթ լիբա: Մէկ չափ սերմանտեղ հողից առնուում են 4 թուղթ լիբա: Թանոց, այգի, ծառաստան՝ իւրաքանչիւրից՝ 15 մէջիդ:

Հայրի հողերը սկզբներում իրաւունք կար վաճառելու, այժմ արգելւած է և տրուում են դատարան: Մէկ քունտ տեղի ճամբար առնուում են 4 մէջիդ: Հայրական տները վարձու են տալիս իւրաքանչիւրը 3 մէջիդով: Մի ընտանիք, որ բաղկացած է 7 շնչից և ունի 1 չափ վարելահող, 2 ոչխար, 1 կով, գլխահարկով միասին, տարեկան պետական տուրք է վճարում 45 թուղթ լիբա: Կարելի է երեւակայել թէ ինչ թշուառ գոյութիւն է քաղաք տալիս զիւրաքանչիւրից և որքան պոռ է զբաւական իշխանութիւնից:

Աղքատութիւնը համատարած է և անկարագրելի: Գիւղացու կերած հացը բարձր է, կրելից կամ տարեկանից: Ցորեն հաց զործածողները հազարկուտ բացատութիւններ են: Վանի և Արուսեմէտի շրջանի այդ գինիքը փաշած են և պտուղը հազարկուտ է: Մինչև Մոսկից գիւղացիները կողովներով խաղաղ, կիսահաստան ճամբար ինձոր են բերում Հայոց Զոր և փոխում հացահատիկների հետ:

Բարձրացէք դէպի թիմար, Բերլի, Արճէշ, անցէք Մանսկերտի, Մուշի, Թուրի կողմերը, մտէք Կարին — ընդհանուր պատկերը նոյնն է: Մշի գաւառը գայլերի և խոզերի բնակավայր է: Առաջւաղ շքեղ ու կուշտ Կարինը գաւառական կիսաւեր թաղաքի տպատարութիւն է թողնում: Առևտուրը մնում է: Կովկասի սահմանը գրեթէ փակ է: Ժողովուրդը անասնաճան դժգոհ է իր վիճակից: Ոչինչ չի շինուում և եղածը աւելի ու աւելի քանգուում ու փչանում է:

### Ն Ա Մ Ա Կ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ց

....., 26 Սեպտ., 1932.

Ի՞նչ գրեմ, Երևանից սկսեմ: Ամէն ինչ մտայլ է և թախմտո: Երկրի մէկ ծայրից մինչև միւրը ամէն ինչ անտանելի է: Բանուոր, գիւղացու, գիտնական, մասնագէտի ճամբար լաւ օր գոյութիւն չունի: Անտանելի է ապրել սոսկ անասնական կենսեղով, բայց ճար չկայ: Իրարը, արտասահմանում ամենեղ ուրախանում է երկրի շինարարութեամբ՝ ճամբարելով այդ օգտակար Հայ Ժողովրդի ապառաջի ճամբար: Այդ, ի հարկէ, շատ լաւ է: Բայց պէտք է դիտնալ, թէ ի՞նչ շինարարութիւն է այդ և ի՞նչ միջոցներով է կատարուում: Ամէն մի քար մի մարդու արեան գին է: Նայեցէ՛ք, ի՞նչ հայ է մնացել Ժողովրդի վրա: Գիւղացիութեան քրտինքի կաթիլներից ու կալիի կտորներից է, որ բու՛լեկիները կատարածուում են իրենց ճամբար «հեղաճառակ»: Սակայն, ի՞նչ է ստացուում այդ «հեղաճառակ»:

Սոսեմ միայն Հայաստանի մասին: Ըստ ծրագրի կատարելու էր նոր Երևան: Տարտ տարի է, որ քանդուում ու շինում են: Այսօր Հարիւրաւոր շէնքեր մնացել են կէսկատար գորութեան մէջ: Նոր Երևան չկայ, իսկ հինն էլ քանդւած է:

Ղեկրի մայր ստուն մնացել է անաւարտ: Ե՛րբ պիտի լրացի, ոչինչ չայտնի չէ: Մարտից սկսած Երևանում թրամվայ են շինում. կայարանը պիտի միացի Արշակունի փողոցի գլխի հետ: Պէտք է պարտաստ լինի հոկտեմբերին: Այդ էլ չի յաջողուում: Բանուոր չի ճարուում. եղածներն էլ գործի վրայից թողնում-փայնում են:

Կօօպերատիւներում ապրանք չի ճարուում: Առևտրի շրջանառութիւնը կանգ է առնւ, և դրամը կորցրել է իր արժէքը: Կոլտնտեսի իրաւունք արեւց իրենց միջերը չուկացու վաճառելու, որպէսզի քաղաքներն ուտլիք ունենան, բայց այդ փորձն էլ յաջողութիւն չունեցաւ: Ոչ կոլտնտեսի են միջերը չուկայ հանում, ոչ էլ ունեւոր գիւղացիները: Եւ ինչ՞ու պիտի հանեն, կրք դրամ արժէք չունի և դիւրացու ճամբար պէտք եղած ապրանքը չի ճարուում:

Դրամ չլինելու պատճառով բանուորներին և ծառայողներին ուժեղները չեն տալիս: Ուսուցիչները ահա 3 ամիս է ոչ մի կուպէկ չեն ստացել: Ամենք էլ ապրում են անտեսական չտեսնած վատ պայմաններում:

Բանուորութիւնն սկսել է տեղատեղ գործադուներ կազմակերպել: Այս վերջերս Թուրքաստանում, Իվանով-

սիկ\*) չի գործարանում մեծ գործադու է առաջացել սովի հետևանքով, որի մասին խօսում է Լենինականի բանուորութեան շրջանում:

Հացի դուրսբիւր մտնելից խալտառակն է մեզ մտա՛մի երբ ճախուում է 7-8 փութ ցորենով, այն էլ անտող չկայ: Երեւի, Արտաշէ, Նոր Բայազէտի գաւառները երաշտից միանգամայն չորացել են: Մուրացիկանները վխտում են բոլոր դռներն ու փողոցները:

Շատ վատ է և բամբակի դուրսբիւրը: Մի կողմից ցանողները չեն աշխատում, միւս կողմից ծծումը չկարողացան հասցնել հիւանդութիւնների դէմ կուսելու ճամբար, և շատ արտեր փչացան չորից:

Այդիները համայնացնելու հետևանքով անցեալ աշնան մնացին ստացի թաղելու: Ցորտը տարաւ, և այսօր, խաղողի լաւ ժամանակ, Երևանում ուտելու խաղող չի ճարուում:

Այսպէս և մնացած միջերները: Պայմանները ստիպեցին մարդկանց գոգութիւններ, հրկիզումներ, առաջակուրսիներ և իւրաքանչիւր անելու: Իրա առաջն անելու ճամբար Մոսկուսի մի խիտ օրէնք հրատարակեց, որով զնդակահարութեան են երթարկում պետութեան և կոլտնտեսի դուրս փաշանողները: Այդ օրէնքով զնդակահարութիւն է սպանում այն մարդուն, որ արտից մի խուճճ ցորեն կը դողանայ: Այս ճեղք կամեմում են անաւելի դիւրացիներին, որոնք չեն ուզում հրամարել սեփականութեան իրաւունքից:

Վերջերս նորից շատացել են Գէպէտի պրոլոկա-ցիաները: Չեկիտները օգուելով Ժողովրդի դժգոհութեանից կեղծ հակաբոլշևիկ կազմակերպութիւններ են ստեղծում, ապա ձերբակալութիւններ են կատարում: Այսպէս, Ապրանի շրջանում ձերբակալեց 30-40 հոգի Դաշնակցութեան պատկանելու անբաստանութեամբ:

Լեւոնրում փախտասականութիւնը չի վերջանում: Դժգոհները դուրս առած քաղաւն են անմատչելի անգրք: Հազարաւէյ չեն կը րեղահարումներ Գէպէտի գործակալներին հետ, որոնք «վաղաժամ» մահւան յայտարարութիւնը յանձն երեւում է «Պարհուր» Հայաստան» թերթում: Մահրամասնութիւնները կապուին են պաււում Ժողովրդից, բայց լուրը բերնէ բերան շրջան է առնում ամէն կողմ:

\*) Խոսքը Իվանով-Վոզնեսենսկի բանուորական գործադուին է վերաբերում, որի մասին գրեց և կերպակամ մամուլում:

# Օ. Ս. Մ Ի Ն Ո Ր

Օտիւ Սլոյմոնովիչ Մինոր, մէկը ուս սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան ակնաւոր զէմբերից, որի մահան լուրը տակէք անցեալ անգամ, ծնել էր 1861թ. նոյեմբ. 13ին Մոսկուայ հրէա խախտի ընտանիքում և միջնակարգ ու բարձրագոյն ուսումը ստացել գիմնադիւլում, ապա Մոսկուայի Համալսարանում: Այստեղ, Համալսարանում էլ, սկսեց նրա յեղափոխական գործունէութիւնը. նա մասնակցում էր զադուսի խմբակները աշխատանքներին, 1884թ., ուսանողական շարժումները ժամանակ, ենթարկեց առաջին ձերբակալութեան և աքսորեց Տուլա:

Տուլայից Մինորին յաջողեց մտնել Նարոտուսի իրաւագիտական ձեռնարանը, ուր նա յարեց «Նարոտուսյան Վոյնա» յեղափոխական կազմակերպութեան և նորից ձերբակալելով՝ 1886թ. վարչական կարգով աքսորեց Նակուտով, 10 տարով: Աքսորավայրում, 1888թ. մարտ 22ին, տեղի ունեցաւ յայտնի «Նակուտուսի ողբերգութիւնը» — ընդհարում աքսորականների և զինուորների ու ոստիկանների միջև, երբ սպանեցին մի քանի յեղափոխականներ, իսկ Մինորը վիրաւորեց վիր: Այդ զէպրին մասնակցողները դատուեցին ռազմական դատարանով և 23 հոգի, ի թիւս որոնց և Մինորը, ստացան մահան վճիռ. երեքը դնդակահարուեցին, իսկ Մինորի և միւսների մահավճիռը փոխուեց մշտական տաժանակիր աշխատանքի: Մինորի կինն էլ դատապարտեց և տարւայ տաժանակիր աշխատանքի:

Տաժանակիր աշխատանքները Մինորը սկսեց Վիլիսիյից, որտեղ փոխադրելու ժամանակ ժօր ձեռքին առաջածհ, եղաւ նրա անդրանիկ աղիւնէր: Երեք տարի յետոյ նրան փոխադրեցին Ակատուսի տաժանակիրների բանտը: 1897թ. ներման հրովարտակով աքսորեց Ձիտա, իսկ 1900թ. իրաւունք ստացաւ ապրելու Վիլնայում, ուր սակայն, երկար շննաց և բանուրների մէջ կատարած աշխատանքի համար 2 տարով աքսորեց Սլուցկ: Ապա տեղափոխուեց Բիլինե, ուր հիմը դրեց սոց-յեղափոխական առաջին խմբակի:

1902թ., Օդեսայում, Մինորը տեսնեց Սոց-Յեղափոխական կուսակցութեան հիմնադիրներից Մ. Գոցի և Իրեչկովսկայա «տատիկի» հետ, որ վանական կոյտի հազուաուսով շրջում էր Ռուսաստանում և սոց-յեղափոխական խմբեր կազմում: Մինորը անվերապահօրէն յարեց նոր ստեղծող կուսակցութեան և դարձաւ նրա ամենաեռանդուն գործիչներից մէկը: Բիլինեում նա Հրատարակեց մի համար գաղտնի թերթ, բայց շուտով հարկադարեց անցնել արտասահման, ուր, 1902-5թ., Գոցի, Չերնովի, Շիշկօի, Վոլոյովսկիի, Լազարեի և

ուրիշների հետ վարեց Սոց-Յեղափոխական կուսակցութեան գործերը: Մինորի բնակարանը ժրնեում յեղափոխականների ժամադրավայր էր:

Յեղափոխութեան սկզբին, 1905թ., Մինորը միւս ընկերների հետ շտապեց Ռուսաստան և մինչև 1909թ. աշխատեց կենտրոնում, Կովկասում, Ֆինլանդիայում, Վոլգայի շրջաններում: Կովկասում գործած ժամանակ մօտիկ յարաբերութիւնների մէջ էր գաշնակցականների հետ և առհասարակ, դաշնակցական ղեկավարներից շատերի հետ կապած էր ընկերական կապերով:

1909թ. յուն. 2ին Մինորը մի խումբ ընկերների հետ ձերբակալեց Ազէֆի մատնութեամբ, 1910թ. գինւորական դատարանից ստացաւ 8 տարւայ տաժանակիր աշխատանքի վճիռ և միայն 1917թ. փետր. 19ին ազատ արձակեց Միերի բանտից: Փետրարեան յեղափոխութիւնը նրա առջև բաց արաւ գործունէութեան նոր ապարէզ: 1917թ. մայիսին նա ընտրուեց Սոց-Յեղափոխական կուսակցութեան Կենտր. Կոմիտէի անդամ և նշանակեց Մոսկուայի «Տրուգ» թերթի խմբագիր: Ապա՝ ընտրուեց Մոսկուայի քաղաքային խորհրդի նախագահ, Մահամադիր Ժողովի անդամ... Իսկ 1918 թ.ին նա նորից բանտարկեց, այս անգամ արդէն կոմունիստների ձեռքով և 10,000 րուբլի երաշխաւորութեամբ ազատեց սոսոյք մահից:

Այնուհետև սկսեց Մինորի կեանքի ամենալուրդունալից շրջանը — պաշար Հակարդունիկեան ճակատում, Ուֆայի խորհրդակցութիւն, քաղաքացիական պատերազմի փոթորիկայոյց դուռաքներ, որի ժամանակ կորցրեց մեծ որդուն, տարաբաւութիւն. չեխուովակ իջեւնները հետ անցաւ Վլադիվատոկ, այստեղից՝ Փարիզ, ուր և մնաց մինչև մահ՝ երբեք չկորցնելով հոգեկան արիութիւնը, միշտ մնալով հասարակական և յեղափոխական գործունէութեան առաջին շարքերում: Արհեստակցական միութիւններ տարագիր աշխատաւորների մէջ, ֆաբրիկան Կարմիր Քաղաքայիններին օգնելու համար, Հրատարակութիւններ, կազմակերպական աշխատանք — Օ. Ս. Մինորը կարողանում էր հասնել ամէն տեղ: Եւ ուր երևում էր, հետը բերում էր ընկերական տաք մթնոլորտ և զարմանալի շաւտադէպի արդարութեան և ճշմարտութեան յաղթանակը: Եւ մինչև մահ էլ մի նշանախեց անգամ չզիջեց իր դասանանքներից, Ռուսաստանի ազատութեան և սոցիալիզմի ու յեղափոխութեան յաղթանակի յոյսից: Այդ յոյսով էլ ի՞նչ գերեզման այս տարւայ սեպտ. 24ին, աւա՛ղ, առանց տեսնելու երազած ազատութեան արևը: Ս. Վր.

## Ք Ր Օ Շ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Սիւրիան և Մեմֆ (Խմբագրական) . . . . .	225
Հայաստանի տնտեսական յնդիքները (Ձանդի) . . . . .	227
Լատինական այբուբենը (Ս. Վր.) . . . . .	230
Սիւրիայի հոգատար իշխանութեան 1932- Քւի . . . . .	232
Ուլիսիական (Ք. Սալեման) . . . . .	234
Իւգոսլաւիայում (Ա. Աստ.) . . . . .	234
Թուրքիայ շուրջ . . . . .	237

Կարմիր գծից ներս . . . . .	239
«Թէ ինչպէս Ազրբէջանը բաժան-բաժան կը դառնայ» . . . . .	243
Մեր հարեւանների մօտ . . . . .	244
Արեւելեան նահանգներում . . . . .	246
Նամակ Հայաստանից . . . . .	247
Օ. Ս. Մինոր . . . . .	248

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցե՛

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանն.

Rédaction « DROSCHAK »  
71, ave. Kléber. PARIS (16<sup>e</sup>)

Éditeurs: Delonvalle & Hambartounian

Imp. de Navarra, 5, rue des Gobelines, PARIS (16<sup>e</sup>)